

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
<<ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի
2023-2028 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



*Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է:
ՄԻԴՆԵՅ Զ. ՀԱՐԻՍ*

ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ՆԱՐԻՆԵ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Զարգացման ծրագրի իրավական հիմքերը	6
Դպրոցի առաքելությունը	8
Նորգյուղի միջնակարգ դպրոցի ընդհանուր նկարագիրը	
Հաստատության գործունեությունը.....	11
1. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ եվ թույլ կողմերը	
1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը /մասնաշենքի դիրքը , տեղադրությունը, արտաքին տեսքը, շենքային պայմանները/.....	13
1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը.....	25
1.3 Հաստատության կառավարման մարմնի եվ տնօրենի համագործակցության վերլուծությունը	61
1.4 «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ	77
1.5 «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը	104
1.6 «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում օգտագործվող SՀS նկրթական այլ տեխնոլոգիաների եվ նորարարությունների ներկայացումը	120
1.7 «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն	125
1.8 Բազմակարծիք, ներառական եվ մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.....	139
1.9 Աշխատակազմի արժեքորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն	149
1.10 Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների եվ պլանավորման խնդիրների տեսանկյունից	157
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները	168
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները մարդկային ռեսուրսները եվ նյութատեխնիկական պարագաները	199
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները	202
Եզրակացություն	214
Հավելված 2	216

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հաշվի առնելով այն փաստը, որ 11.09.2023 թվականին ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին սույն զարգացման ծրագիրը մեկ անգամ արդեն ներկայացվել է փորձաքննության, նպատակահարմար եմ գտնում բոլոր բաղադրիչներից միջին դրական միավոր գնահատված կետերը փոփոխության չենթարկել՝ բացառությամբ 6-րդ՝ «<Ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները>> բաժնի, որը կառուցվածքային առումով ամբողջությամբ վերաձևակերպվել է այլ ձևաչափով:

Կից ներկայացնում եմ նախորդ փորձաքննության արդյունքների գնահատման ձևաթուղթը:

ստան ընթակա բաղադրիչը	Բնութագրիչները	Միավոր	Ամփոփ միավոր	Չի համապատասխանում
ճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը:	1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը.	2	1. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը:	2
	1.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը.	2	2. Նպատակների և խնդիրների սահմանումը.	2
	1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը.	2	3. Ուսումնական հաստատության գործունեությունը.	2
	1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ.	2	4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործիքություններն ու միջոցառումները.	2
	1.5 Մանկավարժական համակարգի մասնագիտական որակների ներկայացումը.	2	5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատվությունը.	2
	1.6 Օգտագործվող SCS և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.	2	6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները.	0
	1.7 Չափորոշային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը.	2	7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման դիմելը.	2
	1.8 Բազմակարգիչը, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն	2	8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.	2
	1.9 Աշխատակազմի արժեքորոնման, խթանուման և ինքնակրթության ինստիտուցիաների վերլուծությունը:	2	9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները	2
սկզբի և խնդիրների մը.	1.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պահանջարկի խնդիրների տեսանկյունից:	2	Զարգացման ծրագրի արդյունքների գնահատման չափանիշներ բաժինը կառուցվածքային առումով կրկնում է նախորդիվ արտատպված ծրագրերի համապատասխան բաժինը՝ ձևավորվածների փոփոխություններով: Առաջարկում եմ ծրագիրը ենթարկել կրկնակի փորձաքննության՝ համեմատելով նաև Մասնակցային դպրոցի մոտ առկա անցողիկ ծրագրերի հետ: Նորգյուղի միջնակարգ դպրոց 	
	2.1 Նպատակների սահմանում, դրանց համապատասխանությունը առկա իրավիճակին և ինստիտուցիաներին	2		
	2.2 Խնդիրների սահմանումը, դրանց համապատասխանությունը նպատակներին:	2		
ական հաստատության ությունը	3.1 Կրթական կարիքների նկարագրությունը.	2		
	3.2 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու ինստիտուցիաներին.	2		

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունն ամենահզոր գեներ է աշխարհը փոխելու, այն ավելի

լավը դարձնելու համար:

Նելսոն Մանդելա

Գիտելիքն ու ստեղծարարությունը դարձել են մարդկային կապիտալի զարգացման, տնտեսական և մշակութային կայուն առաջընթացի գրավական, –նշված է Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի հիմքում (Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, ընդունված՝ 16.11.2022թ. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171800>, էջ 2) :

Այսօր՝ առավել, քան երբևէ, կրթությունը դիտվում է իբրև հիմնական միջոց՝ դիմակայելու աղքատության արմատավորմանը, սոցիալական բևեռացման խորացմանը, ժողովրդավարական զարգացումների վտանգմանը, աղետներին և այլ ռիսկերին, այդ թվում՝ համաշխարհայնացման հետևանքով ի հայտ եկող նոր մարտահրավերներին: Վկան՝ 2020 թվականին բռնկված նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակի պատճառով աշխարհում ավելի քան մեկուկես միլիարդ սովորողների կրթության շարունակականության հնարավորությունից զրկվելը, մարտահրավերներով պայմանավորված՝ այլընտրանքային ուսուցման ձևերի ներդրումը: Իր հերթին՝ 44-օրյա պատերազմի ընթացքը և հետևանքներն օրակարգ են բերել ոչ միայն կրթական միջավայրի, այլ նաև բովանդակությանն առնչվող շեշտադրումների փոփոխության անհրաժեշտություն (նույն տեղում):

ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի 2023–2028 թթ.. զարգացման ներկա ծրագիրը (այսուհետև զարգացման ծրագիր) մշակվել է հանրակրթության վերաբերյալ ՀՀ հիմնարար փաստաթղթերի, **ուլորտում պետական քաղաքականության նպատակների, սկզբունքների**, «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի կանոնադրության, **հաստատության գործունեության խոր և բազմակողմանի վերլուծության և գնահատման** հենքի վրա, հաշվի առնելով՝

դ) կրթական գործընթացի մասնակիցների՝ սովորողի, սովորողի ծնողի, ուսուցիչների, մանկավարժական, վարչական այլ աշխատողների,

ե) խորհրդակցական մարմինների՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների, առարկայական մեթոդական միավորումների աշխատանքի փորձն ու առաջարկությունները,

զ) խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների,

է) կրթության ոլորտի այլ շահառուների կարծիքն ու հիմնավորումը կրթության զարգացման հեռանկարներն ու լրացուցիչ կարիքները բացահայտելու նպատակով:

Զարգացման ծրագիրը մշակելիս ամփոփվել, ի մի է բերվել, համակարգվել է՝

- ❖ ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը.
- ❖ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վերջին հինգ տարիների դպրոցի շենքային պայմանների, ենթակառուցվածքների բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ կատարված աշխատանքը.
- ❖ հաստատության կրթության որակի ռիսկերի գնահատման ցուցանիշները.
- ❖ կարիքի բացահայտման ուղղությամբ իրականացված, շարունակական մշտադիտարկման արդյունքները, առաջադրված լուծումներն ու քայլերը:

Զարգացման սույն ծրագիրը, մեր կարծիքով, նախանշում է ուսումնառության համընդհանուր ձևավորման, Հայաստանի Հանրապետության արդի զարգացմանը

- ❖ համահունչ,
- ❖ մատչելի,
- ❖ որակյալ կրթություն ապահովող,
- ❖ մարդակենտրոն,
- ❖ սովորողակենտրոն դպրոցի մի տեսլական, մոդել, որի կենտրոնում **մարդն է՝ սովորողը**, իսկ նրա կարողությունների ընդլայնումը՝ մարդկային կապիտալը զարգացնելու և իրացնելու միջոց, կրթության առանցքում ունենալով կրթվելու և ստեղծագործելու համար ապահով ու անվտանգ միջավայրի ձևավորում, որտեղ ամեն առանձին բաղադրիչ կապված է մյուսի հետ՝ մարդու կարողությունների լիարժեք և ստեղծարար զարգացման տրամաբանության մեջ (**նույն տեղում**):

Դպրոցի զարգացման ծրագիրն ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որը հիմք է հանդիսանում պլանավորելու դպրոցի գործունեության հինգ տարիների տեսլականը: Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանները: Ուսումնական հաստատության յուրաքանչյուր ոլորտի մասին ավելի մանրամասն պատկերացում կազմելու համար կից ներկայացվել է նկարներ և հավելվածներ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2023-2028 թվականների սույն զարգացման ծրագիրը կազմելիս հիմք են հանդիսացել ՀՀ կրթության, հանրակրթության վերաբերյալ հիմնարար փաստաթղթերը և իրավական հիմքերը՝

- ՀՀ Սահմանադրությունը 06.12.2015թ.
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 22.09.2022թ. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրաման
<https://escs.am/files/files/2022-10-12/5295ca52b570cfd150b35c6bbf4671c.pdf>
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 18.04.2023թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 399-Ա հրաման <https://escs.am/files/files/2023-04-26/9ff191eceab2fd0dd09f14fdbd406b88.pdf>
- «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 16.03.2023 թվականի N 351-Լ որոշում
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175541>
- «Կրթության մասին» ՀՀ օրենք <http://www.irtek.am/views/act.aspx?tid=165241>
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150065>

- <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենք
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=14986>
- <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք <http://www.irtek.am/views/act.aspx?tid=172893>
- <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք 21.03.2018թ.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139>
- ՀՀ կառավարության 24.08.2006թ. N 1262-Ն որոշում
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=35955>
- <<Հանրակրթության պետական չափորոշիչ>> 04.02.2021թ.
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>
- <<Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշումներ>>
<https://escs.am/am/category/decisions?f=decisions-preliminary-and-middle-prof-edu,decisions-general-edu>
- ՀՀ կառավարության 22.09.2022թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին>> N 1481-Ն որոշում
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=168828>
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 07.12.2022թ. <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> N79-Ն հրաման <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171396>
- <<Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման մասին>> 30.12.2022թ. N 88-Ն կարգ
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172767>
- ՀՀ կառավարության 25.07.2002թ. N 1392-Ն որոշում
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=61002>
- ՀՀ կառավարության 23.07.2015թ. <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին>> N 797-Ն որոշում
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=81404>

- ՀՀ առողջապահության նախարարի 28.05.2017թ. N 12-Ն հրաման
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989>
- <<Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա>>
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503>
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 26.08.2022թ. N 21-Լ հրաման
<https://escs.am/files/files/2022-08-26/d4203634a818aec44d39f9fda687edd4.pdf>
- 11.09.2023թ. . № 256-Ա ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատած՝ <<Նորգյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կանոնադրություն:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելություն, ասել է թե՛ վսեմ, սրբազնագույն գործ, դպրոցը՝ մտքի կաճառ, ուսուցիչը՝ առաքյալ:

Դպրոցի առաքելությունը սահմանելիս հարկ է սկսել հենց այս հիմնարար և սրբազան գաղափարից, այնպես, որ՝

- **ուսուցչի և սովորողների համար դպրոցը դառնա «Միբելի հիմնարկություն»**
- **հարազատ վարժատուներ բարձրացնել բարեկարգ ուսումնարանի բարեփայլության աստիճանի:**

Խ. Աբովյան

Հանրակրթության՝ դպրոցի առաքելությունը սահմանելը դպրոցի զարգացման ծրագրի առանցքն է, հիմքը. այս հենքի վրա է կառուցվում դպրոցի մոդելը, գործունեության նպատակը, սահմանվում խնդիրներն ու առաջնահերթությունները:

Իմ կարծիքով դպրոցի առաքելության հիմնարար սկզբունքները լավագույնս և ամբողջությամբ սահմանվել են ՀՀ Հանրակրթության Պետական Չափորոշչում. դրանք այն կարողունակություններն ու վերջնարդյունքներն են, որոնք սովորողը ձեռք կբերի միջնակարգ կրթության ավարտին:

Այդ կարողունակությունների շնորհիվ սովորողը՝

ա/ տիրապետում է հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում մայրենի լեզվով, այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք.

բ/ սովորում և աշխատում է կյանքի տարբեր իրավիճակներում, ճանաչում իմացածի և չիմացածի սահմանները,

գ/ ինքնակազմակերպման միջոցով կձգտի ինքնաճանաչման, կկառավարի սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները,

դ/ կնպաստի ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը,

ե/ կտիրապետի մեղիագրագիտության կանոններին ու հմտություններին, կպատկերացնի մեղիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում,

զ/ կճանաչի հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ,

է/ համարժեք կվերլուծի և կգնահատի մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները **(աղբյուրը՝ Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.):**

Աբովյանական **«սիրելի հիմնարկության»** առաքելության հիմնաքարը կրթության **«Ոսկե եռանկյունին է»՝ երեխա – ուսուցիչ – ծնող եռամիասնությունը, որտեղ** երեխան պաշտպանված է նյութական կամ այլ պատճառներով որակյալ կրթությունից զրկվելու վտանգից, որևէ խտրականությունից, **որտեղ** երեխան ունի որակյալ, ժամանակակից աշխարհի պահանջներին ու արդի չափանիշներին բավարարող կրթություն ստանալու իրավունք ու բարեկեցիկ կենսապայմաններ ստեղծելու համար բավարար հմտություններ ու անձնային հատկանիշներ զարգացնելու հնարավորություններ, **որտեղ** ծնողը պաշտպանված է՝ քաղաքական կամ որևէ այլ տեսակի պարտադրանքներից, **որտեղ** ծնողն ունի՝ կրթական հաստատության կառավարմանը մասնակցելու իրավունք և հնարավորություն, իրավունք՝ պետությունից ակնկալելու իր երեխայի

համար որակյալ կրթության և անձնային զարգացման համար առողջ միջավայրի ու հնարավորությունների ապահովում,

որտեղ ուսուցիչը պաշտպանված է վերադասի ճնշումներից ու թելադրանքից, քաղաքական, կրոնական և այլ կողմնակի ազդեցություններից,

որտեղ ուսուցիչն ունի սոցիալական երաշխիքներ և արժանապատիվ աշխատավարձ ստանալու իրավունք, դպրոցի կառավարմանն ուղղակիորեն մասնակցելու իրավունք:

Եվ, վերջապես, ուսումնական հաստատությունը պաշտպանված է քաղաքական կամ որևէ այլ տեսակի ճնշումներից, պաշտոնեական կամայականություններից, քաղաքական և կրոնական քարոզչությունից,

ուսումնական հաստատությունն ունի ինքնավարություն, սեփական կարգավիճակը և կառավարման ձևը որոշելու իրավունք, ստեղծագործական ազատություն՝ իր տեսակը, մանկավարժական ուղղվածությունը և մեթոդները որոշելու հարցում:

ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

ՀՀ Կոտայքի մարզի Նորգյուղ համայնքը, հավատարիմ իր անվանը, համեմատաբար նոր շեն է, տեղաբնիկները սերում են 1826–1828թթ.. ռուս-պարսկական պատերազմից հետո Պարսկահայքի Խոյի շրջանից գաղթած 7 ընտանիքներից: Հաստատվում են Հատիս գեղատեսիլ լեռան լանջերին, Ակունք գետակի ափին, Թիֆլիս-Երևան արքունի ճանապարհին գտնվող՝ Էլար գյուղից 2-3 կիլոմետր հեռավորության վրա, քարից հաց քամում, այգի ու բանջարանոց հիմնում, կառուցում ու շենացնում նոր շենը և այդպես էլ անվանակոչում՝ Նոր Գյուղ:

Դիվանական վավերագրերը գյուղում եկեղեցական ծխական առաջին ուսումնարանի գոյությունն արձանագրում են սկսած 1918 թվականից, երբ գյուղի բնակչության թիվն արդեն իսկ հասնում էր շուրջ 800 մարդու և նորաբաց հաստատությունը գործում էր 1 ուսուցչով և 48 աշակերտով (Մամվել Կարապետյան, Նորգյուղ և Մայակովսկի գյուղերի պատմական հուշարձանները, Երևան, 2014թ., էջ 2): Ուսումնարանի բացմանը մեծապես աջակցել է Նորգյուղ գյուղում, հարակից գյուղերում և Մայր Աթոռում մեծ հեղինակություն վայելող,

գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր Զաքար քահանա Տեր-Հարությունյանը, ում շիրիմն հանգչում է եկեղեցու բակում:

Խորհրդային շրջանում գյուղում գործել է տարրական, իսկ 1985 թվականից գործում է միջնակարգ դպրոց:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ	
Հաստատության անվանումը	ՀՀ Կոտայքի մարզի <<Նորգյուղի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ
Հաստատության հասցեն	ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նորգյուղ, 1-ին փողոց, 14/1
Էլեկտրոնային հասցեն	norgyugh@schools.am
Ինտերնետային կայքի հասցեն	https://norgyugh.schoolsite.am
Պետոեզիստրի վկայականի գրանցման համարը	42.210.01967
Վկայականի համարը	03Ա 057289
Ծածկագիրը	100012307
ՀՎՀՀ	03510243
Հիմնադրվել է	1985թ.
Կանոնադրությունը	Հաստատվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023թ. սեպտեմբերի 11-ի № 256-Ա որոշմամբ
Իրականացվող կրթական ծրագրերը	Տարրական ընդհանուր 1-ին աստիճան՝ <u>120</u> սահմանային տեղով Հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան՝ <u>150</u> սահմանային տեղով Միջնակարգ ընդհանուր 3-րդ աստիճան՝ <u>90</u> սահմանային տեղով
Աշխատանքային շաբաթ	Հնգօրյա
Աշխատանքային ռեժիմ	Միաժամ
Փաստացի հաճախող աշակերտների թիվը 11.09.2023թ.ի դրությամբ	251
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ	1 /միջին ծանրության/
<<ՍՕՍ մանկական գյուղեր>> կազմակերպությունից դպրոց հաճախող սաներ	8
Ազգային փոքրամասնություն հանդիսացող աշակերտների թիվը /եզդի համայնք/	3
Դպրոցի մակերեսը	1639,1
Մարզահրապարակի մակերեսը	0,89525
Նկուղը	170 քմ
Ջրամատակարարումը	Շուրջօրյա
Ջեռուցումը	Կենտրոնացված

Հանրակրթական ծրագրերի իրականացման լիցենզիաները


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 1-ին աստիճան
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0198

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լիով անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գտնվելու վայրը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ  Ա. Աշոտյան
(ստորագրությունը) (ամուր, ազգանունը)

Կ.Տ. « 02 հուլիսի 2010 թ.
Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 2-րդ աստիճան
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0192

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լիով անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գտնվելու վայրը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ  Ա. Աշոտյան
(ստորագրությունը) (ամուր, ազգանունը)

Կ.Տ. « 02 հուլիսի 2010 թ.
Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 3-րդ աստիճան
(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0162

Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լիով անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գտնվելու վայրը)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, Գ. ՆՈՐԳՅՈՒՂ
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան
(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ  Ա. Աշոտյան
(ստորագրությունը) (ամուր, ազգանունը)

Կ.Տ. « 02 հուլիսի 2010 թ.
Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ /ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԴԻՐՔԸ, ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՀՈՒՎԱԾ 22/1) :

1. «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի <<Ակունք>> խոշարացված համայնքի Նորգյուղ /Նոր Գյուղ/ գյուղում, Աբովյան-Նորգյուղ-Զառ-Սևաբերդ՝ Տ-6-38 ՀՀ ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 3-րդ կիլոմետրում, ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գյուղ Նորգյուղ, 1-ին փողոց, 14/1 հասցեում, գլխավոր ճանապարհի վրա:
2. Վերը նշված ավտոմոբիլային ճանապարհին սպասարկում է ավտոբուսային երկու երթուղի՝ թիվ 45-ը և թիվ 51-ը, իսկ ավտոբուսային կանգառը գտնվում է դպրոցական մասնաշենքի հարևանությամբ: Այս հանգամանքն էապես նպաստում է աշխատակիցների ժամանակին աշխատավայր ներկայանալուն և ուսհաստատության ուսումնադաստիարակչական գործընթացը բնավ չի խաթարվում:
3. Միակ մուտքը հարակից փողոցի կողմից է, ինչն առավել ապահով և անվտանգ է դարձնում սովորողների ելումուտը:
4. Դպրոցամերձ տարածքում գործում է մարզահրապարակ:
5. Դպրոցի մուտքի մոտ համապետության բարերարի հոգածությամբ տեղադրվել է 44 – օրյա պատերազմում հերոսաբար զոհված, դպրոցի նախկին սան՝ Հայկ Սերոբի Մարգարյանի հիշատակն հավերժացնող ցայտաղբյուր:
6. Դպրոցը շրջափակված է մետաղյա բարձր ցանկապատով, մուտքի մետաղյա դարպասով և մետաղյա դռնակով, ինչն ապահով և անվտանգ է դարձնում սովորողների անվտանգությունը :

7. Դպրոցամերձ տարածքը բարեկարգ է, մաքուր, գտնվում է տնօրենության, սովորողների և համայնքի մշտական ուշադրության կենտրոնում:
8. Դպրոցական մասնաշենք մտնող և հեռացող ջրագծերը, կոյուղագծերը ունեն շինարարական բոլոր նորմերին համապատասխան հորեր, էլեկտրահաղորդման մալուխները ստորգետնյա են, մեկուսացված:
9. Համայնքային կենտրոնացված կարգով իրականացվում է աղբահանություն, դրա շրջանակում ժամանակին կատարվում է նաև ուսհաստատության աղբի տեղափոխում:
10. Դպրոցում առկա է հեռուստահաղորդման, համացանցի և հեռախոսային կապի հասանելիություն:
11. Դպրոցամերձ հողամասի վերջնամասում առկա է էլեկտրական հոսանքի ենթակայան, ինչը սպասարկում է նաև համայնքին: Այն մեկուսացված է, գտնվում է համայնքի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղի ամենօրյա վերահսկողության ներքո:
12. Դպրոցական մասնաշենքի հարևանությամբ, երթևեկելի հատվածում տեղադրված է լուսաազդանշանային նախագգուշացնող թարթիչ և երկկողմանի բարձիկներ, ինչը նպատակաուղղված է երթևեկության արագության դանդաղեցմանը:

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատությունում ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման, հաստատության, հարակից տարածքում անվտանգության լիակատար պայմաններ ձևավորելու և վերահսկելու ուղղությամբ, իրենց իրավասությունների սահմաններում համագործակցային, արդյունավետ գործունեություն են իրականացնում հաիակրթության կառավարման բոլոր մարմինները՝ ՀՀ Կառավարությունը, կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, Պետական կառավարման լիազորված և տեղական ինքնակառավարման	Ուսումնական հաստատության տեղական նշանակության ճանապարհի վրա գտնվելը պետական լիազորված մարմնի (ՀՀ Կոտայքի մարզպետարան), Ակունք խոշորացված համայնքի, Նորգյուղի գյուղապետարանի, Ոստիկանության Կոտայքի բաժնի, Ճանապարհային դեպարտամենտի և այլ պատկան մարմինների հետ ենթադրում է դպրոցի տնօրենության գրեթե ամենօրյա համատեղ աշխատանք ավտանգության ապահովման նպատակով:

	մարմինները, դպրոցի տնօրենությունը:	
2	Ավտոբուսային երկու և մեկ շրջանցող երթուղու, ավտոբուսային կանգառի առկայությունը, ուսհաստատության աշխատակիցների աշխատանքի հասանելիությունը պայմաններ են ստեղծում ուսումնադաստիարակչական աշխատանքի անխաթար իրականացման համար:	Էլեկտրամատակարարման պարբերաբար, ոչ պլանավորված անջատումները խոչընդոտում են էլեկտրոնային գործավարության, փաստաթղթավարության լիարժեք և ժամանակին իրականացմանը, ինչպես նաև՝ ուսհաստատության ուսումնադաստիարակչական ողջ գործընթացին: Այս մասին տնօրենությունը բազմիցս ահազանգել է պատկան մարմիններին:
3	Դպրոցական մասնաշենքին հարող փողոցները հիմնականում ասֆալտապատ են:	Համացանցի մեկ միասնական կենտրոնից սփռվելով պայմանավորված պարբերաբար տեղի է ունենում համացանցի խափանում: Խնդրի մասին տեղյակ է պահվել պատկան մարմիններին:
4	Դպրոցական մասնաշենք մտնող և հեռացող ջրագծերի, կոյուղագծերի, էլեկտրահաղորդման գծերի շինարարական նորմերին հիմնականում համապատասխանությունը:	Դպրոցի դասասենյակները երկար տարիներ ջեռուցվել են գազի վառարաններով, միջանցքները, մարզադահլիճը և մնացած կաբինետներն ընդհանրապես չեն ջեռուցվել, ինչի արդյունքում պատերը խոնավացել են:
5	Դպրոցի ցանկապատի գլխավոր հատվածը մասամբ վերանորոգված է:	Դպրոցի շենքի արտաքին պատերի սալիկների տարբեր հատվածներ պոկված են, վառարանների արձակած մրից սևացած, խոնավությունից բոբբոսնած:
6	Դպրոցի մուտքը միջանցքի պատերի հետ միասին վերանորոգված է, լուսավոր է և ընդարձակ: Արևելյան պատին ձևավորվել է հուշապատ՝ նվիրված դպրոցի նախկին սան՝ Հայկ Մարգարյանին:	Դպրոցի ռիսկային գործոններով պայմանավորված սովորողների շարժը վերահսկելու նպատակով տեսախցիկների բացակայությունը:
7	Ուսումնական մասնաշենքի 1-ին հարկի արևելյան և արևմտյան հատվածների հատակը սալիկապատված է::	Սանհանգույցների քանակի սակավությունը, անձնակազմի համար դրանց բացակայությունը /ընդամենը 2 սանհանգույց 251 սովորողի և շուրջ 30 մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի համար/:

8	Մարզադահլիճի արտաքին պատերը նորովի կառուցված են, տեղադրված են մետաղապլաստե երկփեղկ դռներ:	Ուսումնական մասնաշենքի 2-րդ հարկում սանհանգույցների և ջրամատակարարման բացակայությունը:
9	Դպրոցի տանիքը նորովի հիմնանորոգված է, տեղադրված են ջրահեռացման ջրհորդաններ:	Դասասենյակների, կաբինետների անհամապատասխանությունը սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին:
10	Դպրոցում առկա է լոկալ ջեռուցման համակարգ /տեղադրվել է 2022 թվականին/:	Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ:
11	Դպրոցում առկա է 1 հրշեջ վահանակ, 8 կրակմարիչ:	Դպրոցը չունի լաբորատորիաներ:
12	Դպրոցում առկա է տարհանման պլան, տեղադրված է բոլոր համապատասխան վայրերում:	Դպրոցը չունի շախմատի, ռետուս սենյակներ:
13		Դպրոցի չունի բուժկետ:
14		Դպրոցի նկուղում առկա են ջրամատակարարման և ջրահեռացման հին խողովակներ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԴԻՐՔԻ, ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ակնհայտ է, որ ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական խնդիրների լիարժեք իրականացման համար հույժ կարևոր է ուսումնական ենթակառուցվածքների ապահովումը,, ուսումնական հաստատության շենքային բարվոք պայմանների առկայությունը: Նախքան շենքային պայմանների կատարելագործման վերաբերյալ նպատակներ սահմանելը հարկավոր է նշել, որ 2023 թվականին **«Մինչև 2026 թվականը 300 դպրոցի նորոգման, կառուցման և վերակառուցման» ՀՀ Կառավարության ծրագրի** շրջանակում ներառվել է նաև մեր ուսհաստատությունը և նախատեսվում է կառուցել կրթական բոլոր կարիքները բավարարող կրթահամալիր:

Հետևաբար, իրավիճակին համահունչ, արմատապես փոխվել է նաև գործունեության ռազմավարությունը.

1. Ուսհաստատությունում ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման, հաստատության, հարակից տարածքում անվտանգության լիակատար պայմաններ

ձևավորելու և վերահսկելու ուղղությամբ, իրենց իրավասությունների սահմաններում համագործակցային, արդյունավետ գործունեություն են իրականացում հանրակրթության կառավարման բոլոր մարմինները՝ ՀՀ Կառավարության, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, Պետական կառավարման լիազորված և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի տնօրենության միջև:

2. Ուսումնական հաստատության տեղական նշանակության ճանապարհի վրա գտնվելով պայմանավորված սովորողների և անձնակազմի ավտանգության և անվտանգ կենսագործունեության ապահովման նպատակով պետական լիազորված մարմնի (ՀՀ Կոտայքի մարզպետարան), <<Ակունք>> խոշորացված համայնքի, Նորգյուղի գյուղապետարանի, Ոստիկանության Կոտայքի բաժնի, Ճանապարհային դեպարտամենտի և այլ պատկան մարմինների հետ դպրոցի տնօրենության ամենօրյա համատեղ աշխատանքի իրականացում:

3. Դպրոցի մարզահրապարակի վերանորոգում <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի>, <<Ակունքի համայնքապետարանի>> և <<Նորգյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

4. Դպրոցի շրջակա տարածքը մաքուր պահելու, մշտապես ծառերի խնամք իրականացնելու, տարածքը կանաչապատելու ուղղությամբ աշխատանքների կատարում:

5. Մասնաշենքի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման աշխատանքների իրականացում:

6. Էլեկտրահաղորդման գծի անխափան գործունեության իրականացում:

7. Համացանցի կարգավորման, անխափան գործունեության ապահովում:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԴԻՐՔԻ, ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Դպրոցական մասնաշենքի պահպանման, հաստատության հարակից՝ գլխավոր փողոցի հատվածում անվտանգության լիակատար պայմաններ ձևավորելու և վերահսկելու նպատակով ուսհաստատության կառավարման բոլոր մարմինների հետ համագործակցության ամրապնդում:

2. Ուսումնական հաստատության տեղական նշանակության ճանապարհի վրա գտնվել հանգամանքով պայմանավորված սովորողների և անձնակազմի ավտանգության և անվտանգ կենսագործունեության ապահովման նպատակով պատկան մարմինների աջակցությամբ (պետական լիազորված մարմնի (ՀՀ Կոտայքի մարզպետարան), Ակունք խոշորացված համայնքի, Նորգյուղի գյուղապետարանի, Ոստիկանության Կոտայքի բաժնի, Ճանապարհային դեպարտամենտի և այլն) դպրոցի տնօրենության ամենօրյա համատեղ աշխատանքի ուժեղացում:

3. Դպրոցի բացօթյա մարզահրապարակի վերանորոգում :

4. Դպրոցամերձ կանաչ տարածքի, ոռոգման ցանցի ընդլայնում:

5. Սանհանգույցների բարեկարգում, հնացած սանտեխնիկայի նորով փոխարինում:

6. Էլեկտրահաղորդման գծի անխափան գործունեության իրականացման խնդիրը համայնքային բնույթի է, լուծումը պայմանավորված է խնդրի համայնքային, ընդհանրական լուծման հետ:

7. Խնդիրը ներկայացնել համացանցի անվտանգությունն իրականացնող և սպասարկող կազմակերպությանը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԴԻՔԻ, ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԵՆՔԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Գործողության բովանդակությունը	Ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները	Ծանոթություն
1.1	Ուսումնական հաստատության տեղական նշանակության ճանապարհի վրա գտնվելու հանգամանքով պայմանավորված սովորողների և անձնակազմի ավտանգության և անվտանգ կենսագործունեության ապահովման նպատակով ուսումնական պարապմունքներից առաջ և ավարտին դպրոցական մասնաշենքի մուտքի և տեղական նշանակության ճանապարհի անցումի մոտ ուսուցիչների կողմից կազմակերպել հերթապահություն:	Հաշվետու ժամանակա ընթացքում (2023–2028թթ..)	Տնօրենություն, դասվարներ և դասղեկներ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ	Հերթապահության գործընթացին մասնակից դարձնել նաև ուղեկցող ծնողներին, ուսումնա օժանդակ անձնակազմին
1.2	Տարրական դպրոցի ուսումնական	Հաշվետու	Տնօրենություն,	Պարբերաբար

	պարապմունքներից ավարտին սովորողների դեպի տուն ուղեկցելը կազմակերպել բացառապես ծնողների ուղեկցությամբ:	Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	դասվարներ և դասղեկներ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ	կատարել աշխատանքի վերլուծություն, ամփոփել արդյունքները
1.3	Ուսհաստատության 1-12-րդ դասարանների սովորողների համար պարբերաբար կազմակերպել ճանապարհային անվտանգ երթևեկության վերաբերյալ դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարապմունքներ:	Հաշվետու Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	Տնօրենություն, դասվարներ և դասղեկներ, ճանապարհային դեպարտամենտի և ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակիցներ	Պարբերաբար կատարել աշխատանքի վերլուծություն, ամփոփել արդյունքները
1.4	Շարունակել մասնակցությունը համապետական, համայնքային և համադպրոցական շաբաթօրյակներին, մաքուր և բարեկարգ պահել ուսհաստատության բակը, շուրջբոլորը:	Հաշվետու Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	Տնօրենություն, դասվարներ և դասղեկներ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, Ակունք խոշորացված համայնքի ներկայացուցիչներ	Դպրոցի տարածքի հատվածների մաքրության, ծառերի խնամքի պատասխանա տվությունը դնել 1-12-րդ դասարանների սովորողների վրա, մշտապես հետևել կատարված աշխատանքին:
1.5	Վերանորոգել դպրոցի սանհանգույցները:	2024-2025 ուստարի	Տնօրենություն, Ակունք համայնք	Գործընթացին մասնակից դարձնել նաև Ակունք համայնքի ներկայացուցիչներին
1.6	Պատկան մարմինների աջակցությամբ կարգավորել ուսհաստատության անխափան էլեկտրամատակարարման խնդիրը:	2024-2025 ուստարի	Տնօրենություն, Ակունք համայնք	Աջակցությամբ Պետական լիազորված մարմնի,

				Ակունքի համայնքա պետարան, Ոստիկանությա ն Կոտայքի բաժնի, Ճանապարհա յին դեպարտա մենտի
1.7	Հաստատության սանհանգույցների սարքավորումները սարքին են, սակայն հնացած, ուստի լվացարանները, ջրի տակառիկները, օդափոխիչ համակարգերը պարբերաբար վերանորոգվում են:	Հաշվետու Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	Տնօրենություն	Աջակցությամբ՝ պետական լիազորված մարմնի, Ակունք համայնքապե տարանի
1.8	Սանհանգույցներում տեղադրել ջրհոսքի հարմարանք (տրապ):	2024-2025 ուստարի	Տնօրենություն	Աջակցությամբ՝ պետական լիազորված մարմնի, Ակունք համայնքապե տարանի

ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

1. Էլեկտրահաղորդման գծի անխափան գործունեության իրականացման վերաբերյալ համայնքի և ՀԵՑ-ի կողմից աշխատանքների հնարավոր ձգձգում (ինչպես արդեն նշեցինք, խնդիրը համայնքային բնույթի է, լուծումը պայմանավորված է խնդրի համայնքային, ընդհանրական լուծման հետ):

2. Ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ դպրոցական շենքի պահպանման գործում դժվարությունների առաջանալը:

3. Ֆինանսական դժվարություններ:

ՄԵՂՄՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Էլեկտրահաղորդման գծի անխափան գործունեության իրականացման վերաբերյալ խնդիրն արդեն իսկ ընդգրկված է համայնքի և ՀԵՑ-ի գործունեության մերձակա պլաններում, այն լուծման փուլում է:

2. Ուսհաստատության տնօրենությունը մշտական փոխհամագործակցված աշխատանք է տանում շահառու բոլոր մարմինների՝ պետական լիազորված մարմնի (ՀՀ Կոտայքի մարզպետարան), <<Ակունք>> խոշորացված համայնքի, Նորգյուղի գյուղապետարանի, Ոստիկանության Կոտայքի բաժնի, Ճանապարհային դեպարտամենտի և այլ պատկան մարմինների հետ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿԱՐՆԵՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ



Նկար 1



Նկար 2



Նկար 3




Նկար 4

Մանհանգույցներին հարող միջանցքի և տարրական դասարանների միջանցքի նկարները /առաջ, հետո/




Նկար 5



Նկար 6



Նկար 6



Նկար 7

1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵՆԻԿԱԿԱՆ

ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1-4-րդ դասարաններ					
Անվանումը	Չափը	Առկա գույքը	Քանակը	Նկարագրությունը	Վիճակը /լավ, բավարար, մաշված /
Դասասենյակ 1 /I հարկ/ /նկար 14/	35,6քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	12	Երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ դեղին- 3 հատ, մանուշակագույն- 9 հատ	բավարար
		Աթոռ աշակերտական	24	Մետաղական հիմքով, գույնը՝ մանուշակագույն- 10 հատ, դեղին- 14 հատ	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ, գույնը՝ մանուշակագույն՝ աջ կողմում՝ երկու դարակով՝ օվալաձև բռնակով	բավարար
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթը՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	բավարար
		Գրապահարան	1	Գույնը՝ կանաչ, վերևում և ներքևում բաց 4 դարակով, մեջտեղում՝ փակվող դռներով դարակներով	բավարար
		Կախիչ	2	Լամինացված 11 տեղանոց մետաղական կախիչներով, Գույնը՝ մանուշակագույն	լավ
Դասասենյակ 2 /I հարկ/ /նկար 13 /	36,2քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	11	Երկտեղանոց, մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	22	Մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ, աջ կողմում՝ դարակով՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված

		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	բավարար
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220 մմ, լայնությունը՝ 870 մմ, երկարությունը՝ 390 մմ, վերևում՝ երեք բաց դարակով, ներքևում՝ փակվող դռներով դարակներով՝ ամրացված օվալաձև մետաղյա բռնակներով	բավարար
		Կախիչ	3	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 2 հատ՝ 7 տեղանոց, 1 հատ՝ 5 տեղանոց	բավարար
Դասասենյակ 3 /I հարկ/ /նկար 9, 12/	33,3քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	13	Երկտեղանոց, մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	26	Մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ, աջ կողմում՝ դարակով՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	բավարար
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220 մմ, լայնությունը՝ 870 մմ, երկարությունը՝ 390 մմ, վերևում՝ երեք բաց դարակով, ներքևում՝ դարակներ փակվող դռներով՝ ամրացված օվալաձև մետաղյա բռնակներով	բավարար

		Կախիչ	3	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 2 հատ՝ 7 տեղանոց, 1 հատ՝ 5 տեղանոց	լավ
Դասասենյակ 4 /I հարկ/ /նկար 11/	35,6քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	13	Երկտեղանոց, մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	26	Մետաղական հիմքով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ, աջ կողմում՝ դարակով՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	բավարար
		Գրապահարան	1	Գրապահարան 4 փակվող դարակներով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Կախիչ	2	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 2 հատ՝ 14 տեղանոց	լավ

5-12-րդ դասարաններ					
Անվանումը	Չափը	Առկա գույքը	Քանակը	Նկարագրությունը	Վիճակը /լավ, բավարար, մաշված /
Դասասենյակ 5 /I հարկ/	37,5քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	12	Երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	24	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ՝ աջ կողմում՝ դարակ՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Լամինացված հարթությամբ, աջ կողմում՝ դարակով՝	մաշված

		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	լավ
		Գրապահարան	2	4 փակվող դարակներով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Կախիչ	2	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	լավ
Դասասենյակ 6 /I հարկ/ /նկար 15/	35,1քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	12	Երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	24	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ աշխատանքային սեղան՝ աջ կողմում՝ դարակ՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ կապույտ, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով, գրատախտակի երկարությամբ՝ պրոֆիլից դարակ կավճի համար	բավարար
		Գրապահարան	1	4 փակվող դարակներով, գույնը՝ նարնջագույն	բավարար
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	լավ
Դասասենյակ 7 /II հարկ/	32,5քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	6	Աշակերտական սեղան՝ երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	12	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար

		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ աշխատանքային սեղան՝ աջ կողմում՝ դարակ՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	բավարար
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220մմ, լայնությունը՝ 870մմ, երկարությունը՝ 390մմ, վերևում երեք բաց դարակով, ներքևում դարակներով՝ փակվող դռներով	բավարար
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	բավարար
Դասասենյակ 8 /II հարկ/	35 քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	13	Կրեմագույն լամինատից, չափսերը՝ երկարությունը՝ 118սմ, լայնությունը՝ 50 սմ, բարձրությունը՝ 74սմ: Սեղանի ոտքերի վերին մասի աջ և ձախ կողմերում հեղուկ ամրացված է մետաղյա երկու կախիչ՝ պայուսակները կախելու համար:	լավ
		Աթոռ աշակերտական	26	Մետաղյա կարկասով, չափսերը՝ 15սմ, 1,5սմ հաստությամբ պատերով քառակուսի սև մետաղից եռակցման եղանակով աթոռի մետաղյա կարկասը՝ ներկված բարձր որակի նիտրո ներկով	լավ
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ աջ կողմում՝ օվալաձև մետաղական բռնակով դարակով	մաշված

		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Պատրաստված է 8 մմ հաստությամբ սև գույնի լամինատից, չափսերը՝ երկարությունը՝ 193սմ լայնությունը՝ 100սմ: Գրատախտակը եզրերից շրջանակվում 1032 համարի պրոֆիլով: Գրատախտակի ներքևի մասում 5սմ լայնությամբ լամինատե դետալ է ամրացված՝ կավիճը դնելու համար:	լավ
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220մմ, լայնությունը՝ 870մմ, երկարությունը՝ 390մմ: Գրապահարանը վերևում ունի երեք բաց դարակ: Ներքևի դարակները փակվում են դռներով:	բավարար
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի:	բավարար
Դասասենյակ 9 /II հարկ/	33,6քմ	Մեղան աշակերտական աշխատանքային	6	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	12	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ՝ աջ կողմում օվալաձև մետաղական բռնակով դարակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Կիսափափուկ աթոռ, նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված

		Գրատախտակ	2	Պատրաստված է 8 մմ հաստությամբ սև գույնի լամինատից, չափսերը՝ երկարությունը՝ 193 սմ լայնությունը՝ 100 սմ, գրատախտակի ներքնի մասում ամրացված է 5սմ լայնությամբ լամինատե դետալ՝ կավիճը դնելու համար:	լավ
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220մմ, լայնությունը՝ 870մմ, երկարությունը՝ 390մմ: Գրապահարանը վերևում ունի երեք բաց դարակ: Ներքնի դարակները փակվում են դռներով:	բավարար
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի:	բավարար
Դասասենյակ 10 /II հարկ/	35,7քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	10	Երկտեղանոց, մետաղական հիմքով, գույնը՝ շագանակագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	20	Մետաղական հիմքով, գույնը՝ շագանակագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ՝ աջ կողմում՝ դարակ՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով	լավ
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220 մմ, լայնությունը՝ 870մմ, երկարությունը՝ 390 մմ: Գրապահարանը վերևում ունի երեք բաց դարակ: Ներքնի դարակները փակվում	լավ

				են դռներով:	
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	բավարար
Դասասենյակ 11 /II հարկ/	36,8քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	10	Երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	20	Մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ՝ աջ կողմում՝ դարակ՝ օվալաձև մետաղական բռնակով	մաշված
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Գրատախտակի մակերևույթ՝ սև, հակաարտացոլման ռեֆլեկտիվ պոլիմերային ծածկույթով, գրատախտակի երկարությամբ՝ պրոֆիլից դարակ կավճի համար	լավ
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220 մմ, լայնությունը՝ 870 մմ, երկարությունը՝ 390 մմ: Գրապահարանը վերնում ունի երեք բաց դարակ: Ներքևի դարակները փակվում են դռներով:	լավ
		Կախիչ	1	Լամինացված ԴՄՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	բավարար
Դասասենյակ 12 /II հարկ/	39,1քմ	Սեղան աշակերտական աշխատանքային	8	Աշակերտական սեղան՝ երկտեղանոց՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Աթոռ աշակերտական	16	Աշակերտական աթոռ՝ մետաղական հիմքով, գույնը՝ մոխրագույն	բավարար
		Ուսուցչի սեղան	1	Լամինացված հարթությամբ աշխատանքային սեղան՝ աջ	մաշված

				կողմում՝ օվալաձև մետաղական բռնակով դարակով	
		Աթոռ ուսուցչի կիսափափուկ	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ փայտյա և լաքապատված	մաշված
		Գրատախտակ	2	Պատրաստված է 8 մմ հաստությամբ սև գույնի լամինատից, չափերը՝ երկարությունը՝ 193սմ լայնությունը՝ 100սմ: Գրատախտակի ներքևի մասում 5սմ լայնությամբ լամինատե դետալ է ամրացված՝ կավիճը դնելու համար:	լավ
		Գրապահարան	1	Բարձրությունը՝ 1220մմ, լայնությունը՝ 870մմ, երկարությունը՝ 390մմ: Գրապահարանը վերևում ունի երեք բաց դարակ: Ներքևի դարակները փակվում են դռներով:	բավարար
		Կախիչ	1	Լամինացված ԴՍՊ 1,8 հաստությամբ, 7 տեղանոց մետաղական կախիչներով, պատից ամրացվող, գույնը՝ բնափայտի	բավարար

**ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ 1-12-ԸՆԴՀԱՄԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ,
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հ/հ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Բոլոր դասասենյակների փայտե լուսամուտները և դռները փոխվել են եվրո լուսամուտների և դռների 2021 թվականին:	Դասասենյակների չափերը սահմանված նորմերին չեն համապատասխանում:
2	Դպրոցի 2 դասասենյակները վերանորոգվել են 2019 թվականին, 3 դասասենյակները /տարրական դասարաններ/՝ 2022 թվականին, 4 դասասենյակների հատակը լամինապատված է:	9 դասասենյակների շրիշակները մաշված են, հատակի մանրահատակը հին է, մաշված:
3	Բոլոր դասասենյակներն արևկողմ են, առկա է	6-12-րդ դասարանների

	համապատասխան լուսավորություն:	դասասենյակները վերանորոգված չեն:
4	Բոլոր դասասենյակներում առկա են քիվեր և վարագույրներ, 1 դասարանում՝ շերտավարագույր:	Առկա գույքի որոշ մասն ունի տեսանելի մաշվածություն:
5	Բոլոր դասասենյակներում առկա են լուսավոր առարկայական պաստառներ:	
6	Դասասենյակների պակաս գույքը համալրվել է:	
7	Դասասենյակների պակաս և մաշված գրատախտակները համալրվել և փոխարինվել են:	
8	Դասասենյակներն ապահովված են էլեկտրական սնուցմամբ:	
9	Սահմանված կարգով իրականացվում է ուսհաստատության դասասենյակների և միջանցքների օդափոխություն:	
10	Ջեռուցման շրջանում ուսհաստատության դասասենյակներում ապահովվում է 18-22, ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18-20, իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան՝ ըստ ցելսիուսի:	
11	Ուսհաստատությունն ապահովված է բնական լուսավորությամբ, սովորողների աշխատանքային տեղերը դասավորված են այնպես, որպեսզի ապահովվի ձախակողմյան բնական լուսավորություն:	

Տարրական դասարանների դասասենյակների նկարներ /մինչև վերանորոգվելը/



նկար 9



նկար 10

Տարրական դասարանների դասասենյակների նկարներ / վերանորոգվելուց հետո/



նկար 11



նկար 12



նկար 13



նկար 14



նկար 15

ԴԱՍԱՍԵՆՑԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԵՎ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ինչպես նշվել է նախորդ կետում, այն է՝ 2023 թվականին «Մինչև 2026 թվականը 300 դպրոցի նորոգման, կառուցման և վերակառուցման» ՀՀ Կառավարության ծրագրի շրջանակում ներառվել է նաև մեր ուսհաստատությունը և նախատեսվում է կառուցել կրթական բոլոր կարիքները բավարարող կրթահամալիր, ուստի աննպատակահարմար էմ համարում մեծ ծախսեր պահանջող աշխատանքների պլանավորումը և հնարավորության սահմաններում նախատեսում էմ միջոցներն ուղղել դասարաններում շարժական գրատախակների, դասավանդման արդի մեթոդներին համահունչ դիդակտիկ նյութերի ձեռքբերմանը, առկա գույքի պահպանմանը, աշակերտական համակազմի ավելացմամբ պայմանավորված պակաս գույքի համալրմանը:

ԴԱՍԱՍԵՆՑԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԵՎ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսումնական գործընթացի իրականացման համար արդյունավետ դիդակտիկ պարագաների կարիքի ուսումնասիրություն:
2. Աշակերտական գույքի քանակական բավարարության, վիճակի վերաբերյալ մշտական հաշվետվողականություն:
3. Դասասենյակներում ուսումնական միջավայրի բարելավում:

ԴԱՍԱՍԵՆՑԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԵՎ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Կատարել դասավանդման արդի մեթոդներին համահունչ դիդակտիկ նյութերի ուսումնասիրություն:	2023-2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, դասղեկ-դասվարներ, ուսուցիչներ
2	Պլանավորել յուրաքանչյուր տարիքային խմբի համար բարենպաստ ուսումնական միջավայրի բարելավման աշխատանքներ:	2023-2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, դասղեկ-դասվարներ, ուսուցիչներ, ծնողխորհուրդ

3	Ձեռք բերել շարժական գրատախտակներ /տարին առնվազն 3 հատ/	2024-2025 ուստարի /շարունակական/	Տնօրենություն
4	Պարբերաբար կատարել ուսումնասիրություն առկա գույքի վիճակի վերաբերյալ, ներկայացնել հաշվետվություններ:	2023-2024 ուստարի , սեպտեմբեր-հունվար-մայիս /շարունակական/	Տնօրենություն, 1-12-րդ դասարանների դասվար-դասղեկներ, ուսուցիչներ, տնտեսվար, վարչատնտեսական պատասխանատու
5	Անհրաժեշտության դեպքում կատարել կոսմետիկ վերանորոգումներ:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ..)	Տնօրենություն, վարչատնտեսական պատասխանատու, տնտեսվար

ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

Ֆինանսական ոչ բավարար միջոցներ:

ՄԵՂՍՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դպրոցի կառավարման շահագրգիռ կողմերի ներգրավվածություն, աջակցության պատրաստակամություն:

Գրադարան					
Անվանումը	Չափը	Առկա գույքը	Քանակը	Նկարագրությունը	Վիճակը /լավ, բավարար, մաշված /
Գրադարան /II հարկ/	16,5քմ	Գրապահարան	7	Բարձրությունը՝ 1220 մմ, լայնությունը՝ 870 մմ, երկարությունը՝ 390 մմ: Գրապահարանը վերևում ունի երեք բաց դարակ: Ներքևի դարակները փակվում են դռներով, որոնց վրա ամրացված են օվալաձև մետաղյա բռնակներ:	բավարար
		Աշխատանքային սեղաններ	2	Չափերը՝ 760 մմx 600մմx1100մմ, աջ կողմից 2 կողպվող դարակներով	բավարար
		Աթոռ կիսափափուկ աշխատանքային	1	Նստատեղը՝ փափուկ դիմացկուն գործվածքով, աթոռի կմախքը՝ լիպոտյա և լաքապատված, գույնը՝ սև:	բավարար
		Գրատախտակ շարժական /Ֆլիպչարտ/	1	Ֆլիպչարտ գրատախտակ՝ մարկերային, շարժական ոտքերով: Չափսերը՝ 500x550 x 2000 մմ	բավարար
		Գրադարանային ֆոնդում ՀՀ ԿԳՄՍ	1966		լավ,

		նախարարության կողմից երաշխավորված առկա դասագրքերի և ՈԻԶ-ների ընդհանուր թիվը			բավարար
		Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառությամբ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի/ ընդհանուր թիվը, այդ թվում	1300		բավարար
		Գրադարանային ֆոնդում առկա տեղեկատվական գրքերի ընդհանուր թիվը/ բառարաններ, ատլասներ և այլն/	345		բավարար
		Ուսումնամեթոդակ ան գրքերի և ամսագրերի ընդհանուր թիվը	800		բավարար
		Գեղարվեստական գրքերի թիվը	130		բավարար
		Քարտեզներ, պաստառներ	25		բավարար
		Ուսումնական խաղեր	5		լավ
		Վերջին անգամ գրադարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը		2023թ.	
		Գրադարանից ամսական միջինում օգտվողների թիվը		30-60 սովորող	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԳՈՒՅՔԻ

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Տեղադրված է եվրո պատուհան:	Գրադարանը վերանորոգված չէ:
Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները	Ծանոթություն
1	Շարունակել մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կրթական ծրագրերին:	Հաշվետու Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	ՈԻսհաստատության տնօրենություն, մեթոդական միավորումներ	1. Շարունակել և զարգացնել մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կրթական ծրագրերին, մասնավորապես՝ ա/ «Ընթերցանությունը տարրական դպրոցում», «Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը», բ/ Եվրոպական դպրոցների Իթվինինգ և «Դպրոցների համագործակցության վիրտուալ համայնք» ազգային ծրագրերին,
		Հաշվետու Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	ՈԻսհաստատության տնօրենություն, մեթոդական միավորումներ	2. Մասնակցել նոր կրթական ծրագրերի, մասնավորապես՝ « Իմ կյանքը համայնքում», « Հետազոտենք և բացահայտենք աշխարհը», «Մասնա ծոեր» աշակերտական համաժողով:
		(2024–2025, 2025–2026 ուստարի)	ՈԻսհաստատության տնօրենություն, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ	3. Շարունակել և
	Համագործակցություն	Հաշվետու		

«Այբ» կրթական կենտրոնի հետ Համգործակցություն ԿՏԱԿ-ի հետ Սկսել համագործակցություն «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիայի հետ:	«Այբ» կրթական կենտրոնի հետ Համգործակցություն ԿՏԱԿ-ի հետ Սկսել համագործակցություն «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիայի հետ:	Ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..) 2023–2024 ուսումնական տարում /շարունակական/ 2023–2024 ուսումնական տարում /շարունակական/ 2023–2024 ուսումնական տարում	Ուսհաստատության տնօրենություն, «Արմաթ» – աշխատակիցներ, ուսուցիչներ, սովորողներ	գարգացնել մասնակցությունը « Այբ» կրթական ծրագրի «Կենգուրու» և «Մեղու» մրցույթներին: 4. ԿՏԱԿ-ի կազմակերպած՝ ա/՝ ՏՀՏ առցանց գործիքների կիրառության և ինտերակտիվ տեխնոլոգիաների ուսուցման, բ/ կրթական էլեկտրոնային պաշարներ ստեղծելու գործիքներին տիրապետելու հեռավար կարճատև դասընթացների, գ/ ըստ անհրաժեշտության հայտ ներկայացնել մասնակցելու «գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծման» մենթորական աջակցության ծրագրին: 5. Արդեն իսկ ընդունվել է « Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում «Արմաթ» ինժեներական լաբորատորիա հիմնելու վերաբերյալ մեր հայտը, տարվում
---	---	--	---	---

				են նախապատրաստական աշխատանքներ նոր՝ 2023–2024 ուստարում այն գործարկելու համար:
2	Ուսհաստատությունը «Դպրոցական սնունդ» ծրագրի շահառու է:	2023–2024 ուսումնական տարում /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, «Դպրոցական սնունդ» ծրագրի պատասխանատուներ, տարրական դպրոցի (1–4-րդ դասարաններ), ծնողներ, սովորողներ	Ի կատարումն ծրագրի իրականացման, 2022–2023 ուսումնական տարում հիմնովին վերանորոգվել է դպրոցի ճաշարանը, ձեռք է բերվել կենցաղային ժամանակակից տեխնիկա, անհրաժեշտ սպասք և կահույք:
3	Ուսհաստատությունը սերտորեն համագործակցում է ՏՄԱԿ Կոտայք կազմակերպության հետ:	2023–2024 ուսումնական տարում /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, ՏՄԱԿ Կոտայք, ԿԱՊԿՈՒ երեխաներ, նրանց ծնողները	Ուսհաստատության տնօրենության և ՏՄԱԿ Կոտայք կազմակերպության աշխատակիցների հետ համատեղ, սահմանված կարգով կատարվել է ուսհաստատության ԿԱՊԿՈՒ երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում, կազմվել ԱՌԻՊ, ապահովվելով ծրագրային, մեթոդական և միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ: Շարունակել համագործակցությունը:
4	Ուսհաստատությունը սերտորեն	2023–2024 ուսումնական	Ուսհաստատության տնօրենություն,	Սահմանված կարգով, համաձայն

	համագործակցում է վերապատրաստող կազմակերպություններ ի («Մասնակցային դպրոց», «Տաթև», «ՀՄԿ») հետ:	տարում /շարունակական/	վերապատրաստող ուսուցիչներ, կազմակերպություններ	ուսանողության տնօրենության ժամանակացույցի մանկավարժները մասնակցել և այսուհետև կմասնակցեն ուսուցչի հերթական ատեստավորման վերապատրաստման դասընթացներին: Շարունակել համագործակցությունը:
5	Համագործակցություն «Դասավանդիր Հայաստան» ծրագրի հետ:	2024–2025 ուսումնական տարում /շարունակական/	Ուսնաստատության տնօրենություն, ուսուցիչներ	Նախատեսում ենք համագործակցել «Դասավանդիր Հայաստան» ծրագրի հետ:
6	Երկարորյա ուսուցման կազմակերպում:	2023–2024 ուսումնական տարում /շարունակական/	Ուսնաստատության տնօրենություն, ծնողներ, ուսուցիչներ	Ստեղծել անհրաժեշտ բոլոր նախադրյալները երկարորյա ուսուցման կազմակերպման համար:
7	Համագործակցություն «Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտի» (ՀՅԹԻ)–ի հետ:	2023–2024 ուսումնական տարում /շարունակական/	Ուսնաստատության տնօրենություն, ՀՅԹԻ–ի աշխատակիցներ, ուսուցիչներ, սովորողներ	Նախատեսում ենք շարունակել համագործակցությունը «Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտի» (ՀՅԹԻ)–ի հետ:
8	Համագործակցություն Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ–ի հետ ուսնաստատության հետ սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:	2023–2024 ուսումնական տարում /շարունակական/	Ուսնաստատության տնօրենություն, ՀՊՄՀ–ի աշխատակիցներ, ուսուցիչներ, սովորողներ, ուսանողներ	Նախատեսում ենք շարունակել համագործակցությունը Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ–ի հետ ուսնաստատության հետ սովորողների մասնագիտական

				կողմնորոշման ուղղությամբ: ա/ Այցելություն բուհ, բ/ դասախոսությունների ունկնդրում, գ/ հանդիպում, մտքերի փոխանակություն բուհի ուսանողների հետ:
9	Շարունակել համագործակցությունը Ոստիկանության Կոտայքի բաժնի անչափահասների տեսչության և Բալահովտի խաղաղապահ բրիգադի անձնակազմի հետ:	Հաշվետու ժամանակա շրջան (2023–2028 թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, ուսուցիչներ, սովորողներ	Նախատեսում ենք շարունակել համագործակցությունը Ոստիկանության Կոտայքի բաժնի անչափահասների տեսչության և Բալահովտի խաղաղապահ բրիգադի անձնակազմի հետ. ա/ հանդիպումներ ոստիկանության անչափահասների գծով տեսուչների հետ ըստ տարիքային խմբերի հետաքրքրություն և կարևորություն ներկայացնող թեմաների վերաբերյալ, բ/ հանդիպումներ Բալահովտի խաղաղապահ բրիգադի անձնակազմի հետ, ռազմահայրենասիրակ ան և զինվորականի մասնագիտություն կարևորության թեմայով:
10	Շարունակել համագործակցությունը	2023–2024 ուսումնական	Ուսհաստատության և գործընկեր	Շարունակել համագործակցությունը

	գործընկեր դպրոցների (Ակունքի և Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցներ) հետ:	տարում /շարունակական/	ուսհաստատությունների տնօրենություն, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ, սովորողներ	գործընկեր դպրոցների (Ակունքի և Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցներ) հետ: Համագործակցել նաև համայնքի այլ դպրոցների, մասնավորապես Զառի միջնակարգ դպրոցի հետ, ա/ հրավիրել մեթոդական միավորումների միացյալ նիստեր, բ/ կազմակերպել փոխադարձ դասասլսումներ, կազմակերպել առաջավոր փորձի փոխանակում, գ/ կազմակերպել միացյալ գեղարվեստական, ռազմամարզական և ինտելեկտուալ միջոցառումներ:
11	Շարունակել համագործակցությունը «ՍՈՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «ՍՈՍ Կոտայք մանկական գյուղ»-ի «Աջակցություն Կոտայք և Նորգյուղ» համայնքների միջնակարգ դպրոցներին» ծրագրի շրջանակում:	2023–2024 ուսումնական տարում	Նորգյուղի և Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցների տնօրենություն, «ՍՈՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «ՍՈՍ Կոտայք մանկական գյուղ»-ի «Աջակցություն Կոտայք և Նորգյուղ համայնքների	«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և «Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորում են «ՍՈՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «ՍՈՍ Կոտայք մանկական գյուղ»-ի շուրջ 15 սովորող: Հիմնադրամի

			միջնակարգ դպրոցներին» ծրագիր	«Աջակցություն Կոտայք և Նորգյուղ» համայնքների միջնակարգ դպրոցներին» ծրագրի շրջանակում գործընկեր դպրոցների ուսուցիչներին և ծնողներին մատուցվում է մանկավարժական, հոգեբանական և ներառականության վերաբերյալ կրթական աջակցություն:
12	Համագործակցել համայնքի բուժամբուլատորիայի հետ	Հաշվետու ժամանակա շրջան (2023–2028 թթ..)	Ծնողական խորհուրդ, սովորողներ, ուսուցիչներ	Դպրոցում առկա չէ բուժկետ և բուժքույր, ուստի համագործակցությունը համայնքի բուժամբուլատորիայի հետ նպաստում է հիվանդությունների իրազեկման, կանխարգելման և վերահսկողական աշխատանքներին:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԿՍՎՈՒՄ Է ԻՐ ԲՆԱԿԱՏԵՂԻ՝

« ՓՈՔՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԻՑ

(«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառի առարկայական
չափորոշիչ)

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Նորգյուղ համայնքը, ի թիվս 7 այլ բնակավայրերի, ընդգրկված է Ակունք խոշորացված համայնքի կազմում: Հանրակրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունները, սահմանվում են օրենքով.

1) աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ օրենքով սահմանված կարգով,

2) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն **(ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 10, կետ 6):**

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ակունք» խոշորացված համայնքի ու Նորգյուղ համայնքի միջև ձևավորվել են գործընկերային և փոխհամագործակցային հարաբերություններ: Անհրաժեշտ է դպրոց - համայնք փոխհարաբերության հիմքում դնել ուսհաստատության, համայնքի, բնակիչների, սովորողի, նրա ծնողի ընդհանրական շահը:

1. Համայնքը, առավելապես շատ սովորողների ընդգրկմամբ, պետք է ստեղծի բավարար պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար.

2. Աջակցի համայնքում իրականացվող էկոլոգիական և ոչ ֆորմալ կրթության և դաստիարակության ծրագրերի իրականացմանը, (դպրոցական պարապմունքներից հետո երեխաների խմբակային զբաղվածություն, արվեստի, սպորտի, արհեստի, երգի ու պարի, ուսումնասիրության հնարավորություն), ինչը զարգացնում է սովորողների հատաքրքրությունները, հմտություններն ու կարողունակությունները,

3. Ուսհաստատության սովորողների մասնակցությամբ կազմակերպի Հայաստանի Հանրապետության տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ:

4. Խոշորացված համայնքների ուսհաստատությունների մասնակցությամբ կազմակերպի գեղարվեստական, ռազմամարզական մրցույթներ, միջոցառումներ:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Խոշորացված համայնքում և ուսհաստատություններում ձևավորել հավասար հնարավորությունների միջավայր,
2. Առավել սերտացնել խոշորացված համայնքի բնակավայրերի և ուսհաստատությունների կապը, առաջնորդվել հնարավորությունների մասնակիցների ընդգրկման հավասարաչափ բաշխման սկզբունքով:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ
«ԱԿՈՒՆՔ» ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ**

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ակունք խոշորացված համայնքի 8 բնակավայրերի միջև ավանդաբար, տասնամյակներով ձևավորված ընկերային, տնտեսական կապերի առկայություն:	Համայնքի կողմից ուսհաստատության սովորողների ընդգրկմամբ, երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար բավարար պայմանների սակավություն:
2	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ուսումնական հաստատությունների միջև կապերի առկայություն:	Համայնքում ուսհաստատության ոչ ֆորմալ կրթության և դաստիարակության ծրագրերի իրականացման որոշակի պասիվության առկայություն:
3	Ակունքի, Կոտայքի Ս. Վարդանյանի անվան և Նորգյուղի միջնակարգ դպրոցների միացյալ կառավարաման խորհրդում ընդգրկվածություն, ինչը նպաստում է համագործակցության զարգացմանը:	Համայնքի տարածքի պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման ու խնամքի աշխատանքում որոշակի պասիվություն:
4	Ակունք խոշորացված համայնքում շաբաթօրյակների, ծառատունների կազմակերպում, ուսհաստատությունների մասնակցություն:	
5	Ուսհաստատության և Նորգյուղի վարչակազմի համագործակցության արդյունքում է սահմանված կարգով իրականացվում է դպրոցական տարիքի	

	երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն:	
6	Համայնքի վարչակազմի և ուսհաստատության սովորողների կողմից հայրենական մեծ և արցախյան պատերազմում զոհված համազյուղացիների հիշատակն հավերժացնող հուշակոթողի բարեկարգում, մաքրում, ծառերի խնամքի իրականացում:	

«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ

«ԱԿՈՒՆՔ» ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Համայնքի հետ ռազմամարզական, գեղարվեստական միջոցառումների, մրցույթների կազմակերպում:	Հաշվետու ժամանակա ընթացքում (2023–2028 թթ..)	Համայնքի վարչակազմ, ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ
2	Համայնքի վարչակազմի հետ սովորողների կողմից համայնքի զբոսաշրջային ներգրավման վերաբերյալ բիզնես պլանի քննարկում: Այս աշխատանքը դպրոցի աշակերտական խորհրդի կողմից մշակված, փորձագիտական քննություն անցած խելամիտ առաջարկներ և լուծումներ պարունակող փաստաթղթերի փաթեթ է, որն իրական հնարավորություն է ընձեռում համայնքը հանրապետական զբոսավարային երթուղում ներառելու համար:	2023–2024 ուստարի /շարունակական/	Ակունք խոշորացված համայնքի ղեկավար, Նորգյուղ համայնքի վարչակազմի ղեկավար, ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ
3	Համայնքում ոչ ֆորմալ կրթության և դաստիարակության ծրագրերի իրականացում (դպրոցական պարապմունքներից հետո երեխաների խմբակային զբաղվածություն, արվեստի,	Հաշվետու ժամանակա շրջան (2023–2028 թթ..)	Ակունք խոշորացված համայնքի ղեկավար, համայնքի վարչակազմ, ուսհաստատության տնօրենություն

	սպորտի, արհեստի, երգի ու պարի, ուսումնասիրության հնարավորություն), ինչը զարգացնում է սովորողների հետաքրքրությունները, հմտություններն ու կարողունակությունները:		
4	Համայնքի և ուսհաստատության էլեկտրամատակարարման բարելավման ուղղությամբ աշխատանքի իրականացում:	2023–2024 ուստարի	Պետական կառավարման լիազորված մարմին (ՀՀ Կոտայքի մարզպետարան) Ակունք խոշորացված համայնքի ղեկավար, Նորգյուղ համայնքի վարչակազմի ղեկավար

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ
«ԱԿՈՒՆՔ» ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԸ**

1. Համայնքի և ուսհաստատության էլեկտրամատակարարման պարբերական անջատումներ, ինչը խաթարում է ուսհաստատության ուսումնադաստիարակչական բնականոն գործունեությունը:
2. Ուսհաստատության ուսուցիչների ուժերով հարևանությամբ անցնող տեղական նշանակության ավտոճանապարհի ուսումնական պարապմունքների ակզբում և ավարտին իրականացվող հերթապահությանը ներգրավել նաև համայնքի աշխատակազմին:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԵՎ «ԱԿՈՒՆՔ»
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՍՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

1. «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և Ակունք խոշորացված համայնքի ու Նորգյուղի վարչակազմի ղեկավարության և ավագանու անդամների միջև համագործակցության, լիակատար փոխվստահության մթնոլորտի առկայություն, ինչն արդյունավետ աշխատանքի, առկա բոլոր խնդիրները հաղթահարելու գրավականն է:

«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ Ի ԹԻՎՍ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՀՈՐՎԱԾ 10, ԿԵՏ 7)

Համաձայն «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից, բաղկացած է 12 անդամից:

Ծնողական խորհրդի նախագահը ընտրվել է փակ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ և հանդիսանում է ուսհաստատության մանկավարժական խորհրդի անդամ:



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2023–2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

Հ/հ	Ծնողական դպրոցական խորհրդի անդամի ազգանունը, անունը		Ծնողական դպրոցական խորհրդի անդամի աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Դասարանը
1	Մարտիրոսյան	Շողիկ	Չի աշխատում	1-ին
2	Գաբրիելյան	Աննա	Չի աշխատում	2-րդ
3	Եղիազարյան	Բալասան	Չի աշխատում	3-րդ
4	Մարգարյան	Սյուզաննա	Չի աշխատում	4-րդ
5	Պետրոսյան	Սաթենիկ	Չի աշխատում	5-րդ
6	Գալստյան	Արմինե	Չի աշխատում	6-րդ
7	Կեսոյան	Ոսկեհատ	Չի աշխատում	7-րդ
8	Կարապետյան	Կարինե	Չի աշխատում	8-րդ
9	Արշակյան	Արևիկ	Չի աշխատում	9-րդ
10	Հովհաննիսյան	Աիդա	Առողջության առաջնային պահպանության ծառայության «Կոտայք» մասնաճյուղ, բուժքույր	10-րդ
11	Իսրաելյան	Զաբելա	Չի աշխատում	11-րդ
12	Գաբրիելյան	Կատյա	Չի աշխատում	12-րդ



Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսիսատարության ծնողական խորհուրդը ձևավորվել է համաձայն «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության. ա/ ծնողական խորհուրդը կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից, բաղկացած է 12 անդամից, բ/ ծնողական խորհրդի կողմից պատշաճ կարգով իրականացվում է խորհրդի փաստաթղթավարությունը, կազմվում նիստերի արձանագրությունները, ունի իր լոգոն:	Ուսիսատարության ծնողական խորհրդի կազմում ընտրվել են նաև պասիվ, նախաձեռնողականությունից զուրկ անդամներ:

2	«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի ծնողական խորհուրդը՝ հանրակրթական դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան, իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության թեկնածուներ:	Արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման ընթացքում առանձին երեխաներ դուրս են մնում ուշադրությունից:
3	Ուսհաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման վերաբերյալ առաջարկություններ:	Ուսհաստատության ծնողական խորհրդի անդամներին հանրակրթության հիմնարար փաթեթի հանրայնացման ուղղությամբ տարվող աշխատանքի աշխուժացում:
4	Ուսհաստատության ծնողական խորհրդի ակտիվ աշխատանքի արդյունքում ուսհաստատության և ծնողների միջև ամրապնդում է կապը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում ձևավորվել են միասնական պահանջներ:	
5	Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներգրավում է ծնողներին:	
6	Արձակուրդների ժամանակ մշտապես աջակցել և շարունակում աջակցել սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:	
7	Ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը ուսհաստատությունում:	
8	Ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ:	
9	Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը սահմանված կարգով հրավիրում է ընդհանուր ժողովներ:	
10	Աջակցում է ուսհաստատությանը սովորողների՝ ա/ բժշկական զննության իրականացման գործընթացում, բ/ տեղական նշանակության ճանապարհի անցումի մոտ հերթապահություն իրականացնելու գործընթացում:	

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ –Ի ԵՎ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**



1. Ուսումնական հաստատությունում առավելագույնս պաշտպանել երեխայի օրինական շահերն ու իրավունքները:

2. Սահմանված կարգով մասնակցել հաստատության կառավարմանը, Ուսհաստատության, կառավարման մյուս մարմինների հետ ներդաշնակ և համագործակցային աշխատանքի արդյունքում՝ ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն է տալիս ստանալ իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ –Ի ԵՎ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**



1. Ուսհաստատության ծնողական խորհրդի հետ համակարգված աշխատանքի իրականացում՝

ա/ սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման ուղղությամբ.

բ/ մանկավարժների խրախուսման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

գ/ իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

դ/ ծնողական խորհրդի, որպես ուսումնադաստիարակության գործընթացի մասնակցի, պատասխանատվության, աշխատանքի արդյունավետության բարձրացում.

ե/ ծնողական խորհրդի աջակցության ապահովում երկարօրյա ուսուցման կազմակերպման գործընթացին.

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ – Ի ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Ծնողական խորհրդի կողմից ծնող-դպրոց կապի ամրապնդման աշխատանքի արդյունավետության բարձրացում:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ.)	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ
2	Ուսհաստատության հետ համագործակցված սահմանված կարգով ծնողական խորհրդին վերապահված գործառույթների ակտիվացում:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ.)	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ
3	Ուսհաստատության ծնողական խորհրդի կողմից դասարանական ծնողական խորհուրդների աշխատանքի համակարգում:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ.)	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ

4	Ուսհաստատության մանկավարժների, դասղեկների հետ համագործակցության ուժեղացում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
5	Շարունակել՝ «Ծնողական ակադեմիա», «Բաց դռների օր», «Մայրս՝ իմ ուսուցիչը» վերտառությամբ, դասղեկի ժամերը դարձնել առավելագույնս արդյունավետ:	2023–2024 ուստարի /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
6	Պարբերաբար դպրոց հրավիրել ծնողների, քննարկել չառաջադիմող սովորողների ուսումնառության բարելավման հարցեր:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ..)	Ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
7	Ծնողներին մասնակից դարձնել ուսհաստատությունում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացին, հաշվի առնել այդ գործընթացի բարելավման վերաբերյալ նրանց առաջարկությունները:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, ՏՄԱԿ, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
8	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների կարիքի գնահատման գործընթացին:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, ՏՄԱԿ, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
9	Երկարօրյա խմբեր ձևավորելիս հաշվի առնել ծնողների առաջարկությունները	2023–2024 ուստարի /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ

10	Սովորողների ընտանեկան դրությունը, սոցիալական կարգավիճակը, առողջական, հոգեբանական խնդիրները, նախասիրությունները, կարողություններն ու հմտությունները, կամային հատկանիշները գնահատելիս խորհրդակցել ծնողների և ՏՄԱԿ–ի աշխատակիցների հետ:	Հաշվետու ժամանակաշրջան (2023–2028 թթ..)	Ուսումնական տնօրենություն, ՏՄԱԿ, ծնողական խորհուրդ, դասարանական ծնողական խորհուրդներ, դասղեկներ
----	--	---	---

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Հաստատության աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմինը հանրակրթական դպրոցի բարձր դասարանների (6-12-րդ դասարաններ) աշակերտների ընդհանուր ժողովն է:



**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ**

Հ/հ	Աշակերտական խորհրդի անդամի աղգանունը, անունը		Պարտականությունը, անդամակցությունը հանձնաժողովին	Դասա րանը
1	Գասպարյան	Գարուշ	Աշակերտական խորհրդի նախագահ	9-րդ
2	Առաքելյան	Լևոն	Ուսումնադաստիարակչական հ/ծ անդամ	6-րդ
3	Գրիգորյան	Զոյա	Մարզական և մշակութային հ/ծ անդամ	6-րդ

4	Գասպարյան	Ալեքս	Մարգական և մշակութային հ/ժ անդամ	7-րդ
5	Քերոբյան	Անի	Մարգական և մշակութային հ/ժ անդամ	7-րդ
6	Մանուկյան	Բաֆֆի	Ուսումնադաստիարակչական հ/ժ անդամ	8-րդ
7	Հովհաննիսյան	Սվետլանա	Կարգապահական – իրավական հ/ժ անդամ	8-րդ
8	Մինասյան	Մանե	Ուսումնադաստիարակչական հ/ժ անդամ	9-րդ
9	Հարությունյան	Արսեն	Կարգապահական – իրավական հ/ժ անդամ	10-րդ
10	Մարգարյան	Մերի	Կարգապահական – իրավական հ/ժ անդամ	10-րդ
11	Գրիգորյան	Լիլիթ	Ուսումնադաստիարակչական հ/ժ անդամ	11-րդ
12	Հարությունյան	Շողեր	Մարգական և մշակութային հ/ժ անդամ	11-րդ
13	Բաբայան	Ստելլա	Ուսումնադաստիարակչական հ/ժ անդամ	12-րդ
14	Հարությունյան	Մերի	Ուսումնադաստիարակչական հ/ժ անդամ	12-րդ

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատության աշակերտական խորհուրդը, որպես դպրոցի աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմին, ձևավորվել է աշակերտական խորհրդի կանոնադրությանը համապատասխան. ա/ առաջադրվել է նախագահի 5 թեկնածու, ովքեր ներկայացրել են իրենց նախընտրական ծրագիրը, իրականացրել քարոզարշավ, բ/ Իրացվել է 6-12-րդ դասարանի սովորողների ազատ կամարտահայտման իրավունքը, գ/ Պատշաճ կարգով հրապարակվել են քվեարկության արդյունքները, կազմվել համապատասխան արձանագրություն:	Ուսհաստատության խորհրդակցական այլ մարմինների հետ համագործակցության ակտիվացում:
2	Ուսհաստատության աշակերտական խորհուրդն ունի իր հաստատված կանոնադրությանը, տարեկան աշխատանքային պլանը, ձևավորվել է 3 հանձնաժողով՝ ա/ մարգական և մշակութային, բ/ ուսումնադաստիարակչական, գ/ կարգապահական-իրավական:	Գործընկեր և հարևան համայնքների ուսհաստատությունների աշակերտական խորհուրդների հետ տարաբնույթ միջոցառումների կազմակերպում համատեղ աշխատանքի ակտիվացում:
3	Ուսհաստատության աշակերտական խորհրդի անդամները հիմնականում ակտիվ	Հանրակրթության վերաբերյալ հիմնարար փաստաթղթերի, նոր

	են, պատրաստ աջակցելու հարազատ դպրոցի խնդիրների լուծմանը:	չափորոշիչների ուսումնասիրում, աշակերտական խորհրդի հանձնաժողովների գործունեության ակտիվացում:
4	Ուսհաստատության աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին հանրակրթական դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին ներկայացրել է հետաքրքիր առաջարկություններ, փորձել իրականացնել դրանք: 1) 44-օրյա պատերազմի օրերին. ա/ պահպանիչ ցանցերի պատրաստում, բ/ զինվորների համար առաջին անհրաժեշտության ապրանքների հավաքագրում, ուղարկում, գ/ պատերազմի մասնակիցների հետ հանդիպումների կազմակերպում: 2) Ուսհաստատության այգու խնամում, մաքրում, բարեկարգում: 3) Ուսհաստատության բացօթյա մարզահրապարակի բարեկարգում, գծանշում: 4) Աջակցություն ռազմահայրենասիրական, գեղարվեստական միջոցառումների կազմակերպման գործընթացին: 5) Ի կատարումն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների օրենսդրական ապահովման և սոցիալական իրավահավասարության սկզբունքների, խորհրդի կազմում ազգային փոքրամասնությունների (ազգությամբ եզդի) և «ՍՈՍ Կոտայք» մանկական գյուղի սաների ընդգրկում:	
5	Ուսումնական պարապմունքների սկզբում և ավարտին ուսհաստատության	

աշխատակիցների, ծնողական խորհրդի, համայնքապետարանի աշխատակիցների հետ համատեղ դպրոցին հարող գլխավոր փողոցի անցումի մոտ հերթապահության իրականացում:	
---	--

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

1. Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.
2. Ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.
3. Հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.
4. Սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.
5. Սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանն օժանդակելը:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- 1) Հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.
- 2) սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը.
- 3) հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը.
- 4) երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅ» ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման Ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Աշակերտական խորհուրդը պարտավոր է հարգել ուսհաստատության սովորողների իրավունքները, հետևել նրանց կողմից պարտականությունների կատարմանը:	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ
2	Հանրայնացնել սովորողների ներքին կարգապահական կանոնները, պարբերաբար կազմակերպել քննարկումներ:	2023–2024 ուստարի /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, սովորողներ
3	Ապահովել սովորողի իրավունքների կատարումն ուսհաստատությունում, այն է՝ ա/ անվճար օգտվել ուսումնական հաստատության ուսումնականության բազայից, բ/ մասնակցել ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների, գ/ պաշտպանված լինել ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, դ/ ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները:	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ
4	Ուսհաստատության աշակերտական խորհուրդը սահմանված կարգով պետք է աջակցի տնօրենությանն՝ ա/ ծնողական խորհրդին սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, բ/ ուսհաստատության և ընտանիքի կապի ամրապնդմանը, գ/ դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի,	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ

	կարգապահության բարելավմանը, դ/ դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը:		
5	Աջակցել տնօրենությանը, դասղեկներին սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքում այդ թվում՝ ա/ աջակցություն ՀՊՄՀ այցելությանը, բ/ աջակցություն Աբովյան քաղաքի մասնագիտական ուսհաստատություններ այցելությանը, գ/ աջակցություն տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպմանը:	2023–2024 ուստարի /շարունակական/	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ
6	Աջակցել սովորողների նախասիրություններին և հետաքրքրություններին համահունչ միջոցառումների, այդ թվում՝ ա/ ՀՀ անկախության օրվան նվիրված, արդեն ավանդական դարձած Հատիս լեռան գագաթ վերելքի, բ/ Հայկ Մարգարյանի հիշատակին նվիրված վոլեյբոլի մարզային բաց առաջնության, գ/ գործընկեր ուսհաստատությունների սովորողների մասնակցությամբ «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղի, դ/ մարզական փնջային սպարտակիադայի, սպորտլանդիաների, ե/ համապետական, համայնքային, դպրոցական շաբաթօրյակների, ծառատունկերի, կազմակերպմանը, գ/ արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների, ե/ Հայրենական մեծ և արցախյան պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակն	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..) 2023–2024 ուստարի /շարունակական/ 2023–2024 ուստարի Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..) Հաշվետու	Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, զինղեկ, սովորողներ Գործընկեր ուսհաստատությունների տնօրենություն, աշակերտական խորհուրդներ, մանկավարժներ, սովորողներ Ուսհաստատության տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ,

	հավերժացնող հուշարձանի մաքրման, խնամքի և տարածքի բարեկարգման աշխատանքների, ը/ սովորողների հետաքրքրություններին համահունչ դասախոսությունների, սեմինարների, բանավեճերի կազմակերպմանը:	Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	սովորողներ Ուսումնական տարածքի, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ
7	Արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակներում աջակցել ուսումնական տարածքի տնօրենությանը իրավիճակից բխող միջոցառումների իրականացմանը:	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	Ուսումնական տարածքի, աշակերտական խորհուրդ, մանկավարժներ, սովորողներ
8	Համագործակցել ուսումնական տարածքի խորհրդակցական մարմինների հետ համադպրոցական ուսումնական տարածքի պատշաճ իրականացման նպատակով:	Հաշվետու Ժամանակա շրջան (2023–2028թթ..)	Ուսումնական տարածքի, ծնողական և աշակերտական խորհուրդներ, մանկավարժներ, սովորողներ

**«ՆՈՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ**

1. Ընտանիքից դպրոց նահապետական, կարծրատիպային, վնասակար սովորույթների ներմուծում:
2. Առանձին սովորողների մոտ նախաձեռնողականության, հանրային, հասարակական աշխատանքում ներգրավվածության ցանկության թույլ արտահայտվածություն կամ բացակայություն:
3. Տարաբնույթ կայքերում, սոցիալական ցանցերում սովորողների չափից ավելի ընկղմվածություն, հեռախոսային կախվածություն:

**«ՆՈՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵՂՍՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

1. Սովորողների նախասիրությունների, հետաքրքրությունների, ինտելեկտուալ կարողությունների լիարժեք բացահայտում, հանրային կյանքում աստիճանական ներգրավում, ինտեգրում:

2. Դպրոցական բազմաբնույթ միջոցառումներին սովորողներին ներգրավման միջոցով «ազատ», ձանձրալի ժամանակի խելամիտ լրում, նախաձեռնողականության, հասարական աշխատանքում ներգրավվածության ցանկության ակտիվացում, հեռախոսային կախվածությունից «ազատագրում»:

3. Սովորողներին դպրոցական, համայնքային ոչ ֆորմալ կրթության, տարաբնույթ խմբակներին ներգրավում, մասնագիտությունների հանդեպ հետաքրքրությունների խթանում, զարգացում:

1.5 «ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Մանկավարժական խորհուրդը ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին է: Մանկավարժական խորհուրդը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով:

(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»)

ՏՆՕՐԵՆԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴ

Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդե ճակատ,

անհա կատարյալ առաջնորդը:
Գարեգին Նժդեհ

«Միրելի հիմնարկությունը» բարեկարգ ուսումնարանի բարեփայլության աստիճանի հասցնող կարևոր և ներկայանալի դեմքը, իմ կարծիքով, տնօրենն է՝ **առաջնորդը**, իսկ դպրոցի ղեկավարումը՝ նրա **առաջնորդությունը**: Դպրոց ղեկավարելը այն պարզապես ղեկավարելը չէ, քանզի ղեկավարել, նույնիսկ՝ լավ ղեկավարել կարող է յուրաքանչյուրը, մինչդեռ **կառավարել** կարող են ոչ բոլորը:

Կառավարել նշանակում է՝

- կանխատեսել, բացատրել, հիմնավորել ուսումնական հաստատության զարգացման առանձնահատկությունները,
- սահմանել, հստակեցնել, պլանավորել ուսհաստատության հիմնարար նպատակները,
- լուծել ուսումնական հաստատության զարգացման ճանապարհին կանգնած հիմնախնդիրները,
- վերահսկել, գնահատել, կատարված աշխատանքը, ապահովել հետադարձ կապ,
- կազմակերպել, ընտրել լավագույն աշխատակազմ, ուղղորդել, համակարգել, հաշվետու լինել:

Առաջնորդության կարևոր բնութագրիչներն են նաև՝

- ուշադրության կառավարումը
- իմաստի կառավարումը
- վստահության կառավարումը
- ինքնակառավարումը:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգն այսօր հիմնարար, արմատական բարեփոխումների փուլում է և հենց այս իրադրությունում է, որ առավելագույնս կարևորվում է առաջնորդի գործունեությունը: Այս բոլոր բարեփոխումները առաջնորդ տնօրենը նախ պետք է անցկացնի իր՝ առաքյալի սրտի, իմաստասերի գլխի և աղամանդե ճակատի պրիզմայի միջով, որպեսզի աշխատակազմի հետ միասին այս ամենն իրականացնի իրեն վստահված «ճակատում», որովհետև, գաղտնիք չէ, որ արմատական փոփոխությունները

- ուսուցիչների մոտ առաջ են բերում բազում մտահոգություններ,
- անհանգստություն, անվստահություն սեփական ուժերի հանդեպ.
- ապագայի հանդեպ մշուշոտ պատկերացումներ.
- խուճապի մասնակի դրսևորումներ, ընդհուպ՝ բարեփոխումների մերժում:

Ուսուցչի հոգեբանական վիճակը մինչ բարեփոխումների բովանդակությունը հասկանալը

Բարեփոխումը

ՈՒՍՈՑԻՅՆ

ՈՒՍՈՑԻ ԽՈԳԵՐԱՆԱՍԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՍԿԱՆԱՂՈՑ ԽԵՏՈՒ

Ուսուցիչը

Բարեփոխումը

Ի թիվս բոլոր ուսումնական հաստատությունների, մենք՝ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժներս ևս անցանք և, պետք է ասել, պատվով հաղթահարեցինք այս շրջափուլին բնորոշ մասնակի անորոշության մթնոլորտը:

Ուսուցիչների բազում վերապատրաստումների, առաջնորդ տնօրենի կողմից դպրոցի ներդաշնակ կառավարման գործունեության արդյունքում մեր դպրոցում այսօր արդեն իսկ կարող ենք արձանագրել բարեփոխումների հիմնախնդիրների ընկալման վերաբերյալ հետևյալ պատկերը.

Մինչ փոփոխությունները	Փոփոխություններից հետո
Բարեփոխումների հանդեպ վստահության պակաս, որոշ իմաստով՝ անորոշություն	Բարեփոխումների սկզբունքային հիմնախնդիրների իմացություն, դրանք իրականացնելու պատրաստակամություն
Անհատական մտածողություն և գործելակերպ	Թիմային մտածողություն և գործելակերպ
Կենտրոնում ուսուցիչն է	Կենտրոնում սովորողն է
Գիտելիք	Կարողունակություններ և վերջնարդյունքներ
Վերահսկվող աշխատանք	Գիտակցական աշխատանք, պատասխանատվություն
Ղեկավարվող աշխատանք	Առաջնորդում
Մտահոգություն նեղ, սահմանափակ, դասարանական խնդիրների հանդեպ	Մտահոգություն զլորալ, համադպրոցական և արտադպրոցական խնդիրների հանդեպ

Տնօրենական իմ գործունեության փորձառության արդյունքում արդի մանկավարժության մեջ պայմանականորեն առանձնացնում եմ **առաջնորդ տնօրենի**

վարքագծի հետևյալ մակարդակները, որոնք բնութագրում են նրա զարգացումն ու աճը, առաջնորդ տնօրենի ձևավորման գործընթացը.

Առաջնորդ տնօրենի վարքագծի մակարդակը	Առաջնորդ տնօրենի վարքագծի բովանդակությունը
1-ին մակարդակ	Սրանք գտնում են, որ սովորեցնելը միայն ուսուցչի, իսկ դպրոց ղեկավարելը՝ միայն տնօրենի գործառույթն է:
2-րդ մակարդակ	Սրանք «հումանիստ» տնօրեններն են, ովքեր գտնում են, թե իրենց խնդիրը միայն ուսհաստատությունում բարենպաստ մթնոլորտի ձևավորումն է:
3-րդ մակարդակ	Սրանք գտնում են, որ տնօրենի գործառույթը ուսհաստատությունը միայն լավագույն կրթական ծրագրերին անդամակցելն է, իսկ սովորեցնելը, այնուամենայնիվ, միայն ուսուցչի գործառույթն է:
4-րդ մակարդակ	Սրանք էլ խնդիրներին միայն համակարգված լուծում տվող տնօրեններն են:

Առանձին վերցրած՝ բոլոր մակարդակներին պատկանող տնօրենի վարքագիծը թերի է և անկատար, մինչդեռ՝ **առաջնորդ տնօրենը, իմ կարծիքով**, որպես պարտադիր պայման, **պարտավոր է կրել բոլոր՝ չորս մակարդակներին բնորոշ վարքագծի նորմերը:**

Առաջնորդ տնօրենի գործունեության արդյունավետության հիմքը, կարծում եմ, նրա **աշխատանքի վերլուծության և անդրադարձի ինքնագնահատականն է**, ինչը խստորեն վերահսկում է տնօրենի վարքագիծն այսօր կրթության ոլորտի արմատական բարեփոխումների ներկա փուլում:

Իմ գործունեության վերլուծության և անդրադարձի արդյունքում կարևորագույն դասեր եմ քաղել, էական, արմատական տեղաշարժ արձանագրել նաև հենց իմ՝ տնօրենիս ղեկավարման և կառավարման գործընթացում, ձեռք բերել կառավարման կարևոր որակներ, ինչը ներկայացնում եմ .

1. Գործունեության հիմքում դնել հաշվարկված, իրատեսական ծրագրեր:

2. Աշխատակիցների միջև, ինչպես նշում էր հայտնի գրող և հրապարակախոս Սթիվեն Քովեյը, ձևավորել մարդկային մոտիվացիայի բարձրագույն ձև՝ լիակատար վստահության մթնոլորտ:

3. Համապատասխան գործընթացների, ընթացակարգերի համարձակ գործելակերպի ընտրություն, անդրադարձի կարողություն:

4. Միևնույն նպատակի շուրջ աշխատակազմի միավորում:

5. Պատասխանատվություն վերցնելու պատրաստակամություն:

6. Աշխատակիցների հետ արդյունավետ հաղորդակցվելու ունակություն:

Լուսանկար ԿԶՆԱԿ-ի վերապատրաստումներից
«Ընթերցանությունը տարրական դպրոցում» /ծրագիր /



Մանդակ

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կրթական արդի բարեփոխումների հանդեպ ուսուցիչների գործունեության աստիճանական փոփոխության (համաձայն մեր դիտարկումների).

Բարեփոխության մակարդակը	Ուսուցչի գործողությունը (արձագանքը) բարեփոխության հանդեպ	Բարեփոխումների բովանդակության աստիճանական աճ
1	Միմյանց հետ խոսում են շշուկով, անվստահ, հետաքրքրության սառնություն, անտարբերություն, հուզմունք 	Ուսուցչի առաջին արձագանքը բարեփոխումների վերաբերյալ
2	Մտքերի փոխանակություն, տպավորությունների կիսում 	Բարեփոխումների սկզբունքներին, ուսումնասիրում
3	Մասնակի ոգևորություն, աշխուժություն 	Բարեփոխման ներդրումը դպրոցում, գործարկման առաջին փորձ
4	Ցնցում 	Կրթական բարեփոխումների համալիր ուսուցում, կիրառում
5	Վախ, զգուշավորություն 	Նոր մեթոդների առաջին գործարկում, նոր մեթոդներով դասի վարում
6	Աշխատանքի հանդեպ գործունեության վերանայում, նոր մեթոդների և հիմնարար փաստաթղթերի հանդեպ հետաքրքրության աճ, պլանավորում	Բարեփոխումների կառուցվածքային փոփոխությունների ամբողջական փաթեթի ներդրում ուսումնական հաստատությունում

		
7	Մասնակցություն վերապատրաստումներին, բարեփոխումների հիմնարար սկզբունքների յուրացում, դրանց համահունչ նոր կրթական փաստաթղթերի կազմում, մշակում 	Ուսհաստատության կրթական համակարգի ամբողջական բարեփոխման, նոր ծրագրերի, հանրակրթության չափորոշիչի, կարողունակությունների և վերջնարդյունքների, գնահատման նոր համակարգի ներդրում

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Մանկխորհուրդը քննարկում է՝

1) հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան.

2) սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում.

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

4) ուսհաստատությունում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը:

«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մանկավարժական խորհուրդն իրականացնում է՝

- 1) հանրակրթական դպրոցում պետական քաղաքականության հարցեր,
- 2) մանկավարժական անձնակազմի պրակտիկայում, կրթության նորարարական նվաճումների ներդրում,
- 3) մանկավարժական առաջավոր փորձի ներդրում,
- 4) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման հարցերը:

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատության մանկավարժական խորհուրդը, համաձայն սահմանված կարգի, կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Պատշաճ կարգով իրականացվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների վարում:	Ուսհաստատության մանկավարժական խորհրդի նիստերում առանձին դեպքերում նկատելի է քննադատության, ինքնաքննադատության պակաս:
2	Մանկավարժական խորհուրդը հավանություն է տալիս՝ ա/ ուսումնական հաստատության զարգացման տարեկան ծրագրին, բ/ հաստատության տարեկան աշխատանքային պլանին, գ/ դպրոցի ներքին կարգապահական կանոններին, դ/ քննարկում է արտաքին գնահատման արդյունքները և տալիս իր եզրակացությունը, ե/ ուսումնական տարվա ավարտին մանկավարժական խորհուրդը գնահատում է ուսումնական	Առանձին դեպքերում պատշաճ վերաբերմունք չի ցուցաբերվում իրենց պարտականություններում թերացող ուսուցիչների հանդեպ:

	հաստատության գործունեության տարեկան արդյունքները, առաջարկներ է ներկայացնում դպրոցի ղեկավարությանը կրթական աշխատանքների որակի բարելավման նպատակով:	
3	Մանկավարժական խորհուրդը իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈԻ) սովորողների ուսուցման կազմակերպումը:	ՈԻսհաստատության մանկավարժական խորհրդի նիստերում, առանձին դեպքերում համակողմանի վերլուծություն չի իրականացվում համադպրոցական կարևորություն ներկայացնող հարցերի վերաբերյալ:
4	Մանկավարժական խորհրդի նիստերին սահմանված կարգով, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ:	
5	ՈԻստարվա ընթացքում հրավիրվում են 9-10 հերթական և արտահերթ նիստեր, քննարկվում են ինչպես սահմանված կարգով մանկավարժական խորհրդին վերապահված, այնպես և ուսհաստատության ուսումնադաստիարակչական կարևոր այլ հարցեր:	
6	ՈԻսհաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ 6-րդ տարին է, որ 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչ ժամաքանակի հաշվին ՀՀ ԿԳՄՍ նախարարության երաշխավորված առարկայացանկից ուսումնասիրվում է էներգիայի և ռեսուրսների օգտագործում և 3-րդ տարին՝ ձեռնարկատիրական կրթություն ուսումնական առարկաները:	
7	Ուսհաստատության մանկավարժական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկման նյութ է դառնում՝ ա/ մանկավարժական անձնակազմի պրակտիկայում կրթության նորարարական նվաճումների ներդրման, բ/ ուսուցման բովանդակության,	

	սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հարցերը, կատարվում անդրադարձ:	
8	Ուսհաստատության մանկավարժական խորհրդի նիստերն անցնում են ժողովրդավարության, բազմակարծության մթնոլորտում:	

**«ՆՈՐԳՑՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ
ՄԻՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

**ԱՊՐԻՐ ԱՅՆՊԵՍ, ԱՍԵՍ ՄԵՌՆԵԼՈՒ ԵՍ ՎԱՂԸ:
ՍՈՎՈՐԻՐ ԱՅՆՔԱՆ, ԱՍԵՍ ԱՊՐԵԼՈՒ ԵՍ ՀԱՎԻՏՅԱՆ:
ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ**

Մանկավարժական աշխատողներ	20	
Ուսուցիչներ	20	
Տարակարգ ստացած ուսուցիչներ	1	Լիլիթ Մուրադյան (սպասմություն և հասարակագիտություն)
Վերապատրաստված ուսուցիչներ	15	
Վերապատրաստման ենթակա ուսուցիչներ	5	

1.1 Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 տարիների կտրվածքով

Ցուցանիշը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	21	20	20	Նվազում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը (ժամ)	17 ժամ	17,5 ժամ	19 ժամ	Աճ

1.2 Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և

նախորդ 2 տարիների կտրվածքով

Ուսուցիչների թիվը	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	5	4	4	Նվազում
31-ից 40 տարեկան	4	5	5	Աճ
41-ից 50 տարեկան	5	5	5	Զի փոփոխվել
51-ից - 55 տարեկան	3	3	3	Զի փոփոխվել
56 տարեկան և ավելի	4	3	3	Նվազում

1.3 Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի

վերաբերյալ

Պաշտոնը	Ազգանունը, անունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակա հատվածը	Տվյալ հաստատու թյունում աշխատելու ժամանակա հատվածը	Ընդհանուր մանկավարժա կան ստաժը
Տնօրեն	Մելքոնյան Նարինե Համազասպի	5 տարի	5 տարի	23 տարի
Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ	Մուրադյան Խաժակ Վարդի	29 տարի	30 տարի	43 տարի
Զինղեկ	Քերոբյան Գրիգոր Մեսրոբի	29 տարի	29 տարի	29 տարի
Հաշվապահ	Մեսրոպյան Անի Գագիկի	11 տարի	11 տարի	11 տարի

«ՆՈՐԳՑՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ, ՆՐԱՆՑ
ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսուցչությունում դասավանդող 20 ուսուցչից 19-ն ունի բարձրագույն կրթություն:	Ուսուցչությունում դասավանդող 20 ուսուցչից 1-ն ունի միջնակարգ մասնագիտական կրթություն և հայտ է ներկայացրել կամավոր ատեստավորման:

2	ՈՒսհաստատությունում ուսումնական պլանով նախատեսված ուսումնական բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:	ՈՒսհաստատությունում երիտասարդ ուսուցիչների թվի ավելացմամբ պայմանավորված, տնօրենության, մեթոդիկավորման նախագահների և դրանց անդամների համար «Բացվել» է երիտասարդների հետ ամենօրյա մեթոդական աշխատանքի, աջակցության « Ճակատ»:
3	ՈՒսհաստատությունում սահմանված կարգով, թափանցիկ, արդար և հավասարության սկզբունքով ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթների կազմակերպում:	Առանձին ուսուցիչների կողմից կրթական բարեփոխումների սկզբունքների ոչ բավարար իմացություն:
4	ՈՒսհաստատությունում ուսուցիչ չլինելու պատճառով ուսումնական որևէ առարկա չդասավանդելու փաստ չի արձանագրվել:	ՈՒսհաստատությունում մանկավարժական նոր կադրերի, փոխարինող ուսուցիչների առկայությամբ պայմանավորված առանձին ուսուցիչների վերապատրաստման անհրաժեշտություն:
5	Միևնույն նպատակի շուրջ համակարգված, համագործակցային աշխատանք:	Տարակարգ ստանալու, կամավոր ատեստավորման մասնակցության դանդաղ կոտորության և անվճռականության առկայություն;
6	Տնօրենության կողմից ներդաշնակական վերահսկողության իրականացում, ուսուցիչների գործունեության մշտադիտարկում, հետադարձ կապի ապահովում:	ՈՒսհաստատությունում ՏՀՏ ռեսուրսների ոչ բավարար քանակով պայմանավորված ոչ լիարժեք աշխատանք:
7	Առարկայական, մեթոդամանկավարժական վերապատրաստումներում ուսուցիչների ներգրավում:	Մասնավորապես ավագ սերնդի մանկավարժների կողմից էլեկտրոնային հարթակների տիրապետման ցածր աստիճան:
8	Սահմանված կարգով ուսուցիչների ընդգրկում հերթական ատեստացիայի նպատակով վերապատրաստման դասընթացներում :	ՈՒսումնադաստիարակչական աշխատանքը Հանրակրթության Պետական նոր չափորոշչով իրականացնելիս առանձին ուսուցիչների կողմից մասնակի պասիվության, անվճռականության դրսևորումների առկայություն:
9	ՈՒսհաստատությունում խորհրդակցական մարմինների ներդաշնակ գործունեություն:	Առանձին ուսուցիչների կողմից ինքնազարգացմանը միտված մոտիվացիայի, անվստահության մասնակի առկայություն:
10	ՈՒսհաստատությունում	

	ժողովրդավարական կառավարման մոդելի իրականացում:	
11	Առանձնահատուկ կարևորություն ունեցող համադպրոցական խնդիրների վերաբերյալ որոշում կայացնելիս բոլոր կողմերի մասնակցության և կարծիքների ներկայացման պայամանների ապահովում:	
12	Կրթական ծրագրերին, ուսումնամեթոդական ռեսուրսներին ուսուցիչների հասանելիության ապահովում, ինքնագարգացման պայմանների ձևավորում:	
13	Արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակներում ուսուցիչների կողմից ուսուցման շարունակականությունն ապահովող ձևերի մշակում, տիրապետում:	
14	Ուսհաստատությունում մեթոդամանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և հանրայնացման պայմանների առկայություն:	
15	Ուսումնական բնագավառներում դասավանդող նախաձեռնող, բանիմաց, փորձառու ուսուցիչների առկայություն:	
16	Հանրակրթության Պետական չափորոշիչի ներդրման նպատակով համընդհանուր վերապատրաստմանը ողջ ուսուցչական անձնակազմի մասնակցություն:	
17	Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքում աշակերտակենտրոն, կարողունահենք կրթության առաջնայնության հռչակում, իրականացում:	
18	Դասավանդման ընթացքում ուսհաստատությունում առկա SՏՏ միջոցների կիրառում:	
19	Ուսհաստատությունում տարակարգ ունեցող ուսուցչի առկայություն(Լիլիթ Մուրադյան, պատմություն):	

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ
ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՈՒսհաստատությունում ուսուցիչների որակավորման բարձրացման, հանրակրթության հիմնարար փաստաթղթերի իմացության, դասավանդման բազմազան մեթոդների ամենօրյա կիրառության, ՏՀՏ միջոցներով դասապրոցեսի իրականացման, մրցունակ անկավարժական անձնակազմի ապահովում:

**ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Մշակել և իրականացնել ուսուցչի վարպետությանը, բազմակողմանի զարգացմանն ուղղված ծրագրեր:
2. Տնօրենության կողմից ուժեղացնել վերահսկողությունը դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Ստեղծել նպաստավոր պայմաններ ուսուցիչների կրթական մակարդակի բարձրացման, ստեղծագործական աշխատանքի իրականացման համար:
4. Մշակել և իրականացնել ուսուցիչների նախաձեռնողականության խրախուսման, մանկավարժամեթոդական ինքնակրթության զարգացմանն ուղղությամբ:
5. Մասնակցել ուսուցիչների կամավոր ատեստավորմանը տարակարգի ստացման գործընթացին:
6. Սկսնակ ուսուցիչների համար ստեղծել ինքնաարտահայտման, ակտիվ գործունեության մթնոլորտ:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Գործընկեր դպրոցների միացյալ մեթոդմիավորումների ձևավորում, մանկավարժական անձնակազմերի առաջավոր փորձի փոխանակում, համատեղ սեմինարների իրականացում:	(2023-2028թթ..)	Գործընկեր դպրոցների տնօրենություն
2	Ձևավորել բարենպաստ միջավայր ուսուցիչների կամավոր ատեստավորմանը և տարակարգի ստացման մասնակցության նպատակով:	(2023-2028թթ..)	ուսհաստատության տնօրենություն,
3	Մենթոր դպրոցների հետ համագործակցության ձևավորում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում:	(2023-2028թթ..)	Մենթոր դպրոցներ, ՈՒսհաստատության տնօրենություն,
4	ՈՒսհաստատությունում 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն, ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ) խթանում	(2023-2028թթ..)	ՈՒսհաստատության տնօրենություն,
5	ՈՒսհաստատությունում առկա կրթական ռեսուրսների բացահայտում, կառավարում:	(2023-2028թթ..)	ՈՒսհաստատության տնօրենություն,
6	ՈՒսհաստատությունում մասնագիտական ունակությունների զարգացման, բարելավություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն	(2023-2028թթ..)	ՈՒսհաստատության տնօրենություն,
7	Հասնել այն մակարդակին, որ ուսուցիչը կարողանա օգտվել հանրակրթության ոլորտի օրենսդրությունից՝ իր աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար. իր աշխատանքը կազմակերպել գործող կարգերին համապատասխան.մասնակցել կրթության	(2023-2028թթ..)	ՈՒսհաստատության տնօրենություն,

	ոլորտի օրենսդրության վերաբերյալ քննարկումներին արտահայտի սեփական կարծիքը, հիմնավորի:		
8	Ուսուցիչը հանդես գա մանկավարժական գործունեության նոր մոտեցումների մշակման և ներդրման առաջարկություններով, իրականացնի հետազոտական ակտիվ աշխատանք ինչպես սեփական, այնպես էլ մանկավարժական գործունեության բարելավման ուղղությամբ:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն,
9	Ուսհաստատությունում ստեղծել ուսուցիչների ստեղծած ուսումնադիդակտիկ նյութերի բազա, դրանք կիրառել դասալրացեսում:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն,
10	Պարբերաբար խրախուսել արդյունավետ աշխատանք ցուցաբերած ուսուցիչներին, նրանց ձեռքբերումները լուսաբանել դպրոցի կայքում:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն,
11	Զարգացնել ուսուցիչների համագործակցային աշխատանքը:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն,
12	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը համընդհանուր ներառական կրթությանը:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, Կոտայք ՏՄԱԿ
13	Ուսուցիչների մոտ զարգացնել իրականացնել հեռավար և հիբրիդ ուսուցման մեթոդիկան:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն,
14	Զարգացնել ուսուցչի ՏՀՏ գործիքներով արդիականացված դասավարդման կարողությունը:	(2023-2028թթ..)	Ուսհաստատության տնօրենություն, մենթոր դպրոցներ,

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԻՄԿԵՐԸ

1. Ուսհաստատությանում ուսուցիչական անձնակազմի սերնդափոխություն:
2. Ուսուցչի աշխատավարձի համընդհանուր բարձրացում, կամավոր ատեստավորման կամավորության սկզբունքի պահպանում:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՂՍՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Միջնակարգ մասնագիտական կրթությամբ մանկավարժների աշխատելու թույլտվության կարգի վերանայում, բազմամայա աշխատանքային ստաժի, ուսուցչի հեղինակության, համայնքի, ուսհաստատության կառավարման խորհրդի,

կառավարման մյուս մարմինների համապատասխան դրական բնութագրի առկայությամբ պայմանավորված աշխատելու թույլտվության շնորհում:

2. Ի թիվս ուսուցչի գործունեության գնահատման գործող եղանակների աշխատանքային ստաժով պայմանավորված վարձատրման կարգի ներմուծում:

1.6 «ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հանրակրթության պետական նոր չափորոշի ներդրմամբ մեծապես կարևորվում են տեղեկատվական միջոցների ներդրումն ու կիրառումը ուսումնադաստիարակչական ոլորտում:

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում ՏՀՏ միջոցների բազան սկզբնապես բավականաչափ թույլ էր, այն էապես զարգացավ վերջին հինգ տարիների ընթացքում, երբ դպրոցի տնօրենությունը խնդրին հաղորդեց ռազմավարական նշանակություն: Այսօր ուսհաստատությունում առկա են համակարգիչներ, պլանշետներ, 2 պրոյեկտորն, 3 նոթբուք/:

Ուսումնադաստիարակչական աշխատանքում այսօր հասանելի են **նորարարական՝**

1. ԿՏԱԿ (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) հիմնադրամը իր համակարգում ընդգրկված բաժիններով.
2. ԿՏԱԿ բլոգի յուրօրյան էջը՝ տեսադասերի, տեսահոլովակների պաշարով.
3. «Պաշարների շտեմարան» կրթական կայքը.
4. «Հայկական կրթական միջավայր» կայքը.
5. ԿԶՆԱԿ կայք.
6. Կրթական բազում այլ կայքեր, նորորարական բլոգներ և այլն:

Վարչական գործունեության իրականացման նպատակով օգտագործվում են՝

1. Emis. am կայքի բոլոր բաժինները, այդ թվում՝ էլեկտրոնային մատյանը.
Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը.
Առաջին դասարանի երեխաների հայտագրման համակարգը
2. Սովորողի ընդունելության, դպրոցից դպրոց տեղափոխման համակարգը.

3. Նոր՝ 2023–2024 ուստարվանից էլեկտրոնային տարիֆիկացիայի կազմման համակարգը.
4. Ավարտական վկայականների և ատեստատների բաշխման էլեկտրոնային համակարգը և նորարարական մի ողջ փաթեթ:

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատությունում Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի պահանջներին համապատասխան անհրաժեշտ ողջ գործառնություն, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների վերաբերյալ փաստաթղթերի ողջ փաթեթի վարում:	Ուսհաստատությունում համակարգիչների սակավություն, անբավարարություն:
2	Ուսհաստատությունում համակարգիչների առկայություն:	Ավագ սերնդի, նաև առանձին երիտասարդ ուսուցիչների կողմից ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետում:
3	Ուսուցիչների պարբերաբար մասնակցությունը ոլորի խնդիրների վերաբերյալ կազմակերպվող սեմինարներին, վեբինարներին:	Emis.am համակարգի իրականացման գործում մասնակի թերությունների առկայություն:
4	Տարաբնույթ կրթական կայքերի համաժամանակյա կիրառում:	Նոր՝ 2023–2024 ուսումնական տարում Emis.am համակարգի գործունեության փոփոխություններով պայմանավորված մասնակի խնդիրների առաջացում:
5	Նոր՝ 2023–2024 ուստարվանից «Արմաթ» լաբորատորիայի ներդրումը ուսհաստատությունում:	Ուսհաստատությունում էլեկտրոնային գրատախտակի, արդի ՏՀՏ բազմազան միջոցների բացակայություն
6	Zoom, Teams հարթակների տիրապետում, կիրառում:	Ուսհաստատության գրադարանում ՏՀՏ միջոցների սակավություն, գրադարանային ֆոնդի թվայնացման բացակայություն:
7	Emis.am համակարգի ամբողջությամբ կիրառում, սովորողների գնահատման, թեմաների գրանցման, հաճախումների հաշվառման իրականացում:	Շենքային անհարմարության, դասասենյակների անբավարարության պատճառով ՏՀՏ միջոցների կիրառման ոչ բավարար արդյունավետություն, դասասենյակներում դրանց բացակայություն::
8	Էլեկտրոնային տարիֆիկացիայի կազմում:	

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Ուսումնադաստիարակչական խնդիրների լիարժեք իրականացման նպատակով որպես առաջնահերթություն սահմանել ուսհաստատությունը ՏՀՏ միջոցներով հարստացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսհաստատությունում հնարավորինս դասապրոցեսն իրականացնել ՏՀՏ միջոցների կիրառմամբ:

2. Զարգացնել կրթության կառավարման էլեկտրոնային ողջ համակարգը կրթական պահանջներին համապատասխան:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետ	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Ուսհաստատությունն ապահովել համացանցային լիարժեք ծածկույթով:	2023–2024 ուստարի	Տնօրենություն, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
2	Զանքեր ներդնել ուսհաստատությունը ՏՀՏ բավարար միջոցներով, մասնավորապես՝ էլեկտրոնային գրատախտակով, պրոյեկտորներով, համակարգիչներով, այլ միջոցներով ապահովելու համար:	2023–2028թթ..	Տնօրենություն, կառավարման խորհուրդ
3	Ուսումնադաստիարակչական լիարժեք գործունեության իրականացման նպատակով մի քանի համակարգիչներ տեղադրել նաև դասասենյակներում:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն
4	ԿԶՆԱԿ հիմնադրամի բոլոր բաժինների լիակատար հասանելիության ապահովում:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն էլեկտրոնային կառավարման և դասավանդման

			ապահովման մասնագետ
5	Միասնական տեղեկատվական համակարգի լիակատար ներդրում:	2023–2024 ուստարի	Տնօրենություն Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
6	Գրադարանային ֆոնդի թվայնացում:	2023–2028թթ. .	Տնօրենություն Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
7	Ուսնաստատության կրթական գործունեության միջավայրի թվայնացում:	2023–2028թթ. .	Տնօրենություն Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
8	SՀS գործիքակազմի կիրառմամբ սովորողների նախագծային աշխատանքների իրականացում:	2023–2024 ուստարի /շարունակակ ան /	Տնօրենություն, ուսուցիչներ, սովորողներ
9	Ուսուցիչների SՀS իմացության մակարդակի ուսումնասիրություն, ըստ անհրաժեշտության վերապատրաստումների, դասընթացների անցկացում:	2023–2024 ուստարի /շարունակա կան /	Տնօրենություն, ինֆորմատիկայի ուսուցիչ, Էլ. կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ
10	Մեղիագրագիտությանն ուղղված միջոցառումների, հանդիպումների անցկացում:	2023–2024 ուստարի /շարունակա կան /	Տնօրենություն, ԹԳՀԳ ուսուցիչ, Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ոլորտին առնչվող մասնագետներ
11	Արմաթ ինժեներական լաբորատորիայի ներդրում, ռոբոտաշինության, ծրագրավորման ուսուցման աշխատանքների, դասընթացների սկսում, ակտիվացում:	2023–2024 ուստարի /շարունակա կան /	Տնօրենություն, ԹԳՀԳ ուսուցիչ, Էլ.կառավարման և դասավանդման

			ապահովման մասնագետ, ոլորտին առնչվող մասնագետներ
12	Emis.am համակարգի իրականացման գործում թերությունների լիարժեք շտկում:	2023–2024 ուստարի /շարունակա կան /	Տնօրենություն, Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ոլորտին առնչվող մասնագետներ
13	Պաշարների շտեմարան, Դասագրքերի շրջանառու հիմնարամ, Հայկական կրթական միջավայր հարթակներում տվյալների մշտական թարմացում:	2023–2024 ուստարի /շարունակա կան /	Տնօրենություն, ԹԳՀԳ ուսուցիչ, Էլ.կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, ոլորտին առնչվող մասնագետներ

**ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՌԻՍԿԵՐԸ**

1. Էլեկտրաէներգիայի պարբերաբար խափանումների համայնքային խնդրի առկայություն, ինչն անդրադառնում է նաև ուսհաստատության գործունեությանը:
2. Ավագ սերնդի, նաև առանձին երիտասարդ ուսուցիչների կողմից ՏՀՏ միջոցների ոչ լիարժեք տիրապետում:
3. Շենքային անհարմարության, դասասենյակների անբավարարության պատճառով ՏՀՏ միջոցների կիրառման ոչ բավարար արդյունավետություն,
4. Ուսուցիչների համար ՏՀՏ միջոցների գործիքակազմի ուսուցանման նպատակով նոր դասընթացների կազմակերպման անհրաժեշտություն:
5. Ուսհաստատության համակարգչային կաբինետի թողունակության սակավ հնարավորություն :

**ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԵՂՍՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

1. Ուսհաստատությունում ՏՀՏ միջոցների ձեռքբերման հարցում տնօրենության պատրաստակամություն:
2. Էլեկտրաէներգիայի պարբերաբար խափանումների համայնքային խնդրի բարձրաձայնում, պատկան մարմինների կողմից դրա կարգավորման ուղղությամբ արդեն իսկ վճռական քայլերի իրականացում:
3. Տեղեկատվական արդի դարաշրջանի, հանրակրթության նոր չափորոշիչի պահանջներով պայմանավորված, առանձին ուսուցիչների ՏՀՏ միջոցներից օգտվելու կարողություն:
4. Ուսումնական գործընթացում ուսուցիչների կողմից ՏՀՏ միջոցների կիրառման նկատելի աճ:
5. Ուսհաստատությունում ուսուցչի ինքնակրթության, սովորողների նախագծային աշխատանքի պահանջով պայմանավորված ՏՀՏ միջոցների հանդեպ հետաքրքրության նկատելի աճ:

**1.7 «ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ
ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնադաստիարակչական աշխատանքի գնահատման գրավականը ուսհաստատության կրթության չափորոշչային պահանջների լիարժեք կատարումն է, կրթության որակի բարձրացումը, իսկ դրա լավագույն միջոցը ներդպրոցական վերահսկողության համակարգի լիարժեք իրականացումն է, արդյունքների վերլուծությունը, այս ամենի հիման վրա առաջնահերթությունների սահմանումը:

Ներդպրոցական վերահսկողության նպատակը դպրոցում՝

ա/ ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն ստացումն է,

բ/ առաջացող խնդիրների լուծման նպատակով ժամանակին անհրաժեշտ փոփոխությունների կատարումն է:

Ներդպրոցական վերահսկողության փաթեթի մաս են կազմում՝

1. առարկայի ծրագրի կատարողականի պարբերական ստուգումը,
2. դասվանդվող առարկաների արդյունքների վերահսկողությունը,
3. սովորողների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողությունը, հմտությունների և կարողությունների տիրապետումը, ինքնուրույն սովորելու կարողությունը.
4. ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման ժամանակ ուսուցիչներին անհրաժեշտ մեթոդամանկավարժական օգնության տրամադրումը:

Ներդպրոցական վերահսկողության, սովորողների առաջաջադիմության ստուգումն անպատակով տրվում են՝


- ա/ հայտորոշիչ թեստեր,
- բ/ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ,
- գ/ առարկայական շաբաթներ,
- դ/ դասալսումներ և այլն:

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ուսհաստատության համադպրոցական տարեկան աշխատանքային պլանին համապատասխան վերահսկողության նպատակային ձևերի ընտրությամբ իրականացվում է անհրաժեշտ ուսումնասիրություն, ինչի հիման վրա էլ կազմվում է ուսումնական բնագավառների, առանձին առարկաների, ուսուցիչների և, այս ամենի հիման վրա՝ ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, առաջադիմության և որակի ընդհանուր բնութագիրը:

Ստորև ներկայացվող վերլուծության հիմքում 2018–2023թթ.. միջակայքում ընկած ուսումնական տարիներին արված վերահսկողության տվյալներն են, ցուցիչները, որի հիման վրա էլ իրականացվել է ներքոհիշյալ վերլուծությունը:


	2018–2019 ուստարի	2019–2020 ուստարի	2020–2021 ուստարի	2021–2022 ուստարի	2022–2023 ուստարի
Ընդհանուր առաջադիմությունը	100 %	100 %	100 %	100 %	100 %
Առաջադիմությունն ըստ ուսման որակի	68 %	70 %	74 %	71 %	75 %

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ 2018–2023 ԹԹ. ՄԻՋԱԿԱՅՔՈՒՄ ԸՆԿԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ**




Շրջանավարտներ՝ 16 բուհ ընդունվող՝ 7 (կամ սովորողների 43 -% ը)	Առարկայական օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցներ 4 սովորող
---	--

2021–2022 ուստարի




2022–2023 ուստարի

Շրջանավարտներ՝ 11 բուհ ընդունվող՝ 5 (կամ սովորողների 45 % ը)	Առարկայական օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցներ 3 սովորող
---	---



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2020–2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ


Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Քիմիա	45 %
2	Կենսաբանություն	47 %
3	Ֆիզիկա	58 %
4	Ինֆորմատիկա	70 %
5	Աշխարհագրություն	50 %
6	Մաթեմատիկա	65 %
7	Հանրահաշիվ	70 %
9	Երկրաչափություն	65 %



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ

2020–2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ


Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Մայրենի	82 %
2	Հայոց լեզու	77 %
3	Գրականություն	72 %
4	Պատմություն	78 %



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

2020–2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ


Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Ռուսաց լեզու	58 %
2	Անգլերեն	52 %



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ

ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2021–2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ


Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Քիմիա	40 %
2	Կենսաբանություն	55 %
3	Ֆիզիկա	55 %
4	Ինֆորմատիկա	65 %
5	Աշխարհագրություն	58 %
6	Մաթեմատիկա	65 %
7	Հանրահաշիվ	60 %
9	Երկրաչափություն	62 %



ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ


2021–2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Մայրենի	80 %
2	Հայոց լեզու	75 %
3	Գրականություն	70 %
4	Պատմություն	81 %




**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ
2021–2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ**

Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Ռուսաց լեզու	58 %
2	Անգլերեն	55 %




**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՏՃՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ 2022–2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ**

Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Քիմիա	41 %
2	Կենսաբանություն	58 %
3	Ֆիզիկա	53 %
4	Ինֆորմատիկա	66 %
5	Աշխարհագրություն	60 %
6	Մաթեմատիկա	66 %
7	Հանրահաշիվ	61 %
9	Երկրաչափություն	60 %




**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ
2022–2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ**

Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Մայրենի	81 %
2	Հայոց լեզու	74 %
3	Գրականություն	69 %
4	Պատմություն	80 %



**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ
2022–2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ**

Հ/հ	Ուսումնական առարկաները	Առաջադիմությունը
1	Ռուսաց լեզու	59 %
2	Անգլերեն	58 %



Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ իրականացման ուղղվածություն:	Առանձին ուսուցիչների մոտ ՀՀ Հանրակրթության Պետական նոր չափորոշի լիարժեք իմացության բացակայություն:
2	Հանրակրթական պետական նոր՝ կարողունահենք չափորոշի իրականացմանը միտված աշխատանք:	Առանձին ուսուցիչների մոտ ուսումնադաստիարակչական գործընթացը հին, անարդյունավետ մեթոդներով վարելու ցանկություն:
3	Ուսհաստատությունում ներդպրոցական վերահսկողության բազմաթիվ ձևերի ներդրմամբ լիարժեք իրականացում:	Բուհերը նոր ավարտած երիտասարդ մնակավարժների գործունեության մեջ նորարարության, առաջավոր մեթոդներով դասի վարման մասնակի դժվարություն:
4	Ուսումնադաստիարակչական գործունեության հստակ, իրական, չափելի տարեկան նպատակների սահմանում, աստիճանաբար իրականացում, վերլուծություն:	Ուսհաստատությունում նյութատեխնիկական բազայի (լաբորատոր սարքավորումներ, համակարգիչներ, պրոյեկտորներ, դիդակտիկ տարբեր միջոցներ) սակավություն:
5	Ուսհաստատության ուսումնադաստիարակչական համադպրոցական տարեկան պլանի կազմման հիմքում նախորդ տարիների կատարված աշխատանքի արդյունքների համակողմանի վերլուծություն:	Առանձին ուսուցիչների կոմից SՀS և ուսումնական արդի միջոցներով դասի վարման դժվարություն:
6	Մեթոդամանկավարժական աշխատանքում առաջավոր փորձի, արդի մեթոդների ներդրում:	Ուսհաստատության շենքային պայմանների անկատարություն, դրանով պայմանավորված՝ լիարժեք գործունեության իրականացման մասնակի դժվարություն:
7	Առարկայական թեմատիկ պլանների չափորոշային պահանջներին համապատասխանություն:	
8	Կրթության նորագույն ձևերի խրախուսում, կիրառում:	
9	Մեթոդիավորման նիստերում առարկայական հիմնախնդիրների անաչառ և բազմակողմանի քննարկում, թերությունների բացահայտում, վերհանում:	

10	Ուսհաստատությունում առկա նյութատեխնիկական բազայի կիրառում, նոր ռեսուրսների հայթայթման ուղղությամբ տարվող աշխատանքի ակտիվացում:	
11	Ուսուցչական անձնակազմի մեթոդամանակավարժական գործունեության աստիճանական աճ:	
12	Վերապատրաստման ամենատարբեր դասընթացներում ուսուցչական անձնակազմի ընդգրկվածության ընդլայնում:	
13	Ուսումնադաստիարակչական գործունեության ընթացքում գնահատման բազմազան ձևերի կիրառում:	
14	Ուսհաստատությունում ուսուցչի աշխատանքի և գործունեության արդյունքների մոնիթորինգ, վերլուծություն:	

ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուսհաստատության շենքային պայմանների բարելավում, ուսումնադաստիարակչական աշխատանքում Հանրակրթության Պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունների և կարողունակությունների ձևավորում, համընդհանուր ներառականության ապահովում:

ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Առարկայական օլիմպիադաներին մասնակցության ներգրավվածության ընդլայնում:

2. Սովորողների նախասիրությունների համախառնախմբի առարկայական բազմաբովանդակ խմբակների ձևավորում, դրանցում սովորողների ներգրավվածության ապահովում:

3. Սովորողների նախապիրությունների համախառնասխան ուսհաստատության 7-րդ դասարանում ուսումնական նախագծային աշխատանքների իրականացում, հետազոտական գործունեության խրախուսում:
4. Երկարօրյա պարապմունքների ներդնում, դրանցում սահմանված կարգով ցածր առաջադիմությամբ սովորողների ներգրավում, առաջադիմության բարելավում:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ- ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ
ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Ուսհաստատությունում 2023–2024 ուստարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքի իրականացման վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ուղեցույցին մյուս դասարաններում օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան կրթական գործունեության իրականացում:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ
2	Ուսհաստատության ուսումնադաստիարակչական համադպրոցական աշխատանքի տարեկան պլանի հիմքում առկա խնդիրների և հիմնահարցերի ընդգրկում:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն
3	Ուսհաստատության հիմնախնդիրները սահմանելիս առաջնորդվել ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի առկա, իրականվիճակով, աշխատել այն բարելավելու և հարստացնելու ուղղությամբ:	2023–2028 թթ..	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ
4	Ուսհաստատությունում առարկայական խմբակներ ձևավորելիս և նախագծային աշխատանք իրականացնելիս	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ, ուսուցիչներ

	առաջնորդվել սովորողների նախասիրություններով և նյութատեխնիկական փաստացի բազայի առկայությամբ:		
5	Ուսհաստատությունում ուտարվա ընթացքում ցածր առաջադիմություն ցուցաբերած և ԿԱՊԿՈՒ սովորողներին ընդգրկել երկարօրյա խմբերում: Իրականացնել սովորողների հաճախումների և առաջադիմության ամենօրյա մոնիթորինգ:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն,
6	Ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքում սովորողի նախասիրությունների բացահայտման, նպատակով ուսուցչական անձնակազմի, ըստ դպրոցի աստիճանների՝ սովորողների, և ծնողների շրջանում պարբերական հարցումների կազմակերպում:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ
7	Նոր՝ 2023–2024 ուսումնական տարում ուսումնասիրել էլեկտրոնային մատյանում ներդրված փոփոխությունները, դրանք պարզաբանել սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին:	2023–2024 ուստարի, օգոստոս– հոկտեմբեր	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ
8	Ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքում մշտապես աշխատել սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը, կազմակերպել շարադրությունների մրցույթներ, բանավեճեր, գեղեցիկ, հայեցի խոսքի զարգացման այլ միջոցներ:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ, ուսուցիչներ
9	Ուսումնասիրել գնահատման արդի սկզբունքները, նոր՝ 2023–2024 ուստարում 2-րդ դասարանում ներդնել ձևավորող և ըստ բնութագրիչների բնութագրման համակարգը:	2023–2024 ուստարի	Տնօրենություն, մեթոդախաղորդումներ, ուսուցիչներ
10	Սովորողների առաջադիմության	2023–2024	Տնօրենություն,

	գնահատման ձևերի բազմազանության կիրառում:	ուստարի /շարունակական /	մեթոդմիավորումներ, ուսուցիչներ
11	Ուսումնադաստիարակչական աշխատանքում ՀՊԶ-ով սահմանված 8 կարողունակությունների զարգացմանը միտված մեթոդամանակավարժական աշխատանք:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ
12	Գործընկեր դպրոցների սովորողների հետ կազմակերպել ինտելեկտուալ միջոցառումներ, միացյալ, միջդպրոցական նախագծային աշխատանքներ, ուսուցչական անձնակազմերի հետ՝ ինտեգրված դասեր, ձևավորել միջդպրոցական մեթոդմիավորումներ, կազմակերպել առարկայական «Փոքր» օլիմպիադաներ:	2023–2028 թթ.. /շարունակական /	Գործընկեր դպրոցների տնօրենություն, մեթոդմիավորումներ, ուսուցիչներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ
13	Սահմանված կարգով իրականացնել ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքի գնահատում, ապահովել անհրաժեշտ փաստաթղթավարությունը:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն
14	Շարունակել արտադասարանական աշխատանքը:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն
15	Շարունակել ուսումնադաստիարակչական աշխատանքը սովորողների ազատ կամարտահայտության, աշակերտական և ծնողական խորհուրդների գործունեության զարգացման ուղղությամբ:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, ծնողական և աշակերտական խորհուրդներ
16	Շարունակել աշխատանքը սովորողների ռազմամարզական դաստիարակության ուղղությամբ, կազմակերպել արդեն իսկ ավանդույթ դարձած սպարտակիադաներ, օլիմպիադաներ, միջդպրոցական հուշամրցաշարեր:	2023–2024 ուստարի /շարունակական /	Տնօրենություն, զինղեկ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ

ՀԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ

1. Հանրային միջավայրում հակասոցիալական վարքի դրսևումների աճ, դրանցում սովորողների ընդգրկվածության իրական վտանգ:
2. Վերջին շրջանում սոցիալական անարդարության դրսևորումների նկատելի աճ:
3. Արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակներ:
4. Հասարակության մեջ ուսուցչի աշխատանքի արժեքման պակաս:

ՄԵՂՄՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Ուսուցման բազմազան ձևերի կիրառում:
2. Ուսուցչի բարեվարքության կանոնների կիրառում

1.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

(ՀՀի օրենքը հանրակրթության մասին, հոդված 4, 2. 1)

Ժողովրդավարության հիմքը մասնակցային մշակույթն է, սակայն դրա ձևավորումն անհնար է առանց անհրաժեշտ կոմպետենցիաների, որոնք փոխկապակցված են համապատասխան հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հետ: Իսկ բազմակարծությունը ժողովրդավարական ամենակարևոր հատկություններից մեկն է, այն ենթադրում է բազմազանության ճանաչում, երկխոսության խթանումը, ինչպես նաև ներառումը, հարգանքը և հանդուրժողականությունը միմյանց նկատմամբ:

(«Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», Մասնակցային դպրոց)

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորումը ռազմավարական խնդիր է, այն ուսումնադաստիարակչական աշխատանքի գործունեության հիմնաքարն է:

Այս կարևորագույն հիմնախնդրի լուծման գործում անգնահատելի դեր ունի **ԿԱՐԴՈՂՈՒՆԱՇԵՆՔ** կրթությունը, որովհետև հենց կարողունակությունների ձևավորման արդյունքում է դրվում այս սկզբունքի հիմքը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կարողունակությունները ձևավորվում են բուն դասապրոցեստում, ուստի, հատկապես, ՀՊԶ–ի վերապատրաստումների դասընթացներին մասնակցելուց հետո ուսուցիչները դասավանդման հիմքում դնում են կարողունակությունների ձևավորումը. ա/ Աշխատանքը պլանավորում են նոր ՀՊԶ–ի պահանջներին համապատասխան, բ/ վարում են հետաքրքիր, արդյունավետ դասեր, գ/ դասապրոցեստում կիրառում են դպրոցում առկա ՏՀՏ միջոցները և դիդակտիկ նյութերը, դ/ կիրառում դասավանդման բազմազան մեթոդներ: Ուսհաստատության խորհրդակցական մարմինների (մանկավարժական, մեթոդական, ծնողական, աշակերտական խորհուրդներ) գործունեության հիմքում ևս նշված ակզբունքն է:	Առանձին ուսուցիչների կողմից սովորողների գնահատման գործընթացում գնահատականը որպես պատժի կամ խրախուսման միջոց հին, անարդյունավետ, դատապարտելի մեթոդի անհարկի գործածություն:
Խորհրդակցական մարմինների որոշումները կայացվում են բազմակարծության, ներառականության և մասնակցային սկզբունքներին համապատասխան:	ԿԱՊԿՈՒ սովորողների համար ոչ լիարժեք, անարդյունավետ հարմարեցումների առկայություն:
Տնօրենությունն ու ուսուցչական համակազմը ուսհաստատությունում ստեղծել է փոխօգնության, համակեցության միջավայր հավատարիմ « Սա իմ դպրոցն է, այստեղ ես տանն եմ» կարգախոսին:	Առանձին դեպքերում դասղեկների, ծնողների կողմից միջոցառումների կազմակերպման ընթացքում ձևականության, պասիվության դրսևորում:
Ուսհաստատությունում պայմաններ են ստեղծված ԿԱՊԿ ունեցող սովորողների համար, Կազմվել է ԱՈւՊ, համապատասխան շենքային հարմարեցումներ, այդ թվում՝	Կարողունակությունների լիարժեք ձևավորման գործընթացում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեք առկայություն կամ բացակայություն,

թեքահարթակ:	մասնավորապես՝ ա/ նյութատեխնիկական բազայի անբավարարություն, բ/ հրաձգարանի բացակայություն, գ/ լաբորատորիաների անհրաժեշտ սարքավորումներով և դիդակտիկ նյութերով հագեցվածություն, դ/ SՀS բավարար միջոցների պակաս:
Յուրաքանչյուր սովորող շրջապատված է հոգատարությամբ, կատարվում է կարիքի գնահատում:	Առանձին ուսուցիչների կողմից հին, ավանդական մեթոդներով դասի վարման գայթակղություն:
Ուսուցչական համակարգի ամենօրյա աշխատանքի արդյունքում բուլինգի, բռնության դեպքեր չեն արձանագրվել:	Առանձին ուսուցիչների, ծնողների և սովորողների կողմից բազմակարծության, ներառականության և մասնակցային միջավայրի հիմնական սկզբունքների ոչ լիարժեք գիտակցում:
Ուսհաստատությունում հարգվում, պահպանվում են ազգային փոքրամասնությունների՝ եզդիների իրավունքներն ու ազգային սովորույթները, նրանք, ի թիվս մյուս սովորողների, ներառված են համադպրոցական միջավայրում, նրանք մեզանից մեկն են, աշակերտական ինքնավարության մարմնի ակտիվ անդամները:	Առանձին ուսուցիչների կողմից սովորողներին պիտակավորելու դեպքերի արձանագրում:
Ուսհաստատությունում սովորում են «ՄՈՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համակարգում գտնվող «ՄՈՍ Կոտայք» կազմակերպության բազմաթիվ սաներ, ովքեր ինտեգրված, ներառված են դպրոցական մեծ ընտանիքին, ներգրավված աշակերտական ինքնավարության մարմնում:	Սովորողների ինքնակառավարման դասարանական և դպրոցական մարմնի՝ աշակերտական խորհուրդների կազմում առկա են անդեմ, պասիվ սովորողներ:
Կարևորելով սովորողների արժեքային համակարգի ձևավորումը՝ ուսհաստատությունում շոշափելի աշխատանք է կատարվում ազգային, պետական, եկեղեցական տոների կազմակերպման, ռազմահայրենասիրական միջոցառումների ուղղությամբ. ա/ շքամուտքի արևելյան կողմում ստեղծվել է հուշապատ, մուտքի մոտ կառուցվել	

հուշադրյուր, կազմակերպվում է ամենամյա վոլեյբոլի հուշամրցաշար 44-օրյա պատերազմում զոհված Հայկ Մարգարյանի հիշատակին, բ/ Հայրենական և Արցախյան պատերազմներում զոհված համազրուդացիների հուշարջանի և խաչքարի մոտ կազմակերպվում են համադպրոցական հայրենասիրական միջոցառումներ, ծաղկեղրման արարողություն, գ/ ՈՒսհաստատության սաները սիրով են մասնակցում համապետական, համայնքային և համադպրոցական շաբաթօրյակներին, ծառատունկերին, բնապահպանական միջոցառումներին:	
ՈՒսհաստատությունում սովորողների և ուսուցչական համակազմի համար ձևավորվել է անվտանգ միջավայր:	
ՈՒսհաստատությունում ձևավորվել է ուսուցիչ– ուսուցիչ, սովորող–սովորող, ուսուցիչ–սովորող, ուսուցիչ–տնօրեն, ուսուցիչ համայնք լիակատար փոխընթերցման և համագործակցության մթնոլորտ:	
ՈՒսհաստատությունում միջանձնային հարաբերությունները կառուցված են հումանիզմի, փոխօգնության և մարդկային ջերմ հարաբերությունների հիման վրա:	
ՈՒսուցչական համակազմի բարոյահոգեբանական գործունեության հիմքում ուսուցչի բարեվարքության կանոններն են:	
ՈՒսհաստատությունում ուսուցչական համակազմի բազմակարծության, ներառականության և մասնակցային սկզբունքների ձևավորման համատեքստում զգալի աշխատանք է կատարվում հանրակրթական չափորոշչային հիմնարար կարողունակությունների արմատավորման ուղղությամբ, մասնավորապես, որպեսզի սովորողները կարողանան՝ ա/ բանավոր և գրավոր ձևերով ճանաչեն ըմբռնեն, արտահայտեն, ստեղծեն և	

մեկնաբանեն տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր, բ/ ինքնակազմակերպվեն, իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրեն, վերլուծեն, կիրառեն ստեղծագործական ու նորարար մոտեցումներ, գ/ դրսևորեն հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: դ/ գիտակցեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:	
--	--

«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ուսհաստատության ուսումնադաստիարակչական գործունեությունը դնել կարողունակությունների հենքի վրա բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորում:
2. Մարդու կյանքն ու արժանապատվությունը կարևորող, սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք համարող սերնդի ձևավորում:
3. Հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտները ճանաչող ու համակողմանի վերլուծող նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և

հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն ցուցաբերող քաղաքացու ձևավորում:

4. Ուսհաստատությունում ձևավորել հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- 1. Ուսհաստատության ուսումնադաստիարակչական գործունեության հիմքում Հանրակրթության Պետական Չափորոշչով սահմանված կարողունակությունների գերակայության արմատավորում:
- 2. Ուսհաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքը վերաձևավորել վերջնարդյունքներով պայմանավորված կարողունակությունների հենքի վրա:
- 3. Ուսհաստատությունում սերմանել քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Ուսհաստատությունում 2023–2024 ուստարում 2–րդ, 5– րդ և 7–րդ դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքի իրականացման վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ուղեցույցին մյուս	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, մեթոդավորումներ, ուսուցիչներ

	դասարաններում օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան կրթական գործունեության իրականացում:		
2	Ուսհաստատության ուսումնադաստիարակչական համադպրոցական աշխատանքի, խորհրդակցական մարմինների գործունեության, տարեկան աշխատանքային պլանների հիմքում բազմակարծիք, ներառական եվ մասնակցային արժեքային միջավայրի բարելավմանը միտված հիմնահարցերի ընդգրկում:	2023–2024 ուստարի, սեպտեմբեր /շարունակական/	Տնօրենություն, մանկխորհուրդ, ծնողխորհուրդ, աշխորհուրդ
3	Մանկավարժական համակազմի, ծնողների, սովորողների շրջանում կազմակերպել մշտադիտարկում ուսհաստատությունում բռնության դեպքերի բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:	2023–2028թթ..	Տնօրենություն, դասղեկներ, ծնողխորհուրդ
4	Ուսհաստատությունում բռնության դեպքերի բացառման նպատակով կազմակերպել սեմինարներ, քննարկումներ բռնության դեպքերը բացառելու նպատակով:	2023–2024 ուսումնական տարի /շարունակական/	Տնօրենություն, դասղեկներ, ուսուցիչներ
5	Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացում որդեգրել ուսուցիչների, սովորողների իրավունքների պաշտպանության, հանդուրժողականության քաղաքականության իրագործումը: Դպրոց հրավիրել Ոստիկանության Կոտայքի բաժնի անչափահասների տեսչության դպրոցին կցված աշխատակցին անցկացնելու զրույցներ:	2023–2024 ուսումնական տարի նոյեմբեր /շարունակական/	Տնօրենություն, կառավարման խորհուրդ, Ոստիկանության Կոտայքի բաժին
6.	Ուսհաստատությունում սահմանված կարգով ԿԱՊԿՈՒ սովորողների համար իրականացնել ինելամիտ հարմարեցումներ, կազմակերպել զրույց-սեմինարներ բռնության, բուլինգի վերաբերյալ:	2023–2024 ուսումնական տարի /շարունակական/	Տնօրենություն դասղեկներ, ՏՄԱԿ Կոտայք
7.	Ուսումնադաստիարակչական	2023–2028 թթ..	Տնօրենություն

	աշխատանքում գերակա և առաջնային շահ ճանաչել մարդու՝ մանկավարժական աշխատողների և սովորողի իրավունքները:		դաստեղներ
8	Մանկավարժների բարելավաբարության, սովորողների իրավունքների և պարտականությունների անվերապահ իրականացման ապահովում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, կառավարման խորհուրդ
9	Ուսհաստատությունում զերծ մնալ սովորողներին պիտակավորելու, գնահատման համակարգը պատժի կամ խրախուսման միջոց կիրառելու իրողությունից:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, մանկավարժական համակազմ
10	Մերմանել հարգանք ազգային, պետական հոգևոր տոների հանդեպ, շարունակել դրանց պատշաճ նշումը:	2023–2028 թթ..	Տնօրենություն, մանկավարժական համակազմ
11	Ձևավորել հարգանք ազգային և պետական խորհրդանիշների հանդեպ:	2023–2028 թթ..	Տնօրենություն, մանկավարժական համակազմ
12	Ուսհաստատության կառավարման մարմիններում ժողովրդավարության ընդլայնում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, կառավարման խորհուրդ
13	Աշակերտական ինքնակառավարման մարմնի գործունեության ակտիվացում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, աշակերտական խորհուրդ
14	ՀՀ հանրակրթության վերաբերյալ օրենքների առավելագույնս հանրայնացում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, մանկավարժական համակազմ
15	Ավանդական կարծրատիպերի հաղթահարման նպատակով բանավեճերի, մտքերի փոխանակության երկխոսությունների կազմակերպում:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, մեթոդափավորումներ
16	Մոցիալական հարաբերություններում սովորողների կառուցողական և համերաշխ գործելու, ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտությունների զարգացման նպատակով շարունակել արդեն ավանդական դարձած այցելությունները Աբովյան քաղաքի առաջին ատյանի դատարան:	2023–2024 ուստարի /շարունակական/	Տնօրենություն, հասարակագիտության ուսուցիչ

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ՍՈՍ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍՈՍ
ԿՈՏԱՅՔ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ավելի քան 30 տարի է, ինչ գործընկերային և փոխհամագործակցային հարաբերություններ է հաստատել հարևանությամբ գործող «ՍՈՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի «ՍՈՍ Կոտայք» հաստատության հետ, ինչը գնալով ամրապնդվում և խորանում է: Տարիներ ի վեր այդ հաստատության մի քանի տասնյակ սաները հաճախում են նաև մեր դպրոց:

Տակավին 2000-ական թվականներին «Աջակցություն Կոտայք և Նորգյուղ համայնքների ուսումնական հաստատություններին» ծրագրի շրջանակում երկու դպրոցների ուսուցիչների, ծնողների և սովորողների համար իրականացված ծրագիրը ներառել է կրթական, չափորոշչային և բազում այլ վերապատրաստումներ և սեմինարներ: Այս համագործակցությունը տվեց իր դրական արդյունքը: Այսօր էլ կամակերպվում են համատեղ ռազմամարզական, մշակութային միջոցառումներ, ինչն ավելի է մերձեցնում մանկավարժների և ընտանեկան մոդելով առաջնորդվող հաստատության աշխատակիցների, «ՍՈՍ» հաստատության և մեր դպրոցի սաների միջև փոխհամագործակցությունը, ինչը երկու ուսհաստատությունների միջև ձևավորված ներառականության և մասնակցային մշակույթի հիանալի օրինակ է:

**«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

1. Ուսհաստատության ուսումնադաստիարակչական գործունեությունը կարողունակությունների հենքի վրա բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորում:

2. Մարդու կյանքն ու արժանապատվությունը կարևորող, սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք համարող սերնդի ձևավորում:

3. Հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտները ճանաչող ու համակողմանի վերլուծող նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն ցուցաբերող քաղաքացու ձևավորում:

«ՆՈՐԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսհաստատության ուսումնադաստիարակչական գործունեության հիմքում Հանրակրթության Պետական Չափորոշչով սահմանված կարողունակությունների գերակայության արմատավորում:

2. Ուսհաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքը վերաձևավորել վերջնարդյունքներով պայմանավորված կարողունակությանների հենքի վրա:

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ՌԻՍԿԵՐԸ

1. Մանկավարժների կողմից բարեվարքության, սովորողների իրավունքների և պարտականությունների ոչ լիարժեք կատարում»:

2. Առանձին դեպքերում ուսհաստատությունում սովորողներին պիտակավորելու, գնահատման համակարգը պատժի կամ խրախուսման միջոց կիրառելու փաստերի դրսևորում:

3. Ուսհաստատության շենքային պայմաններով պայմանավորված ԿԱՊԿՈՒ սովորողների համար ոչ լիարժեք հարմարեցումների իրականացում:

4. Արտադպրոցական բարքերի ներթափանցում:

ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ՄԵՂՍՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Նշված խնդրի իրականացման գործում ուսհաստատության տնօրենության, ուսուցչական համակազմի, խորհրդակցական մարմինների վճռականություն և հաստատականություն:
2. Ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսումը, սովորողների նախաձեռնողականությունը, բազմակարծությունը, ներառականությունն ու մասնակցային գործելակերպը խթանող աշխատանքի ակտիվացում:
3. Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի մշտադիտարկում, ծագած խնդիրների վերհանում, լուծում:

1.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Միայն նա կարող է կրթել ու դաստիարակել ուրիշներին, ով մշտապես զբաղվում է

ինքնակրթությամբ ու ինքնադաստիարակությամբ»:

Դիստերվեզ

Աշխատակազմի արժևորումը չափազանց կարևոր է ոչ միայն և ոչ այնքան ուսհաստատության ուսուցչական համակազմի գիտելիքային, ուսումնամեթոդական, բարոյահոգեբանական պաշարը գնահատելու, այլև, առավելապես, այդ ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական նպատակների, չափելի և իրատեսական խնդիրների առաջադրման տեսանկյունից: Աշխատակազմի տարիների ընթացքում տնօրենի և վարչակազմի իրականացված մշտադիտարկման, աշխատանքի արդյունքների վերլուծության, ուսուցչի գործունեության վերաբերյալ գործընկերների, ծնողական և աշակերտական համայնքի, վերապատրաստող կազմակերպությունների կողմից տրված գնահատականի և ուսուցչի կարողությունների, հնարավորությունների,

շարունակական ինքնակրթության հենքի վրա է սահմանվում ուսհաստատության առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները:

Մանկավարժական համակազմի գիտելիքային պաշարը, ուսումնամեթոդական կարողության, բարոյագոգեբանական պատրաստվածության մակարդակն ու ուսուցչի հեղինակությունն ուղիղ համեմատական է համադպրոցական ծրագրերի, նպատակների ու պլանավորված աշխատանքի իրատեսությանն ու իրականացման հնարավորությանը:

Մեր աշխատանքում հենց այս սկզբունքով էլ առաջնորդվում ենք:

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Ուսհաստատությունում ներդպրոցական վերահսկողության շրջանակում իրականացվում է ուսուցչի գործունեության բազմակողմանի ուսումնասիրություն և աշխատանքի վերլուծություն:	Առանձին ուսուցիչներ խուսափում են վերապատրաստումների մասնակցությունից՝ պատճառաբանելով ընտանեկան զբաղվածությունը, հոգսաշատ առօրյան և տանը համակարգչի բացակայությունը:
2	Ուսհաստատությունում տիրում է փոխհամաձայնության, գործընկերային և աշխատանքային մթնոլորտ:	Ուսհաստատությունում առանձին ուսուցիչներ խուսափում են տարակարգի ստացման և կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցելուց:
3	Ուսհաստատությունում տնօրեն– ուսուցիչ հարաբերությունում հարգվում է կողմերի ինքնասիրությունն ու արժանապատվությունը:	Ներդպրոցական վերահսկողության բարդությամբ և շարունակականությամբ պայմանավորված երիտասարդ, սկսնակ ուսուցիչների գործունեության համակողմանի վերլուծությունը ամբողջական փաթեթով տակավին առկա չէ:
4	Ուսհաստատությունում խրախուսվում է ուսուցչի նախաձեռնողականությունը, մասնակցայնությունն ու ներառականությունը:	
5	Տնօրենության կողմից պարբերաբար իրականացվում է ուսուցչի գործունեության գնահատում, ինչն արվում է էթիկայի և բարեվարքության կանոնների պահպանմամբ՝ չնսեմացնելով ուսուցչի արժանապատվությունը:	
6	Ուսհաստատությունում ուսուցչի	

	աշխատանքի արդյունավետության բարձրացման նկատառումով ձևավորվել է բարեկիրթ աշխատանքային մթնոլորտ:	
7	Ուսհաստատությունում տնօրենության կողմից արվում է ամենը չխաթարելու ուսուցչի հեղինակությունն ու վարկը:	
8	Ուսհաստատությունում խրախուսվում է ուսուցչի ստեղծագործական ունակությունների, ակադեմիական գիտելիքների հարստացման ջանքերը, գնահատվում արժանվույն:	
9	Ուսհաստատությունում առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները սահմանվում են ուսուցչի գործունեության վերաբերյալ գործընկերների, ծնողական և աշակերտական համայնքի, վերապատրաստող կազմակերպությունների կողմից տրված գնահատականի և ուսուցչի կարողությունների, հնարավորությունների, շարունակական ինքնակրթության հենքի վրա:	
10	Աշխատակազմի արժևորումը տնօրենության գործունեության հիմնաքարն է, քանզի այն ուսհաստատության արդյունավետ աշխատանքի գրավականն է:	
11	Տնօրենությունը խրախուսում է մանկավարժական, մեթոդիկավորման նիստերում ուսուցչի ներկայացրած աշխատանքային փորձի, մեթոդական աշխատանքի վերլուծության վերաբերյալ մեթոդական զեկուցումներն ու ընթերցումները:	
12	Ուսհաստատության կառավարումն իրականացվում է ժողովրդավարության սկզբունքներին համաձայն:	

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

1. Ուսհաստատությունում ուսուցչի գործունեության վերահսկման և գնահատման տարեկան ժամանակացույցի հստակեցում, դրանում երիտասարդ, սկսնակ ուսուցիչների ընդգրկում:
2. Ուսուցչի աշխատանքի արժևորման արդյունավետ գործիքների կիրառում:
3. Վերապատրաստման դասընթացներին, կամավոր ատեստավորման և տարակարգի ստացման գործընթացում ուսուցիչների ընդգրկում:
4. Ուսուցչի ինքնակրթության մոտիվացիայի ձևավորում:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ**

1. Ուսուցչի ինքնակրթությունը համարել նրա աշխատանքի գնահատման կարևոր նախադրյալ:
2. Ուսհաստատությունում ՏՀՏ միջոցների բավարար պաշարի ձեռքբերում,, ուսուցչի ինքնակրթության պայմանների ստեղծում::
3. Ուսուցչի աշխատանքի արժևորման կարևոր նախապայման սահմանել նրա ՏՀՏ միջոցներին տիրապետումը, մեթոդամանակավարժական կարողությունների շարունակական զարգացումը:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/հ	Միջոցառումը	Կատարման ժամկետը	Պատասխանատուները
1	Ուսհաստատությունում ստեղծել ուսուցչի ինքնակրթության համար բավարար պայմաններ և երաշխիքներ, մասնավորապես՝ Էլեկտրոնային հարթակների, գրադարանի ուսումնամեթոդական գրականության հասանելիություն:	2023–2024 ուստարի, /շարունակական/	Տնօրենություն, մեթոդավարումներ, գրադարանավար

2	Ուսհաստատությունում ուսուցչի ինքնակրթության համար ստեղծել դրա փաստացի կիրառման հնարավորություն, մասնավորապես՝ հնարավորություն տալ և պայմաններ ստեղծել հետազոտական աշխատանք իրականացնելու համար, այդ թվում՝ ա/ իրականացնել նորարարական մեթոդների փորձարկում, բ/ մանկավարժական և մեթոդափափորման նիստերում պարբերաբար հանդես գալ դասախոսություններով, զեկուցումներով, ընթերցումներով, իրականացրած աշխատանքի վերաբերյալ հաշվետվությամբ, գ/ կազմակերպել դասեր SՀS միջոցների, դիդակտիկ նյութերի կիրառմամբ, քննարկել:	2023–2024 ուստարի, շարունակական	Տնօրենություն, մեթոդափափորումներ
3	Խրախուսվել ուսուցչին մանկավարժական գործունեության բնագավառում նորարարական մեթոդներ և միջոցներ մշակելու, օգտագործելու և ներդնելու համար, շնորհել պատվոգրեր, հանրայնացնել, ներկայացնել:	2023–2028 թթ., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, պետական լիազորված մարմին
4	Հրավիրել գործընկեր ուսհաստատությունների մեթոդափափորման միացյալ նիստեր, տարածել առաջավոր փորձը, վերլուծել:	2023–2024 ուստարի, /շարունակական/	Գործընկեր ուսհաստատությունների տնօրենություն, մեթոդափափորումներ
5	Հարգել ուսուցչի կարգավիճակը ուսհաստատությունում, ինչը բնորոշվում է մանկավարժական աշխատանքի պայմաններով և բնույթով, ներառում է նրա իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև դրանց իրականացման երաշխիքները: (ՀՀ օրենքն ուսուցչի կարգավիճակի մասին):	2023–2028 թթ., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, ուսհաստատության կառավարման մարմիններ
6	Ուսհաստատության ուսուցիչներին հնարավորություն ընձեռել մասնակցելու վերապատրաստող, մենթոր ուսուցչի վերապատրաստման դասընթացներին, նոր	2023–2024 ուստարի, /շարունակական/	Տնօրենություն

	հեղինակային ծրագրերի, դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների մշակման աշխատանքներին:		
7	Զերծ մնալ ուսհաստատությունում ուղղակի, քողարկված և (կամ) անուղղակի խտրականության, անձնական կամ հասարակական բնույթի հանգամանքներով կամ այլ պայմաններով պայմանավորված ուսուցչի իրավունքների կամ արտոնությունների տրամադրման սահմանափակման գործողություններից (ՀՀ օրենքն ուսուցչի կարգավիճակի մասին):	2023–2028 թթ..., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, ուսհաստատության կառավարման մարմիններ
8	Ուսհաստատությունում ներդպրոցական վերահսկողության շրջանակում վերահսկել ուսուցչի դասավանդման մատչելիությունը, գիտականությունը, գիտակցականությունը, ակտիվությունը, դիտողականությունը, գիտելիքների կայունությունը, միջառարկայական կապերի ապահովումը, սակայն մասնագիտական գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ոչ մի կերպ չսահմանափակել ուսուցչի ստեղծագործական նախաձեռնողականությունն ու ազատությունը:	2023–2024 ուստարի, /շարունակական/	Տնօրենություն, մեթոդմիավորումներ
9	Ըստ անհրաժեշտության, սահմանված կարգով անարդյունավետ աշխատանք ցուցաբերող ուսուցչին որակավորումը բարձրացնելու նպատակով ներկայացնել վաղաժամկետ ատեստավորման:	2023–2028 թթ..., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, մեթոդմիավորումներ
10	Ուսհաստատությունում ապահովել ուսուցչի անվտանգությունը, լիարժեք աշխատանքը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը:	2023–2024 ուստարի, /շարունակական/	Տնօրենություն
11	Ուսհաստատությունում օրենքով սահմանված կարգով ապահովել ուսհաստատության կառավարմանը ուսուցչի մասնակցության իրավունքը:	2023–2028 թթ..., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, ուսհաստատության կառավարման մարմիններ
12	Ուսհաստատությունում օրենքով	2023–2028 թթ...,	Տնօրենություն,

	սահմանված կարգով արգելել սովորողների ծնողների չփաստարկված միջամտությունը ուսուցչի մասնագիտական պարտականությունների շրջանակներին առնչվող հարցերին, ինչը հանիրավի կարող է սպառնալ ուսուցչի վարկին և հեղինակությանը:	հաշվետու ժամանակաշրջան	ուհաստատության կառավարման մարմիններ
13	Ուսհաստատությունում ուսուցչի աշխատանքի վարձատրությունը և պաշտոնային դրույքաչափը վճարել աշխատանքային պայմանագրով նախատեսված իր գործառնական պարտականությունների և լրացուցիչ ծանրաբեռնվածության կատարման համաձայն:	2023–2028 թթ., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, գլխավոր հաշվապահ
14	Ուսհաստատությունում ապահովել ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը, ուսուցչի և սովորողի իրավունքների և ազատությունների, ազգային ավանդույթների, սովորույթների, ֆիզիկական վիճակի նկատմամբ հարգալից վերաբերմունքը:	2023–2028 թթ., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, մեթոդմիավորումներ կառավարման մարմիններ
15	Ուսհաստատությունում օրենքով սահմանված կարգով ուսուցչին արգելել 15.1. անցկացնելու աղանդավորական, կրոնական կամ հակակրոնական քարոզչություն. 15.2. կազմակերպել քաղաքական խմբեր և կուսակցություններ. 15.3. տարածել ազգայնամոլական, ռազմատենչ գաղափարներ. 15.4. աշակերտներին ներգրավել գործադուլային շարժումներին և քաղաքական ակցիաներին. 15.5. բռնություն գործադրել սովորողների նկատմամբ:	2023–2028 թթ., հաշվետու ժամանակաշրջան	Տնօրենություն, ուհաստատության կառավարման մարմիններ

ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԻՍԿԵՐԸ

1. Ուսհաստատությունում ֆինանսական միջոցների սահմանափակ հնարավորություններով պայմանավորված ուսուցչի խրախուսման նպատակով հավելավճարների պարբերաբար տրման անհնարինություն:
2. Ծնողների և սովորողների շրջանում ուսուցչի մասնագիտական և մեթոդամանկավարժական կարողությունների հանդեպ ոչ ճիշտ, այսրոպեական պատկերացում, ինչը հաճախ չի համապատասխանում ուսուցչի իրական նկարագրին:
3. Ուսհաստատությունում, հատկապես սկսնակ, անփորձ ուսուցիչների կողմից ուսուցման և դաստիարակության, սովորողի իրավունքների և ազատությունների, ֆիզիկական վիճակի նկատմամբ հարգալից վերաբերմունքի պակաս, անձնական շարժառիթներով առաջնորդվելու հակում:
4. Ուսուցիչների կողմից զանազան պատճառաբանությամբ (ժամանակի սակավություն, փոքր երեխա, ընտանեկան խնդիրներ) ինքնակրթությամբ զբաղվելուց խուսափում:
5. Առանձին ուսուցիչների (հատկապես ավագ սերնդի) կողմից ՏՀՏ միջոցներին չտիրապետելու կամ մասամբ տիրապետելու իրողություն:

ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԵՂՄՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

1. Ուսհաստատության տնօրենի, տնօրենության ուսումնադաստիարակչական աշխատանքի սահմանված ուղուն հավատարմություն, հետևողականություն, մինչև վերջ, անշեղ իրականացնելու պատրաստակամության:
2. Ուսհաստատության տնօրենի, տնօրենության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հիմնախնդիրների համակարգում, դրանք ՀՀ հանրակրթության վերաբերյալ օրենսդրությամբ լուծելու վճռականություն:
3. Ուսհաստատությունում օրենքով սահմանված կարգով ուսուցչի կողմից աղանդավորական, կրոնական կամ հակակրոնական քարոզչության

իրականացման, քաղաքական խմբերի և կուսակցությունների կազմակերպման, ազգայնամոլական, ռազմատենչ գաղափարների տարածման, սովորողներին գործադուլային շարժումներին և քաղաքական ակցիաներին ներգրավելու, սովորողների նկատմամբ բռնություն գործադրման լիակատար արգելքի սահմանում::

4. Ուսուցչի աշխատանքի գնահատման գործընթացում նրա արժանապատվության, ինքնասիրության, մասնագիտական պաշարի աստիճանի ոտնահարման բացառում:

5. Ուսհաստատությունում օրենքով սահմանված կարգով ուսուցչի խրախուսման մեխանիզմի առկայություն:

6. Առաջավոր մեթոդամանկավարժական փորձի փոխանակման նպատակով գործընկեր ուսհաստատությունների գործունեության համակարգում:

7. Ուսհաստատությունում ուսուցչի անվտանգության, աշխատանքային բավարար ծանրաբեռնվածության ապահովում:

8. Ուսհաստատությունում օրենքով սահմանված կարգով ուսհաստատության կառավարմանը ուսուցչի մասնակցության իրավունքի իրացում:

1.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Կրթությանն ուղղված ֆինանսական միջոցները ոչ թե պարզապես ծախս են, այլ անհրաժեշտ ներդրում պետության և հասարակության զարգացման համար:

(Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, ընդունված՝ 16. 11. 2022 թ)

Ինչպես արդեն վերը նշվել է, ակնհայտ է, որ ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական խնդիրների լիարժեք իրականացման համար հույժ կարևոր է ուսումնական ենթակառուցվածքների ապահովումը, և, նախ և առաջ, ուսումնական հաստատության շենքային բարվոք պայմանների առկայությունը:

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունն ստանձնելու պես հասկացա, որ իմ գործունեության առաջնահերթությունը հաստատության շենքային պայմանների հնարավորինս բարելավումն է, քանի որ դպրոցի մասնաշենքը գտնվում էր բարոյապես և ֆիզիկապես ոչ բարվոք և անմխիթար վիճակում, և առաջնահերթությունների սահմանման համար անհրաժեշտ էր դրանց ուղղությամբ հրատապ քայլեր ձեռնարկել: Հանրակրթական դպրոցները ֆինանսավորվել են պետբյուջեի միջոցներից՝ ըստ աշակերտների թվի /2023թվականի սեպտեմբերի 1-ից գործում է նոր կարգը/, Նորգյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը չէր կարող հնարավորություն տալ մեծածավալ շինաշխատանքներ իրականացնել միայն դպրոցի խնայողությունների հաշվին, ուստի այդ նպատակով պլանավորվեցին համագործակցային ծրագրեր Կոտայքի մարզպետարանի, Ակունքի համայնքապետարանի հետ, որոնք էլ իրականություն դարձան նախորդ հինգ տարիների ընթացքում:

Կատարվեց շինարարական-վերանորոգչական մեծածավալ աշխատանք, ինչն էապես բարելավեց իրավիճակը, և 2018-2023 թվականներին իրականացված շինարարական-վերանորոգչական գործունեությունն ու ըստ այդմ կատարված ծախսերը գնահատում եմ արդարացված:

Սակայն ուսհաստատության շենքային սահմանափակ հնարավորությունները ի գործու չեն ապահովելու հուսալի, անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած ուսումնադաստիարակչական գործունեություն:

Հատկանշական է, որ 2023 թվականին **«Մինչև 2026 թվականը 300 դպրոցի նորոգման, կառուցման և վերակառուցման» ՀՀ Կառավարության ծրագրի** շրջանակում ներառվել է նաև մեր ուսհաստատությունը և նախատեսվում է կառուցել կրթական բոլոր կարիքները բավարարող կրթահամալիր:

Հետևաբար, իրավիճակին համահունչ, արմատապես փոխվել է նաև գործունեության ռազմավարությունը.

ա/ պահել, պահպանել արդեն իսկ արվածը,

բ/ աննպատակահարմար համարել շինարարական և վերանորոգչական մեր

հետագա ջանքերի շարունակումը և չպլանավորել մեծ ծախսեր պահանջող աշխատանքներ,

դ/ հնարավորության սահմաններում միջոցներն ուղղել SՀS միջոցների
/ էլեկտրոնային, շարժական գրատախակներ, նոր սերնդի համակարգիչներ և
այլն/ ձեռքբերմանը,

զ/ ուսհաստատությունում բոլոր ջանքերը կենտրոնացնել
ուսումնադաստիարակչական աշխատանքի, կրթության որակի բարձրացման
ուղղությամբ:

Յուրաքանչյուր տարվա դպրոցի բյուջեի նախագիծը կազմելիս,
կանոնադրության պահանջին համապատասխան, այն քննարկվում է
հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական
խորհուրդներում, լսվում են առաջարկներ, որից հետո միայն խորհրդի
հավանությամբ ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը: Հաշվապահի
կողմից վարվող փաստաթղթավորումը տեղի է ունենում ժամանակին և գործող
կարգերին համապատասխան: Ֆինանսատնտեսական եռամսյա
հաշվետվությունները, հաստիքացուցակը, նախահաշիվը հրապարակվում են
հաստատության պաշտոնական կայքէջում՝ ըստ կարգի:

Հարկ է նշել, որ շենքային պայմանների բարելավման, ուսհաստատությունում
մանկավարժական համակազմի բարոյահոգեբանական դրական մթնոլորտի
ձևավորման արդյունքում վերջին 5 տարիների ընթացքում էապես աճել է
սովորողների թվակազմը /աղյուսակ 1/, ինչով պայմանավորված՝
ֆինանսատնտեսական վիճակը լավացել է՝ հնարավորություն տալով ունենալ
տնտեսված միջոցներ և հաջորդ ֆինանսական տարի մուտք գործել առանց
պարտքերի /աղյուսակ 2/:

Ընդհանուր տեղեկություններ աշակերտների շարժի վերաբերյալ ընթացիկ և նախորդ 5 տարիների համար.

աղյուսակ 1

Ցուցանիշը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Սովորողների ընդհանուր թիվը սեպտեմբերի 1-ի դրությամբ	198	207	217	230	243	251
Սովորողների ընդհանուր թիվը հունվարի 1-ի դրությամբ	201	210	224	228	243	
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների ընդհանուր թիվը	10	8	56	21	16	
Ուսումնական տարվա ընթացքում տեղափոխված սովորողների ընդհանուր թիվը	8	3	54	20	20	
Փոփոխությունների դինամիկան	աճ	աճ	աճ	նվազում	աճ	աճ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

1. Աղյուսակում ներառված չէ տվյալ ուսումնական տարվա 1-ին և 12-րդ դասարանների սովորողների թվակազմը:
2. 2020-2021 ուսումնական տարվա սովորողների դինամիկայի կտրուկ տատանումը պայմանավորված է 44-օրյա պատերազմի ժամանակ ԼՂ-ից տեղափոխված սովորողների շարժով:

Ստորև ներկայացվում է մեր ուսումնական հաստատությունում սովորողների շարժի հաշվառման վերաբերյալ նախորդ՝ 2022-2023 ամփոփիչ աղյուսակը որպես օրինակելի նմուշ /հավելված 1/:

2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Ընդհանուր տեղեկություններ 2018-2023 թվականների ընթացքում վերը նշված շինարարական աշխատանքների մասին.

աղյուսակ 2

Տարեթիվը	Կատարված աշխատանքը	Ծախսը
2018թ.	1.Վերանորոգվել է դպրոցի ցանկապատի գլխավոր հատվածը: 2. Դպրոցի շքամուտքը քանդվել է ամբողջությամբ և կառուցվել նորովի, մուտքի հատակը պատվել է լիցքով, սալիկապատվել բազալտե սալհատակով, կառուցվել է թեքահարթակ, տեղադրվել է երկթեք թիթեղյա տանիք: 3. Վերանորոգվել է մուտքը միջանցքի պատերի հետ միասին: 4. Լիցք է արվել և սալիկապատվել է ուսումնական մասնաշենքի 1-ին հարկի արևելյան և արևմտյան հատվածների հատակը: 5. Նորովի կառուցվել են մարզադահլիճի արտաքին պատերը, տեղադրվել են մետաղապլաստե երկփեղկ դռներ: 6. Մասնակի վերանորոգվել է մարզադահլիճը: 7. Կատարվել են աստիճանների և աստիճանահարթակների ամրացման աշխատանքներ, սալիկապատվել են աստիճանահարթակները, տեղադրվել են մետաղապլաստե 2 արտաքին պատուհաններ:	5 038 017
2019թ.	1. 12 դասասենյակի փայտե դռները փոխարինվել են մետաղապլաստե դռներով: 2. Հիմնանորոգվել և մասամբ կահավորվել է 3 դասասենյակ: 3. Ուսումնական մասնաշենքն ամբողջությամբ ապահովվել է էլեկտրամատակարարմամբ և լուսավորության լամպերով, սնուցող սարքերով: 4. Տարհանման անմխիթար դուռը փոխարինվել է մետաղապլաստե երկփեղկ դռներով: 5. Հիմնանորոգվել և համապատասխան կահույքով և անհրաժեշտ պարագաներով /սառնարան, գազօջախ,	2 735 634

	լվացարան, օդափոխության համակարգ, սեղաններ, աթոռներ, սպասք/ համալրվել է դպրոցի նորաբաց ճաշարանը, գազաֆիկացվել է, անցկացվել է ջրմուղ կոյուղու ցանցաշարանիս կից հիմնանորոգվել է մթերքի պահեստային սենյակը, տեղադրվել է մետաղյա դուռ: 6. Դպրոցը համալրվել է համակարգիչներով, նոթբուքով, երաժշտական կենտրոնով, սնուցող սարքերով, բավարար կերպով ապահովվել է ինտերնետային կապով: 7. Ստեղծվել և որոշակիորեն կահավորվել է դպրոցի պահակակետը: 8. Մասնակիորեն թարմացվել է միջոցառումների սրահը, մեթոդ կաբինետը, կահավորվել է համապատասխան աթոռներով, վարագույրներով և շերտավարագույրներով: 9. Դպրոցի մարզադաշտի տարածքը մշակվել-բարեկարգվել է, շրջակայքում կատարվել են թարմացման ու մաքրման աշխատանքներ, հեռացվել է դրսի սանիտարահիգիենիկ նորմերին չհամապատասխանող սանհանգույցը, անցկացվել է ռոտգման համակարգ, կատարվել է ծառատունկ:	
2020թ.	1. Դպրոցի փայտե դռներն ու պատուհանները փոխարինվել մետաղապլաստե դռներով ու պատուհաններով:	3 388 101
2021թ.	1. Հիմնանորոգվել է դպրոցի տանիքը:	5 533 988
	2. Կատարվել են գազասպառման կետերի ձևափոխման աշխատանքներ:	914 221
2022թ.	1. Կատարվել են`	
	1. լոկալ ջեռուցման տեղադրման աշխատանքներ,	8 976 000
	2. երեք դասասենյակների վերանորոգման աշխատանքներ,	2 199 000
	3. ճաշարանի վերանորոգման աշխատանքներ:	950 000

2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՏԱՅՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ

ԾԱԽՍԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Ընդհանուր տեղեկություններ 2018-2023 թվականների ընթացքում ստացված եկամուտների և կատարված ծախսերի մասին.

աղյուսակ 3

Բնութագրիչը	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Եկամուտներ, որից՝	43 371 600	45 980 400	56 100 000	56 508 900	51 731 600
Ծախսեր, որից՝					
Աշխատավարձ	42 209 300	41 007 100	44 569 200	44 420 413	46 505 835
Տարակարգ				91 200	107 200
Կոմունալ վճարներ /գազի, հոսանքի, ջրի/	1026100	514 508	641 818	858 861	900164
Հայկական Ծրագիր	95000	95000	95000	95000	95000
Ուսուցիչների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում			33000	88200	151200
Ուսուցիչների վերապատրաստում				91200	96000
Մասնագիտական ծառայություններ		343 127	972503	740312	653337
Համակարգչային ծառայություններ	54 400	70 000	7000	64000	40000
Պարտադիր վճարներ	57 000	126 200	135224	154647	216258
Գրենական նյութերի ձեռքբերում	98 100	43 150	50000	68500	250000
Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում	143 900	1 071 860	150000	238600	1758000
Մնացորդ	46 800	2 121 900	8 163 100	8 266 500	1 225 300

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հ/հ	Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1	Հաստատությունը ֆինանսավորվում է ժամանակին:	Դպրոցի ֆինանսական միջոցները բավարար չեն հրատապ խնդիրներին արագ լուծում տալու:
2	Աշխատավարձի ուշացումներ չեն լինում:	Նոր ֆինանսավորման բանաձևը դեռևս անորոշություններ է առաջացնում, կարիք կա լրացուցիչ պարզաբանումների:
3	Հաշվապահության գործունեությունը բաց է, թափանցիկ, փաստաթղթավորման, կայքերում հրապարակման ուշացումներ չեն լինում:	Հաստատությունում լրացուցիչ կրթական ծրագրեր չեն իրականացվում /նաև շենքային պայմանների անհնարինության պատճառով/, ինչը կարող էր մեծապես նպաստել ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավմանը:
4	Մարզպետարանի ֆինանսատնտեսական բաժնի աշխատակիցների հետ գործում է օպերատիվ և արդյունավետ կապ:	Դպրոցը չունե արտաբյուջե:
5	Կոտայքի մարզպետարանի և Ակունքի համայնքապետարանի պատասխանատու աշխատակազմը մշտապես գտնվում է դպրոցի կողքին, դրսևորում է հոգատար վերաբերմունք, որևէ հրատապ խնդիր մինչ օրս չի մնացել անտեսված, ինչը լավատեսություն է հաղորդում դպրոցում ծրագրվող ցանկացած աշխատանքի կազմակերպման գործում:	
6	Փոխհատուցուցվում են 5 կմ-ից ավելի հեռու բնակվող ուսուցիչների տրանսպորտային ծախսերը:	
7	<<Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխահատուցում>> ծրագրի շրջանակներում դասագրքերի	

	վարձավճարները փոխհատուցվում են ամբողջությամբ կամ մասնակիորեն:	
8	Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանված կարգով իրականացվում է գույքի հաշվառման գործընթաց:	
9	Դպրոցը չունի ֆինանսական պարտքեր	

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դպրոցի նոր ֆինանսավորման մոդելով առաջնորդվող ֆինանսատնտեսական գործունեությունը բխում է բոլոր ուղղություններով խնդիրները կարգավորելու պահանջներից: Նորարարությունների ներդրման համար նոր նյութատեխնիկական բազայի ստեղծում և պահպանում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բյուջեի ձևավորման արդյունքում միջոցների հնարավորինս արդյունավետ և նպատակային բաշխում:
2. Համագործակցության ընդլայնում համայնքի, շահագրգիռ կառույցների հետ:
3. Ֆիզիկական միջավայրի բարելավման ուղղությամբ ներդրվող ֆինանսական միջոցներ:
4. Ֆինանսական հաշվետվողականության ապահովում:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ/հ	Միջոցառումներ	Կատարման ժամկետը	Պատասխանատուներն ու մասնակիցները
1	Կատարել բյուջեի բաշխում՝ հատկացնելով միջոցներ նյութական և տեխնիկական միջոցների համար՝ հաշվի առնելով առկա ֆինանսական ռեսուրսների և կարիքների առաջնահերթությունը:	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, վարչատնտեսական պատասխանատուներ Էլ. կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ, հաշվապահ

2	Ֆինանսավորման աղբյուրները կենտրոնացնել, դռանք են՝ պետական ֆինանսավորման միջոցները, դրամաշնորհները, համագործակցության արդյունքում տրվող նվիրատվությունները: Շարունակել ակտիվ համագործակցել համայնքի հետ առնչվող շահագրգիռ անձանց հետ;	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, տնօրենի տեղակալ, Էլ. կառավարման և դասավանդման մասնագետ, հաշվապահ
3	Կատարել գույքագրում:	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, վարչատնտեսական պատասխանատուներ հաշվապահ
4	Արդյունավետ կառավարել նյութական ռեսուրսների ձեռքբերման և օգտագործման գործընթացը՝ լինելով հաշվետվողական և բաց /թափանցիկ /	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, վարչատնտեսական պատասխանատուներ հաշվապահ
5	Ապահովել ֆինանսական հաշվետվողականությունը՝ համապատասխանեցնելով ֆինանսական աուդիտների կանոնական արգելքին:	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, վարչատնտեսական պատասխանատուներ հաշվապահ
6	Բարձրացնել վարչատնտեսական անձնակազմի SՀS գործիքների տիրապետման մակարդակը:	2023-2028 թթ. հաշվետու ժամանակաշրջան	Տնօրեն, ԹԳՀԳ ուսուցիչ, օպերատոր

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՄԵՂՍՈՂ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Հ/հ	Ռիսկեր	Մեղմող հանգամանքներ
1	Տվյալների սխալ մուտքագրում	Վերահսկողություն մարզպետարանի ֆինանսատնտեսական բաժնի կողմից
2	Պատասխանատուների ոչ օպերատիվ գործելաոճ	Հետևողականություն և հաշվետվողականություն

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն, այլ, առավելապես, նրա գործը, մտքերն ու ձեռքբերումները:
Արսեն Վենգեր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագիրը ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, դպրոցի հինգ տարիների գործունեության տեսլականի պլանավորման հիմքը:

ՀՀ Կոտայքի մարզի «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը մշակելիս ամփոփվել, ի մի է բերվել, համակարգվել է՝ ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը, վերջին հինգ տարիների դպրոցի շենքային պայմանների, ենթակառուցվածքների բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ կատարված աշխատանքը, հաստատության կրթության որակի ռիսկերի գնահատման ցուցանիշները, կարիքի բացահայտման ուղղությամբ իրականացված, շարունակական մշտադիտարկման արդյունքները, առաջադրված լուծումներն ու քայլերը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատումը կարևոր ազդեցություն ունի կրթության բովանդակության և որակի բարելավման վրա: Կրթական գործընթացի գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Այն նպաստում է՝

- պարզելու յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը,
- ստանալու դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:
- Գնահատումը սովորողի, ուսուցչի, մանկավարժական աշխատողի, տարաբնույթ ծրագրերի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալու,

հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու և կատարելագործելու գործընթաց է:

Գնահատումը նաև ուսուցման գործընթացի խթանման, կատարելագործման, վերհսկման և բարելավման մեխանիզմ է:

Գնահատման գործընթացը արդյունավետ է, եթե այն՝

- դիտարկվում է որպես համընդհանուր, համակարգված և անընդհատ գործընթաց,
- գնահատումը դիտարկվում է որպես ինքնազարգացման միջոց,

Հետևաբար՝

Ինչու՞ ենք գնահատում դպրոցի զարգացման ծրագիրը.

- արձանագրելու արդյունքները,
- խթանելու ուսումնառությունը:

Ի՞նչն ենք գնահատում.

- ուսումնառության արդյունքները,
- ուսուցման և ուսումնառության, ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը:

Ինչպե՞ս ենք գնահատում.

- Միավորով (քանակական)
- Բնութագրելով (որակական)

Գնահատման գործառույթն է՝

- վերահսկող (վերստուգող),
- ուսուցանող,
- կարգավորող,
- դաստիարակող,
- զարգացնող:

(ԿԶՆԱԿ հիմնադրամ, «Գնահատման մշակման և զարգացման» բաժնի նյութեր):

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, հանրակրթության վերաբերյալ հիմնարար փաստաթղթերի հիմնադրույթները, ուսհաստատության առանձնահատկությունները՝ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում մշակվել և տարիներ ի վեր իրականացվում են կրթության որակի ռիսկերի գնահատման համընդհանուր

չափանիշներ, որոնք չափելի, հետևաբար վերահսկելի և կառավարելի են դարձնում ուսումնադաստիարակչական աշխատանքի կատարողականի և ուսհաստատության կառավարման ընդհանուր արդյունավետությունը, մասնավորապես.

6.1 Սահմանված են յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշները

❖ Ուսումնական հաստատության իրավիճակի խոր և ամբողջական վերլուծության հենքի վրա (ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը, այդ թվում՝

- մասնաշենքի դիրքը, տեղադրությունը, արտաքին տեսքը, շենքային պայմանները, ենթակառուցվածքները, ընդհանուր վիճակը,

- ուսումնական հաստատության դասասենյակների, գրադարանի, համակարգչային կաբինետի, մարզադահլիճի, ճաշարանի չափսերը, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանությունը,

- ուժեղ և թույլ կողմերը, ռիսկերը, իրավիճակը մեղմող հանգամանքները, բարելավման միտումները, նպատակները, հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ գործողությունները, մասնաշենքի ներկա (վերանորոգումից հետո) և նախորդ պայմանների համեմատության վերաբերյալ լուսանկարներ):

Քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսումնական հաստատությունում իրականացվող հանրակրթական ծրագրերի (տարրական հանրակրթական (ընդհանուր), հիմնական հանրակրթական (ընդհանուր) և միջնակարգ հանրակրթական (ընդհանուր) արդյունավետության քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի, ներառյալ արտադասարանական (սովորողների բարոյական, գեղագիտական, ռազմամարզական դաստիարակություն) և արտադպրոցական կրթության (սոցիալական, ինքնասպասարկման, ինտելեկտուալ հմտությունների ձևավորում և զարգացում) ներգրավվածության (ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության) քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Հիմք ընդունելով ուսումնական հաստատության արտաքին և ներքին գնահատման, ներդպրոցական վերահսկողության, կիսամյակային և տարեկան առաջադիմության ամփոփագրերը սովորողների ընդհանուր առաջադիմության և զարգացման քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսումնական հաստատության գործունեության արդյունավետ կազմակերպման և կառավարման, պատշաճ բարոյագոգեբանական մթնոլորտի, բազմակարծության, ներառականության և մասնակցայնության միջավայրի ձևավորման (ուժեղ և թույլ կողմերի, ռիսկերի, իրավիճակը մեղմող հանգամանքների, բարելավման միտումների, նպատակների, հիմնախնդիրների ու դրանց լուծման ուղղությամբ գործողությունների վերլուծության հիման վրա) քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսհաստատությունում մանկավարժական համակազմի մասնագիտական պատրաստվածության, գիտակրթական ունակությունների զարգացման, վերապատրաստումներին մասնակցության, հանրակրթության պետական նոր չափորոշի տիրապետման, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական ծրագրերին մասնակցության վերլուծության հիման վրա) քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսումնական հաստատությունն ավարտած սաների կրթության շարունակականության՝ հանրապետության բուհեր, ուսումնական այլ հաստատություններ ընդունվելու արդյունքների վերլուծության հիման վրա քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսումնական հաստատության կառավարման, խորհրդակցական մարմինների, շահառու և շահակից, գործընկեր կազմակերպությունների, համայնքի հետ համագործակցության վերլուծության հիման վրա քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսհաստատությունում առկա ներուժի, կառավարման, ֆինանսատնտեսական արդյունավետ գործունեության իրականացման, արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակներում կրթության կազմակերպման քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Ուսհաստատությունում սովորողներին դասագրքերով, մանկավարժական համակազմին անհրաժեշտ մեթոդամանկավարժական գրականությամբ և էլեկտրոնային միջոցներով ապահովման, ՏՀՏ նոր միջոցների ձեռքբերման, ներդրման, դիդակտիկ նյութերով դասապրոցեսի հագեցվածության աշխատանքի վերլուծության հիման վրա քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

❖ Կրթական նորարարությունների ներդրման, արդի փոխներգործուն մեթոդներով ուսումնական գործընթացի աշխատանքի վերլուծության հիման վրա քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում:

6.2 Մահմանված են կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները:

❖ Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, սակայն գլխավորը ուսումնառության արդյունքներն են: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում առաջնային նշանակություն ունեն հետևյալ հիմնական դրույթները.

- կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում,
- բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող, դասավանդման արդի մեթոդներին, հանրակրթության բովանդակությանը, ՏՀՏ միջոցներին տիրապետող, կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը կարևորող մանկավարժական համակազմի առկայությունը,
- կրթական պաշարների, ուսումնամեթոդական գրականության, դասագրքերի որակական բարելավում (**IPP, «Կրթության որակի ընկալումները հանրակրթության մեջ»**):

Ընդամին, կրթության որակ ասվածը բազմաբովանդակ է և բազմաբնույթ, ըստ այդմ՝ որակի գնահատման չափանիշներն էլ տարբեր են, ձևերը բազմազան ու տարաբնույթ, հետևաբար «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների

ազդեցության գնահատման չափանիշները նույնպես բազմազան են, այնուհանդերձ, խնդրո առարկա թեմայի վերաբերյալ նպատակահարմար եմ համարում, ի թիվս գնահատման այլ ձևերի, իրականացնել քանակական (միավորային) և որակական (բնութագրման միջոցով) գնահատում, հիմք ընդունելով՝

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակության զարգացման աստիճանը, ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման մակարդակը (**ՀՊԶ, կետ 37**):

Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակ (**ՀՊԶ, կետ 39**):

Հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին (**ՀՊԶ, կետ 40**):

Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը (**ՀՊԶ, կետ 41**):

Գնահատման գործընթացում կարևոր եմ համարել՝

❖ ուսուցման նպատակների հստակ սահմանումն ու պետական չափորոշչի պահանջներին դրանց համապատասխանությունը.

❖ սովորողի առաջադիմության ու նվաճումների գնահատման նպատակով նպատակների հստակեցումը և լիարժեք չափելի դարձնելը,

❖ ուսումնադաստիարակչական գործընթացում սովորողներին և ուսուցիչներին հետադարձ կապի ապահովման նպատակով ձևավորող գնահատման կիրառումը,

❖ ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի բազմակողմանի և բազմաբովանդակ գնահատման նպատակով գնահատման տարատեսակ ձևերի, մեթոդների և գործիքների կիրառումը, այդ թվում՝

- վիկտորինաների,
- դասարանային քննարկումների,

- ուսումնական նախագծերի,
- շնորհանդեսների,
- փոխներգործուն խաղերի,
- բանավեճերի,
- տարաբնույթ հարցումների կազմակերպումը,
- ուսումնասիրությունների իրականացումը և այլն:

Ամփոփիչ գնահատում

❖ Ուսհաստատությունում ձևավորել ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը, ուսուցչի և սովորողի իրավունքների և ազատությունների, ազգային ավանդույթների, սովորույթների, ֆիզիկական վիճակի նկատմամբ հարգալից վերաբերմունք, ուսման, գիտելիքների հարստացման, ստեղծագործական աշխատանքի հանդեպ մոտիվացիա, գնահատել կատարված աշխատանքը ամփոփիչ գնահատման միջոցով:

❖ Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողների գիտելիքների և ներուժի արտահայտման համար, ուստի կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորմանը, հիմնված հավասարության և օբյեկտիվ գնահատման սկզբունքի վրա: Գնահատել կատարված աշխատանքը ամփոփիչ գնահատման միջոցով:

❖ Սահմանված կարգով պարբերաբար՝ պլանային և արտապլանային կարգով կազմակերպել ամփոփիչ գնահատում, ձեռքբերումները արձանագրելու, անելիքների հստակեցման նպատակով (այդ թվում և ԿԱՊԿՈՒ սովորողների համար):

Կազմակերպել առարկայական թեմատիկ պլաններում նախանշված պլանային, ինչպես նաև՝ ոչ պլանային ստուգման ձևեր՝

- ամփոփիչ ատեստացիաներ
- ուսումնական նախագծեր,
- բանավոր հարցումներ,
- տնօրենության կողմից տրվող ստուգողական գրավոր աշխատանքներ,

- գործնական աշխատանքներ,
- թեմատիկ աշխատանքներ,
- կիսամյակային ամփոփիչ աշխատանք (ըստ անհրաժեշտության),

❖ տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանք և այլն: Գնահատել կատարված աշխատանքն ամփոփիչ գնահատման միջոցով:

❖ Ուսհաստատությունում իրականացնել սովորողների առաջադիմության մշտադիտարկում, խրախուսել բարձր առաջադիմություն ցուցաբերող սովորողներին, պարգևատրել պատվոգրերով, գովասանագրերով, տարաբնույթ մրցանակներով, նրանց վերաբերյալ տեղեկատվություն գետեղել դպրոցական, կրթական կայքերում, ի ցույց դնել և այլն:

❖ Իրականացնել սովորողների ինքնագնահատում, փոխադարձ գնահատում՝ կատարած աշխատանքի անդրադարձ կատարելու և այլընտրանքային, արդյունավետ վարքագիծ որդեգրելու նպատակով, վերլուծել արդյունքները, գնահատել:

❖ Գնահատել սովորողների ուսման առաջադիմության բարձրացմանը միտված յուրաքանչյուր նախաձեռնություն, խրախուսել, գնահատել կատարված աշխատանքը:

❖ Սովորողների առաջադիմության մշտադիտարկման, առաջադիմության անկման ժամանակին և արագ արձագանքման նպատակով ներդնել սովորողների առաջադիմության դինամիկայի ամենօրյա վերահսկողության համակարգ,

- պորտֆոլյոներ (թղթապանակ),
- առաջադիմության վերահսկման և ամփոփման դիագրամներ,
- առաջադիմության դինամիկայի արձանագրման, վերահսկման և ամփոփման և կատարելագործման աղյուսակներ,

▪ ծնողներին պարբերաբար ծանուցել այս աշխատանքի մասին ամփոփիչ ծանուցագրերի ներկայացմամբ կամ հրավիրելով ուսհաստատություն:

❖ Հիմք ընդունելով տվյալ սովորողի անձնային, մտավոր, բարոյահոգեբանական առանձնահատկությունները յուրաքանչյուր սովորողի համար կազմել առաջադիմության անհատական մոնիթորինգի պորտֆոլյո (թղթապանակ), մշտապես իրականացնել առաջադիմության մշտադիտարկում, վերլուծել և գնահատել կատարված աշխատանքը:

❖ Սովորողների առաջադիմության մշտադիտարկմանը մասնակից դարձնել շահառու մարմիններին (դասարանի ղեկավար, ծնող, ծնողական և աշակերտական խորհուրդներ), գնահատել կատարված աշխատանքը:

❖ Իրականացնել սովորողների կողմից գիտելիքների յուրացման գործընթացի փուլային վերահսկողություն, հմտությունների և կարողությունների տիրապետման, ինքնուրույն սովորելու կարողության ձևավորման նպատակով: Վերլուծել, գնահատել կատարված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում ՀՀ ԿԳՄՄՆ, ԿԶՆԱԿ-ի, կրթական այլ ծրագրերին, մրցույթներին սովորողների մասնակցության խրախուսում, արդյունքների ամփոփում, վերլուծություն, գնահատում:

Ուսուցչի գնահատում և հետադարձ կապ

❖ Ուսհաստատության ուսուցիչների մոտիվացում վերապատրաստող, մենթոր ուսուցչի վերապատրաստման դասընթացներին, նոր, հեղինակային ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման աշխատանքներին մասնակցության նպատակով: Ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսուցչի աշխատանքի մշտադիտարկման նպատակով ներդպրոցական վերահսկողության պարբերական իրականացում, հետադարձ կապի ապահովում՝

- ուսումնադաստիարակչական գործընթացի վիճակի վերաբերյալ ամբողջական և համակողմանի տեղեկատվության ստացում, կատարված աշխատանքի գնահատում:

- առաջացող խնդիրների լուծման նպատակով ժամանակին և ըստ անհրաժեշտության համապատասխան փոփոխությունների կատարում, կատարված աշխատանքի գնահատում:

- ուսուցչի կողմից ուսումնական առարկայական ծրագրի կատարողականի, էլեկտրոնային դասամատյանում գրանցման և գնահատման, թեմատիկ պլանի և էլեկտրոնային դասամատյանում առկա գրանցումների համապատասխանության, թեմատիկ, գործնական աշխատանքների չափաքանակների պահպանման պարբերական ստուգում, կատարված աշխատանքի գնահատում:

- դասավանդվող ուսումնական առարկաների արդյունքների ամփոփում, վերահսկողություն վերլուծություն, կատարված աշխատանքի գնահատում,

- ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացում ուսուցիչներին անհրաժեշտ մեթոդամանկավարժական աջակցության տրամադրում, կատարված աշխատանքի գնահատում:

Հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- ❖ Ուսուցչի աշխատանքի կատարելագործման, առաջավոր փորձի հանրայնացման նպատակով գործընկեր ուսումնական հաստատությունների միջև (ՀՀ Կոտայքի մարզի «Ակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և Կոտայքի «Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ) համագործակցության սկստիվացում, կատարված աշխատանքի համադրում, ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- ❖ Ուսուցչի ստեղծագործական ունակությունների, նախաձեռնողականության, գիտելիքային և մեթոդամանկավարժական պաշարի հարստացման նպատակով ուսհաստատությունում գիտակրթական ռազմավարական պլանի մշակում, ներդնում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- ❖ Ըստ անհրաժեշտության, օրենքով սահմանված կարգով ցածր առաջադիմություն ցուցաբերած ուսուցիչներին վերապատրաստման տարաբնույթ դասընթացներում ընդգրկում կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- ❖ Իրականացնել ուսումնական հաստատության մանկավարժական համակազմին ուսուցչի կամավոր ատեստավորման, տարակարգի ստացման գործընթացին մասնակցության մոտիվացիա, ամփոփել, վերլուծել, գնահատել կատարված աշխատանքը:

- ❖ Սկսնակ ուսուցիչների համար ինքնաարտահայտման, գործունեության լիակատար ազատության, հնարավորությունների արտահայտման մթնոլորտի ձևավորում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- ❖ Ուսուցչի ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման արդյունավետության աճի, Նոր ՀղՁ–ով ուսուցման կազմակերպման ուղղությամբ

գործունեության իրականացում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

❖ Ուսհաստատությունում 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն, ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ) խթանում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

❖ Ուսհաստատությունում ուսումնական առարկաների արդյունավետ դասավանդման նպատակով ուսումնադիդակտիկ նյութերի, ՏՀՏ միջոցների բազայի ստեղծում, այդ նյութերին մանկավարժական համակազմի լիակատար հասանելիության ապահովում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

❖ Ուսուցիչների մոտ ֆորսմաժորային և արտակարգ իրավիճակներում կրթության կազմակերպման միջոցներից օգտվելու ունակությունների, այդ թվում՝ հեռավար և հիբրիդ ուսուցման մեթոդիկայի մշակում և զարգացում, գործնականում կիրառում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

Ուսհաստատության կառավարմանը, ուսումնադաստիարակչական աշխատանքում շահառու և շահակից մարմինների ներգրավվածություն:

❖ Ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքում կառավարման բոլոր մարմինների (կրթության և պետական կառավարման լիազոր մարմիններ, կառավարման միացյալ խորհուրդ), խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհուրդ, մեթոդմիավորումներ), համայնքի, բոլոր շահառու և շահակից մարմինների ներգրավում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

❖ Նշված մարմինների հետ համատեղ և աջակցությամբ ուսհաստատության ռեսուրսների կարիքի պարբերական մշտադիտարկում, խնդրո առարկա հարցերի արագ և օպերատիվ լուծում, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում:

- Ուսհաստատության կառավարման, խորհրդակցական մարմինների, աշակերտական ինքնավարության (աշակերտական խորհուրդ), ծնողական համայնքի, գործընկեր, պատկան մարմինների հետ համագործակցության շարունակում, կատարելագործում, զարգացում, այդ թվում՝

- Ոստիկանության Կոտայքի բաժին,
- Բալախովտի խաղաղապահ բրիգադ,
- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի եվ սպորտի վարչություն,
- Դպրոցական սնունդ ազգային ծրագիր,
- ՏՄԱԿ Կոտայք,
- Վերապատրաստող կազմակերպություններ,
- ԿՏԱԿ,
- ԿԶՆԱԿ,
- ՀՀ ԿԳՄՄՆ,
- Պատանեկան նվաճումներ,
- Գործընկեր դպրոցներ,
- Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ և այլն, կատարված աշխատանքի ամփոփում, վերլուծություն, գնահատում,

6.3 Սահմանված են բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները

- Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: (ՀՀ օրենքը հանրակրթության մասին, հոդված 4, 2.1)

Ժողովրդավարության հիմքը **մասնակցային** մշակույթն է, սակայն դրա ձևավորումն անհնար է առանց անհրաժեշտ կարողունակությունների, որոնք փոխկապակցված են համապատասխան հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հետ:

Բազմակարծությունը ժողովրդավարական ամենակարևոր հատկություններից մեկն է, այն ենթադրում է բազմազանության ճանաչում, երկխոսության խթանումը, **ներառումը**, հարգանքը և **հանդուրժողականությունը** միմյանց նկատմամբ:

(«Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում»,

Մասնակցային դպրոց)

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ձևավորումը ռազմավարական խնդիր է, այն ուսումնադաստիարակչական աշխատանքի գործունեության հիմնաքարն է: Այս կարևորագույն հիմնախնդրի լուծման գործում անգնահատելի դեր ունի ԿԱՐՈՂՈՒՆԱՀԵՆՔ կրթությունը, որովհետև հենց կարողունակությունների ձևավորման արդյունքում է դրվում այս սկզբունքի հիմքը:

Հաջորդիվ ներկայացնում եմ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները:

Ժողովրդավարական մշակույթ

❖ Առկա՞ է հարգանք բազմազանության նկատմամբ, գնահատել՝ ուսհաստատությունում արդյո՞ք հարգվում են բազմազանությունը, բազմակարծությունը:

- հարգվում, պահպանվում են ազգային փոքրամասնությունների՝ եզդիների իրավունքներն ու ազգային սովորույթները, մշակույթն ու կրոնը: Հարկ է նշել, որ ի թիվս մյուս սովորողների, նրանք լիովին ներառված են համադպրոցական միջավայրում, նրանք մեզանից մեկն են, աշակերտական ինքնավարության մարմնի, համադպրոցական բազմաբնույթ միջոցառումների ակտիվ անդամներն ու մասնակիցները:

- Ուսհաստատությունում սովորում են «ՍՈՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համակարգում գտնվող «ՍՈՍ Կոտայք» կազմակերպության բազմաթիվ սաներ, ովքեր ինտեգրված, ներառված են դպրոցական մեծ ընտանիքին, ներգրավված են աշակերտական ինքնավարության մարմնում, մասնակիցը համադպրոցական բազմաբնույթ միջոցառումների:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման կարևորագույն չափանիշներն են՝

❖ սովորողի խոսքի արժեքը. ամփոփել, վերլուծել, գնահատել՝ ուսհաստատությունում որքանով է խրախուսվում սովորողի կարծիքը, խոսքը, նախաձեռնողականությունը և արդյո՞ք հարգվում, հաշվի են առնվում սովորողների անձնական կարծիքը, նրանց խոսքը արժեք ունի՞,

❖ սովորողի ազատ կամարտահայտությունը, հաղորդակցություն, ինքնադրսևորումը. ամփոփել, վերլուծել և գնահատել ուսհաստատությունում՝ դպրոցական համայնքում սովորողի ազատ կամարտահայտությանը, հաղորդակցության, ինքնադրսևորման հաղորդակցության ուղիների առկա իրավիճակը, արդյունավետությունը, այդ թվում՝ ուսուցիչ-ծնող-տնօրենություն հարաբերակցության մեջ, առկա՞ է հետադարձ կապ: Ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ կատարված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցիչների, սովորողների իրավունքների պաշտպանության, հանդուրժողականության քաղաքականության որդեգրումը: Ուսհաստատություն հրավիրել Ոստիկանության Կոտայքի բաժնի անչափահասների տեսչության դպրոցին կցված աշխատակցին, սոցիալական ծառայության, հոգաբարձուների խորհրդի աշխատակիցների անցկացնելու զրույցներ սովորողների իրավունքների, պաշտպանության, պարտականությունների, հանդուրժողականության վերաբերյալ: Ամփոփել, վերլուծել, գնահատել խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ ուսհաստատություն-գործընկերներ համագործակցությունը:

Ուսուցիչների մասնակցային գործունեությունը

❖ Իրականացնել մանկավարժական համակազմի միջև աշխատանքի համատեղ պլանավորում, գնահատել ուսուցիչների մասնակցության աստիճանը ուսումնադաստիարակչական աշխատանքի, ծրագրերի համատեղ պլանավորման, ուսումնական հաստատության ռազմավարության և գնահատման մեթոդների մշակման գործում:

▪ Ուսհաստատության ուսումնադաստիարակչական համադպրոցական աշխատանքի, խորհրդակցական մարմինների գործունեության, տարեկան աշխատանքային պլանների հիմքում բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի բարելավմանը միտված հիմնահարցերի ընդգրկում:

❖ Մասնագիտական կառույցներ. գնահատել մասնագիտական կառույցների ստեղծում, ընդհանուր նպատակների շուրջ ուսուցիչների համախմբում, համագործակցային և փոխօգնության մթնոլորտի ձևավորում: Կատարել, անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Ուսհաստատության մասնակցային կառավարում և որոշումների համատեղ կայացում:

«Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը, կառավարման և խորհրդակցական մարմինները, ուսուցչական համակազմը ուսհաստատությունում ձևավորել են փոխօգնության, համակեցության, յուրաքանչյուր աշխատակցի մասնակցային կառավարման մի յուրատեսակ միջավայր, հավատարիմ՝ «Սա իմ դպրոցն է, այստեղ ես տանն եմ» կարգախոսին:

Ուսհաստատությունում միջանձնային հարաբերությունները կառուցվում են մարդասիրության, փոխօգնության հարաբերությունների, մարդկային ջերմ, կարեկցանքի սկզբունքների հիման վրա, որպեսզի ինքնակազմակերպվեն, իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրեն, վերլուծեն, կիրառեն ստեղծագործական ու նորարար մոտեցումներ, դրսևորեն հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից:

❖ Ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման վերաբերյալ կառավարման մարմինների, տնօրենության, խորհրդակցական մարմինների, մանկավարժական համակազմի առաջարկությունների քննարկում, ուսհաստատության կառավարմանը լիարժեք մասնակցության ապահովում: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում որոշումների կայացման, այդ թվում՝ կրթական քաղաքականության մշակման, ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման, առկա ռեսուրսների հաշվառման, բաշխման, նախաձեռնողականության գործում ուսուցիչների մասնակցության աստիճանի

գնահատում: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Ուսհաստատության տնօրենի առաջնորդության ոճը որպես կառավարման արդյունավետ եղանակ:

Ճիշտ և ճիշտ տեղին է, ուստի արժե մեկ անգամ ևս կրկնել մեծն Գարեգին Նժդեհի գնահատականը առաջնորդի մասին.

Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդե ճակատ, ահա կատարյալ առաջնորդը:

Գարեգին Նժդեհ

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգն այսօր արմատական բարեփոխումների փուլում է և հենց այս իրադրությունում է, որ առավելագույնս կարևորվում է առաջնորդ տնօրենի գործունեությունը: Այս բոլոր բարեփոխումները առաջնորդ տնօրենը նախ պետք է անցկացնի իր՝ առաքյալի սրտի, իմաստասերի գլխի և աղամանդե ճակատի պրիզմայի միջով, որպեսզի աշխատակազմի հետ միասին այս ամենն իրականացնի իրեն վստահված «ճակատում», որովհետև, գաղտնիք չէ, որ արմատական փոփոխությունները ուսուցիչների մոտ առաջ են բերում բազում մտահոգություններ:

Ուսումնական հաստատության կարևորագույն և ներկայանալի դեմքը, իմ կարծիքով, այսօր առավելապես, քան երբևէ, տնօրենն է՝ առաջնորդը, իսկ դպրոցի ղեկավարումը՝ նրա առաջնորդությունը: Դպրոց ղեկավարելը այդ հաստատության պարզապես ղեկավարելը չէ, քանզի ղեկավարել, նույնիսկ՝ լավ ղեկավարել կարող է յուրաքանչյուրը, մինչդեռ կառավարել կարող են ոչ բոլորը: Կառավարել նշանակում է՝

- կանխատեսել, բացատրել, հիմնավորել ուսումնական հաստատության զարգացման առանձնահատկությունները,

- սահմանել, հստակեցնել, պլանավորել ուսհաստատության հիմնարար նպատակները, լուծել ուսումնական հաստատության զարգացման ճանապարհին կանգնած հիմնախնդիրները,

- վերահսկել, գնահատել, կատարված աշխատանքը, ապահովել հետադարձ կապ,

- կազմակերպել, ընտրել լավագույն աշխատակազմ, ուղղորդել, համակարգել, հաշվետու լինել:

Իսկ առաջնորդության կարևոր բնութագրիչներն են՝

- ուշադրության կառավարումը
- իմաստի կառավարումը
- վստահության կառավարումը
- ինքնակառավարումը:

❖ Կանխատեսվում, բացատրվում, հիմնավորվում են ուսումնական հաստատության զարգացման առանձնահատկությունները, սահմանվում, հստակեցվում, պլանավորվում ուսհաստատության հիմնարար նպատակները, - ահա առառնորդ տնօրենի գործելաոճը: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Հնարավորինս լուծվում են ուսումնական հաստատության զարգացման ճանապարհին կանգնած հիմնախնդիրները, վերահսկվում, գնահատվում կատարված աշխատանքը, ապահովվում հետադարձ կապ, ձևավորվել է աշխատունակ և համերաշխ աշխատակազմ: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Գաղտնիք չէ, որ արդի կրթական համակրգում արմատական փոփոխություններն ուսուցիչների մոտ առաջ են բերում բազում մտահոգություններ,

- անհանգստություն, անվստահություն սեփական ուժերի հանդեպ,
- ապագայի հանդեպ մշուշոտ պատկերացումներ,
- խուճապի մասնակի դրսևորումներ, ընդհուպ՝ բարեփոխումների մերժում:

❖ Ի թիվս բոլոր ուսումնական հաստատությունների, մենք՝ «Նորգյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժներս ևս անցանք և, պետք է ասել, պատվով հաղթահարեցինք այս շրջափուլին բնորոշ մասնակի անորոշության մթնոլորտը: Ուսուցիչների բազում վերապատրաստումների, առաջնորդ տնօրենի կողմից դպրոցի ներդաշնակ կառավարման գործունեության արդյունքում մեր դպրոցում այսօր արդեն իսկ կարող ենք արձանագրել բարեփոխումների հիմնախնդիրների ընկալման ուղղությամբ լուրջ ձեռքբերումներ: Այս

ձեռքբերումների մեջ նշանակալից է առաջնորդ տնօրենի կողմից ուսումնական հաստատության առաջնորդական կառավորումը:

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Առաջնորդության կարևոր բնութագրիչ է որոշումների կայացման գործում ուսուցչի մասնակցայնության գնահատումը, բազմակարծության հովանավորումը: Ուսհաստատության կառավարման գործընթացում մեծապես հաշվի է առնվում այս հանգամանքը: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել և գնահատել տնօրենի առաջնորդության գործելաոճի հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Ուսհաստատության շահառու և շահակից խմբերի ներգրավվածություն

❖ Ուսհաստատության ուսումնադաստիարակչական արդյունավետ աշխատանքի կարևոր նախադրյալն է հաստատության կառավարման, խորհրդակցական մարմինների, աշակերտական ինքնակառավարման մարմնի (աշակերտական խորհուրդ), ծնողական խորհրդի, գործընկեր ուսումնական հաստատությունների, աջակից կրթական ծրագրերի համատեղ, փոխներգործուն, արդյունավետ աշխատանքը: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Քննարկվում, հաշվի է առնվում ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավմանը միտված շահառու և շահակից մարմինների առաջարկությունները, դրանք ներառվում են համադպրոցական ծրագրերում, իրականացվում:

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատության ներքին իրավական ակտերի, խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ) արձանագրությունների, աշխատանքային տարեկան պլանների, այլ գրագրության թափանցիկության ապահովման նպատակով դրանք զետեղվում են համապատասխան կայքերում, ապահովում լիակատար հասանելիության :

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Շարունակել ակտիվ մասնակցությունն ուսհաստատության շահառու և շահակից մարմինների կազմակերպած միջոցառումներին՝ (օլիմպիադաներ, ինտելեկտուալ, ռազմամարզական մրցույթներ, հանդիպումներ, սպարտակիադաներ, սպորտլանդիաներ, շաբաթօրյակներ և այլն):

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Մասնավորապես արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակների (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն) պայմաններում կրթական գործընթացը շարունակելու նպատակով զարգացնել համագործակցությունը շահակից և շահառու կազմակերպությունների հետ (նշենք, որ ուսհաստատությունը նմանատիպ արդյունավետ համագործակցության փորձ արդեն իսկ ունի քովիդի համաճարակի շրջանում):

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Ուսումնական հաստատության սովորողների մասնակցայնության ապահովում

❖ Յուրաքանչյուր սովորող շրջապատված է հոգատարությամբ, մշտապես կատարվում է կարիքի գնահատում: Կատարելվում է անդրադարձ: Ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ապահովված է ուսհաստատության սովորողների լիակատար մասնակցությունը աշակերտական ինսվարությաւն և արտադպրոցական միջոցառումներին: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում սովորողների և ուսուցչական համակազմի համար ձևավորել է անվտանգ միջավայր: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

**Ժողովրդավարության և մասնակցայնության շարունակականության բարելավման
ապահովում և գնահատում**

❖ Մշտադիտարկվում է ուսհաստատությունում սովորողների մասնակցայնության և ժողովրդավարության աստիճանի ազդեցությունը հաստատության կառավարմանը մասնակցելու և առաջադիմության աճի և բարեվարքության վրա: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում ձևավորվել է ուսուցիչ-ուսուցիչ, սովորող-սովորող, ուսուցիչ-սովորող, ուսուցիչ-տնօրեն, ուսուցիչ համայնք լիակատար փոխընթերցման և համագործակցության մթնոլորտ:

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում արվում է հնարավորը, որպեսզի

- սովորողները ինքնակազմակերպվեն, իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրեն, վերլուծեն, կիրառեն ստեղծագործական ու նորարար մոտեցումներ,

- դրսևորեն հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից:

Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Ուսհաստատությունում արվում է հնարավորը մարդու կյանքն ու արժանապատվությունը կարևորող, սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք համարող սերնդի ձևավորման ուղղությամբ: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Գործընկերային հարաբերություններ և համագործակցություն

❖ Շարունակել համագործակցությունը գործընկեր ուսհաստատությունների հետ, կազմակերպել գիտակրթական, ինտելեկտուալ, գեղարվեստական և ռազմամարզական միջոցառումների արդեն իսկ արմատավորված միջոցառումները: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Սովորողների կրթական և գործնական փորձն ու հմտությունները զարգացնելու նպատակով շարունակել համագործակցությունն ու գործընկերային հարաբերությունները համայնքի առկա ռեսուրսներին տիրապետելու և վերլուծելու ուղղությամբ: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

❖ Սովորողների կրթական և գործնական փորձն ու հմտությունները զարգացնելու նպատակով նախագծային աշխատանքներ իրականացնելիս սերտորեն համագործակցել համայնքի տնտեսական գործառույթ իրականացնող կազմակերպությունների և պետական ձեռնարկությունների հետ: Կատարել անդրադարձ, ամփոփել, վերլուծել, գնահատել հիմնահարցի վերաբերյալ իրականացված աշխատանքը:

Որոշումների կայացման թափանցիկության, հասանելիության ապահովում

